



Թամ Ղարախանյան Սիրաքի

Թամ Ղարախանյան Սիրաքի



**ՄԵՐ ԱՆՑԱԾ
ՈՒՂԻՆ**

ISBN: 978-1-927860-37-3

Թամ Ղարախանյան Սիրաքի

ՄԵՐ ԱՆՑԱԾ ՈՒՂԻՆ

**Խմբագիր՝
Դր. Էդիկ Բաղդասարյան
ՀՈՒԿ տնօրեն**



ISBN: 978-1-927860-37-3

Հայկական Ուսումնասիրությունների Կենտրոն
Լույս Հրատարակչություն
Տորոնտո 2016 Կանադա

**Հուշերիս սույն հատորը նվիրում եմ իմ սիրելի ծնողներին:
Հեղինակ**



Գրքի հովանավորներ՝ Ռիմա քույրիկս (ձախ) և Ծաղկուշ մայրս

**Սույն հատորը հրատարակվել է
Ծաղկուշ և Ռիմա Ղարախանյանների
հովանավորությամբ,
որի համար հեղինակը հայտնում է իր խորագգաց
երախտագիտությունն ու շնորհակալությունը:**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	6
ԻՐԱՆԻ ՉԱՐՄԱՀԱԼԻ ԳԱՎԱՌԸ	8
ՄԵՐ ԱՆՑԱԾ ՈՒՂԻՆ	24
ԳՅՈՒՂԻՑ ՄԻՆՉԼ ՄԱՍՉԵԴ ՍՈՒԼԵՅՄԱՆ	26
ԻՐԱՆԱՀԱՅ ԹԵՄԵՐԻ ԱՆՉԱՏՈՒՄԸ ՍԲ. ԷՉՄԱԻԾՆԻՑ	33
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՐՏԱՎՈՐՈՒՄԵՐԸ	35
ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԿԱՐԳԵՐԸ	36
ԱԲԱԴԱՆ	50
ՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՅՈՒՄԸ և «ՀԱՅԱՍ»-Ը	54
ԱՀՎԱԶ ՔԱՂԱՔԸ	68
ՄԱՍՉԵԴ ՍՈՒԼԵՅՄԱՆ...	77
ՆՈՐ ՉՈՒՂԱ	129
ԿԱՄՔԻ ՈՒԺԸ	136
ՉԱՐՄԱՆՔ	147
ՎԵՐԱԴԱՐՉՍ ԱՀՎԱԶ	148
ԱՄԵՆԱՄԵԾ ԵՐԱԶԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ	171
ՎԵՐՉ	171

Իրանի Չարմահալի գավառը

Դր. Էդիկ Բաղդասարյան
Հայկական Ուսումնասիրությունների Կենտրոն,
Տորոնտո

Հայ գաղթականության պատմությունը երկուս ու կես հազարամյա պատմություն ունի և Իրանահայությունը ներկայանում է ամենահինը: Ամեն անգամ գաղութների անցյալի մասին ունկնդրելիս կամ կարդալիս հայ մարդը համակվում է խորը վշտով ու ի խորոց սրտի ցավ է զգում թե ինչպես Մայր Հայրենիքը տուժեց դարերի ընթացքում, նրա սրտից փոկվեցին կտորներ, տեղի ունեցավ ազգի գաղթը օտար ափեր, ուր նրանք նոր տուն, եկեղեցի ու դպրոց, արտ ու հանդ, հասարակական-մշակութային կյանք ստեղծեցին, ապա դարեր ու տասնամյակներ անց ժամանակի պարտադրանքով քեցին տուն ու տեղը, ինչպես հոդս ցնդեց նրանց ստեղծածը, միայն թողնելով վիշտ ու թախիժ՝ հուզմունքային լոկ մի հուշ և վերջ:

Այդ վիշտը կրողների ամենակառկառուն դեմքերից մեկը տողերիս գրողն է, որը հեղինակել է Սփյուռքահայությանը վերաբերյալ ամենաընդարձակ ու մանրամասն ամբողջական պատմությունը (ավելի քան 7000 էջ Հայերեն, Պարսկերեն, Անգլերեն), որը և պատրաստում է նոր աշխատություններ , հազարավոր նոր էջեր, նոր ցավեր ու վիշտ ու թախիժ:

Շուրջ ութը տարի առաջ առաջարկեցինք մեր հարգելի ընկեր Թամ Սիրաքիին, որպեսզի գրի առնի իր կյանքի հետաքրքիր հուշերը, որպեսզի տպագրենք մեր ԼՈՒՅՍ ամսագրի համարներում, որի առաջին մասը տպագրվեց 146-համարում (Մեպտեմբեր, 2008թ.) և իր ավարտին հասավ ամսագրի համար 205-ով (Նոյեմբեր, 2015թ.): Ապա միտք հղացավ այդ բոլորը հրատարակել առանձին հատորով:

Նվաստիս առաջարկվեց խմբագրել հատորը, որը սիրով ընդունվեց: Այդ օրերին կրկին թարմացան մեր վշտագին ապրումները:

Թամը ծնվել է 1942թ. Իրանահայ գաղութի Չարմահալ գավառի Սիրաք գյուղում, ուսումը ստացել տեղում ապա Իրանի Նավթային ընկերության կողմից ուղարկվել է Անգլիա և ուսանել Տեղեկատվական տեխնոլոգիաներ ու Նավագնացության գիտություններ (IT and Navigation) Անգլիայի Փլիմութ համալսարանում (Plymouth University): Ապա վերադառնում է Իրան: 1973 թվականին ամուսնանում Ալվարդ Վարդանյանի հետ և բախտավորվում շնորհալի գավակներով՝ Արնո, Արբի, Անիթա: 1975-ից ընտանիքով բնակություն է հաստատել Կանադա և երկար տարիներ աշխատանել Տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում:

Այստեղ հարմար ենք համարում համառոտակի անդրադառնալ Թամի ծննդավայրի պատմությանը¹, որպեսզի հարգելի ընթերցողը ինչ-որ չափով ծանոթանա այդ իրանահայ գաղութին և գրքի բովանդակությունը ավելի ըմբռնելի դառնա:

17-րդ դարի սկզբին Շահ Աբբասը ի շարս Հայաստանի մյուս գավառների եւ հին Ջուղայի ժողովրդի՝ Բասեն գավառի բնակիչներին եւս գաղթեցրեց Պարսկաստան, որոնց իշխանն էր Մելիք Տեր-Պետրոսը, որ իր Սուլթաս որդու եւ գաղթականների հետ միասին գալիս են Չարմահալ: Սուլթասը քահանա է ձեռնադրվում եւ իր հոր մահից հետո՝ ինքն է կառավարում Չարմահալի հայերին մինչ իր մահը: Նա վախճանվում է 1681թ. ապրիլի 5-ին, մարմինն ամփոփվում է Վաստիգանի հին հայաբնակ գյուղի հայոց

¹ - Չարմահալ գավառի մասին ավելի մանրամասն տեսնել մեր հետևյալ աշխատությունը.

Էդիկ Բաղդասարյան, «Իրանահայ Համայնքների Ամբողջական Պատմություն, 10 հատորով», Թեհրան-Երևան-Տորոնտո, 2012, հատոր 5, էջ 435-486: Նաև նույնի համառոտը 2 հատորով, Տորոնտո, Հայերեն(2015), կամ Անգլերեն(2016) կամ Պարսկերեն(2014) տարբերակները:

գերեզմանատանը: Սուքյասենց կամ Սուքյասյան տոհմից էին Քյալանթար Աբելը, նրա որդին Քյալանթար Սուլքյասը, Քյալանթար Ղուկասը, Զ. Մարտիրոս (Ահմադաբադ) Քյալանթար Հարություն (Լիվասիան) Քյալանթար Բեգլարը (Լիվասիան), Քյալանթար Մարտիրոս, Քյալանթար Սուլեհմանը (Հաջիաբադ գյուղում, 1841-1907), մյուս նշանավոր տոհմերից էին Բարումյանները, որոնցից տանուտերության պաշտոն են ունեցել՝ Խուդաբաշխ, Բարում, Այվազ, Աբգար, Հովհաննես, Մինաս, Սուլեհման:

Օհանյանները կամ Դավթյանների տոհմը Հայաստանից գաղթելուց հետո հաստատվել էր Գիշնիգան գյուղում, առաջին տանուտերը լինում է Օհանը, նրանից հետո՝ Դավիթ, Մկրտիչ, Մկրտում եւ Մանուկ, որոնց տիտղոսն էր «Բիխա» (քաղխուղա):

Ղարախանյան տոհմը նույնպես Պարսկաստան գալով հաստատվում է Չհարմահալի Սիրաք գյուղում: Տոհմի հիմնադիրը եղել է Ղարախանը, որը եղել է Նազարի որդին: Նա ունեցել է ութը որդի, որոնք են՝ Գրիգոր, Փուլադ, Ասատուր, Այվազ, Սարգիս, Բաղդամ, Ֆարհադ և Մելիք: Վերջին երկուսը որոշ ժամանակ բնակվելով Քյարվանդ գավառում, փոխադրվում են Ղազվինիի շրջան և մշտապես հաստատվում Ղարաղան գյուղում: Ղարախանը Մեծ Գաղթի ժամանակ հաստատվում է Փերիայի Ֆարսանի շրջանի Թիրան-Քյարվանդ գավառում, նա վախճանվում և հողին է հանձնվում Խորմնունի գերեզմանատանը:

Ըստ Անդրանիկ Սարյանի¹ Ղարախանին հաջորդել է նրա ավագ որդի՝ Գրիգորը, որի ջանքերով իր տոհմը Քյարվանդից փոխադրում է Չարմահալ և վեց եղբայրները բաժանվում են իրարից և հաստատվում են իրար կից վեց գյուղերում.

1-Ղարախանի անդրանիկ որդին իր ընտանիքով բնակվում է Թաղանաք գյուղում, սակայն տարիներ հետո վերջնականապես հաստատվում են Սիրաքում: Նա լինում նաև երկու գյուղերի տանուտերը:

¹ - Ա. Սարյան, Պատմություն Չարմահալ գավառի, Թեհրան, 1980, էջ 112-124:

2-Փուլադը հաստատվում է Մադի Քոհնա գյուղ: Սակայն նրա Փուլադյան ընտանիքը երկու հարյուր տարի հետո փոխադրվում են Մամուքա և Սինագան:

3-Բադրամը հաստատվում է Ահմադաբադում:

4-Ասատուրը հաստատվում է նախ Գիշնիզանում ապա Ահմադաբադում:

5-Այվազը՝ Թադանաբում:

6-Սարգիսը վերադառնում է Քյարվանդ, ապա Փերիո Շուրիշկան գյուղ:

Գրիգոր Ղարախանին հաջորդում է տանուտեր Նազար որդին, ապա վերջինիս Խուդադ որդին, որի չորս որդիներից՝ Խեչիկ (Խաչատուր), Սիմեոն, Մկրտիչ և Մկրտումը տանուտիրություն են անում հաջորդաբար թե Սիրաքում և թե հարևան հայաբնակ գյուղերում:

Մկրտումին հաջորդում է որդին Մեհրաբ Ղարախանյանը (Նասերեդդին շահից ստացել էր «Շիր ու Խորշիդ» շքանշան եւ «Յավար» տիտղոսը): Նրա եղբոր որդի Բիխա Եղնազար Ղարախանյանը եղել է նաև Սիրաքի տանուտերը Յավարի բացակայության ժամանակ, որից հետո նրա հորեղբոր որդի՝ Սամվել Ղարախանյանը: Ապա Մեհրաբի որդիներ Հովսեփի խան և Հովհաննես խան եղբայրները 20-րդ դարի առաջին տասնամյակում թե արժանանում են խանության տիտղոսի և թե շարունակում են տոհմի ավանդական տանուտիրությունը: Բացի նշված անձանցից, եղել են և կան նշանավոր Ղարախանյաններ, որոնցից կարելի է հիշատակել հասարակական-ժողովրդական գործիչներ վերջին մեկ դարվա ընթացքում, որոնք են՝ Տեր Հարություն, Տեր Հովսեփ և Վահան քահանաները, Աբրահամ և Անդրանիկ Ղարախանյանները:

Չարմահալի նշանավոր այլ տոհմերն էին Ադամյաններ, Անդրեասյաններ, Աղազարյան, Ավետիքյան, Աղեքսանդրյան,

Բարսեղյան, Իսաչիկյան, Մինասյան, Մանսուրյան, Նորավյան, Հարությունյան, Պողոսյան, Փուլադյան, Փանոսյան եւ այլն:¹

Ճարմահալ եւ Բախթարի (چهارمجال بختیاری) նահանգը գտնվում է Իրանի հարավ-արեւմուտքում, Սպահան նահանգի հարավում եւ արեւմուտքում: Չարմահալ պարսկերենում նշանակում է «չորս մահալ կամ շրջան», քանի որ նախքինում 4 շրջանից էր բաղկացած՝ Գյանդիման, Զհար, Լար, Միզդե:

Առաքել Դավրիժեցին Չարմահալը հիշատակում է Գանդիման եւ Չղախոռ անուններով, որպես Սպահան քաղաքի շրջակա գավառներ, ուր բռնագաղթի ժամանակ հայերի մի մասը բնակություն էին հաստատել²:

Գյուղեր	Տուն	Արական	Իգական
Սիրաք	64	227	245
Ահմադաբադ	92	326	271
Գիշնիգան	43	125	114
Մահամոռ	24	72	73
Լիվասիան	83	307	253
	306	1107	956

1856 թվականին ունեցել է կրկին հինգ գյուղ, բայց Չյուրիգանի եւ Ֆոնդիգանի փոխարեն՝ Մահամոռ եւ Սիրաք: Հինգ գյուղը միասին ունեցել են 306 տուն 2063 շնչով, որից 1107 արական եւ 956 իգական:

Չարմահալը 1928 թվականին ունեցել է 12 գյուղ, 619 տուն 3095 շունչով, 14 քահանա, 10 եկեղեցի եւ 4 դպրոց:

Այդ թվականի գյուղերն են Ահմադաբադ, Ադրուլադ, Լիվասիան, Հաջիաբադ, Մամուռան, Մամուքա, Մուշիգան, Շահբուլադ, Մինագան, Սիրաք, Ներքին Զոնարք, Վերին Զոնարք:

Գյուղերի թիվը 1935 թվականին եղել է 9-ը՝ 3259 շունչ բնակչությամբ: 1946 թվականին նույնպես ուներ 9 գյուղ, որոնցից վեցը 1144 շունչ բնակչությամբ, 1946 թվականի օգոստոս ամսի 24-25-ին ներգաղթեցին հայրենիք:

¹ - Ավ. Քհն. Եղգարյան, նշվ. Աշխ. էջ 17-25:

² - Ա. Դավրիժեցի. Պատմութիւնն. Երեւան, 1988, էջ 47 եւ 327:

Ներգաղթած գյուղերն են Աղբուլաղ՝ 268 շունչ, Լիվասիան՝ 146 շունչ, Մամուռան՝ 148 շունչ, Ներքին Քոնարք՝ 142 շունչ, Վերին Քոնարք՝ 201 շունչ, Սինագան՝ 239 շունչ:

1956, 1960, 1962 եւ 1965 թվականներին շնչագրությունները եղել են այսպէս.¹

Գյուղ	1956		1960		1962		1965	
	Տուն	Շունչ	Տուն	Շունչ	Տուն	Շունչ	Տուն	Շունչ
Մամուրա	87	388	39	156	26	103	11	42
Հաջիարաղ	37	174	13	60	9	32	5	13
Սիրաք	31	139	18	71	8	36	8	31
Գումար	155	701	70	287	43	171	24	86

Գավառն ունեցել է ինը եկեղեցի, 17 քահանա:

1916 թվական

Գյուղ	Տուն	Արական	Իգական	Գումար
1 Մամուռան	67	186	156	342
2 Լիվասիան	90	260	227	487
3 Քոնարք Ցածի	65	171	145	316
4 Քոնարք Վերի	132	378	358	736
5 Սինագան	50	100	100	200
6 Մամուրա	140	373	341	714
7 Հաջիարաղ	85	248	185	433
8 Սիրաք	93	202	204	406
9 Ահմադարաղ	42	106	87	193
10 Աղբուլաղ	56	146	130	276
11 Մուչիգան	12	42	37	79
12 Դեշիխ	22	45	51	96
Գումար	854	2257	2021	4278

1918 թվականին Չարմահալում եղել են 14 գյուղ, 767 տնով եւ 3485 շնչով: Մոտ 800 շունչի պակասը՝ 1917 թվականի համեմատությամբ, արդյունք է նույն թվականներին առաջացած սաստիկ սովի, համաճարակի ու երաշտի, երբ հարյուրավոր Չարմահալցիներ գաղթեցին դեպի հարավային նավթաշխարհը եւ

¹ - Լ. Գ. Մինասյան. Պ. Փերիայի հայերի. էջ 470-471:

Բասրա-Բաղդադ, ուր տվեցին բազմաթիվ զոհեր: Իսկ գավառում սովահարության ու հիվանդության պատճառով մեռան մոտավոր հաշվով շուրջ 400 հոգի:

1920 թվական

	Գյուղ	Տուն	Արական	Իգական	Գումար
1	Ահմադաբադ	43	92	84	176
2	Սիրաք	74	714	200	374
3	Հաջիաբադ	77	183	170	353
4	Մամուքա	126	282	277	559
5	Սինագան	39	74	88	162
6	Աղբուլադ	58	138	141	279
7	Մամուռան	45	115	97	212
8	Լիվասիան	64	112	145	257
9	Վերի	130	315	329	644
	Քունարք				
10	Ցածի	58	143	116	259
	Քունարք				
11	Մուչիգան	14	28	22	50
12	Շահբուլադ	9	31	15	46
13	Դեշիխ	16	26	39	65
14	Բալլղու	14	21	28	49
	Գումար	767	1734	1751	3485

1931 թ. Չարմահայում կար 12 հայկական մեծ ու փոքր գյուղ, շուրջ 620 տուն՝ 3714 բնակչությամբ, որոնք զբաղվում էին հողագործությամբ (90%), խաշնարածությամբ եւ առևտրով (16%), 90%-ը գրեկ-կարդալ գիտեր: Աչքի էր ընկնում Քունարք գյուղը, Կալկաթայի Մարդասիրական Ճեմարանի 134 աշակերտներից 110-ը չարմահայցիներ էին¹:

1936 թվական

	Գյուղ	Տուն	Շունչ
1	Ահմադաբադ	40	190
2	Սիրաք	90	405
3	Հաջիաբադ	80	435

¹ - Ալիք. 1931 թ. դեկտ. 25, համար 39:

4	Մամուրա	140	720
5	Աղբուլաղ	56	280
6	Մինագան	50	200
7	Մամուռան	64	345
8	Լիվասիան	62	292
9	Յաձի	54	277
	Քոնարք		
10	Վերի	150	745
	Քոնարք		
11	Շահբուլաղ	20	90
12	Մուշիգան	15	80
	Գումար	860	4300

1946 թվականին, ներգաղթից առաջ հունվարին, Չարմահալի հայ ազգաբնակչությունը ներկայացնում էր հետևյալ պատկերը.

1-Սիրաք- Ուներ 85 տուն, մի դպրոց ու մի եկեղեցի, մի քահանա, Տեր Հովսեփ Ղարախանյան, որ վիճակավոր էր Հնդկաստանի Բոմբեյի քաղաքում:

2-Հաջիարաղ- Ուներ 80 տուն, մի դպրոց, մի եկեղեցի, երկու ծխատեր քահանաներ, որոնցից մեկը՝ Տեր Մինաս Աղանյանը, վիճակավոր էր Շիրազում, մյուսը՝ Տեր Ներսես Եղգարյանը՝ Ահվազում: Ուներ նաև մի վարդապետ՝ Տեր Եսայի Ամբարյան անունով:

3-Մամուրա- Ուներ 135 տուն, մի եկեղեցի, մի դպրոց, երկու ծխատեր քահանաներ, Տեր Մանասեր Մանսուրյան եւ Վաղարշակ Տեր-Սուրենյան-Փանոսյանը, որը վիճակավոր էր Ահվազում:

4-Լիվասիան- Ուներ 40 տուն, մի եկեղեցի, մի դպրոց, չուներ քահանա:

5-Աղբուլաղ- Ուներ 55 տուն, մի եկեղեցի ու մի դպրոց, ծխատեր քահանան՝ Տեր Վահան Ղարախանյանը վիճակավոր էր Ջուղայում:

6-Մամուռան- Ուներ 30 տուն, մի եկեղեցի ու մի քահանա՝ Տեր Վարդան Տեր Սուքիասյան, չուներ դպրոց. աշակերտներից ոմանք հաճախում էին Լիվասիանի, ոմանք՝ Աղբուլաղի դպրոցները:

7-Մինագան- Ուներ 35 տուն, մի եկեղեցի, մի քահանա՝ Տեր Եզնիկ Փուլադյան ու մի դպրոց:

8-Վերի Քոնարք- Ուներ 60 տուն, մի եկեղեցի ու մի դպրոց. չուներ քահանա:

9-Ցածի Քոնարք- Ուներ 30 տուն, մի խարխուլ եկեղեցի ու մի փոքրիկ դպրոց: Չուներ քահանա:

Ուրեմն՝ ինը գյուղերն ունեին ընդհանուր հաշվով 550 տուն մոտավոր հաշվով 2750 շունչ: Ներգաղթի տարում, 1946թ. օգոստոսին, Չարմահայի ինը հայաբնակ գյուղերից հայրենիք ներգաղթեցին վեցը.- Վերի Քոնարք, Ցածի Քոնարք, Լիվասյան, Մամուռան, Աղբուլաղ եւ Սինագան գյուղերը, 1276 շունչով¹:

Նախքան ներգաղթը, Չարմահայ գավառն ունեցել է 459 տուն բնակչություն, 2209 մարդ, 9 դպրոցական շենք, 9 եկեղեցի, 9 բաղնիք, 11 ջրաղաց, այգիներ, ծառաստաններ եւ այլն:²

1962-65 թվականներին, Չարմահայի հայ ազգաբնակչության վերջին վիճակագրությունները հետեւյալն է.

Գյուղ	Տուն	1962թ. 1965թ.	
		Շունչ	Տուն
Սիրաք	8	36	8
Հաջիարա	9	32	5
դ			
Մամուրա	26	103	11
գումար՝	43	171	24

Չարմահայի հայկական գյուղերը հին շրջանում³

1-Վաստիգան, ուներ գերեզմանատուն, եկեղեցի (ավերակ) հիմնվել է 17-րդ դարում : Տարագիր հայերի անդրանիկ գյուղերից.: Առաքել Դավրիժեցին այցելել է այս գյուղը 1645թ.

2-Բեն, 8-10 տուն հայեր ապրել են կարճ ժամանակով.

3-Ռաստով.

4-Դեփուրդ, Չարմահայի հայաբնակ անդրանիկ գյուղերից. ժամանակին եղել են 15-20 հայ ընտանիք:

5-Խարաջի.

6-Թիշնիզ.

7-Դաստանա.

¹ - Ա. Սարյան. նշվ. աշխ. էջ 640:

² - Ավ. քհն. Եղգարյան. Իրանի Չարմահայ գավառը. Թեհրան, 1963, էջ 33:

³ - Ա. Սարյան. Պատմություն Չարմահայ գավառի. Թեհրան, 1981, էջ 147:

- 8-Թաղանաք.
- 9-Շահրաք.
- 10-Շամսաբադ.
- 11-Բալըղլու.
- 12-Գուլուլոռի.
- 13-Քոչարի.
- 14-Գիշնիզան (1850թ. 239 հայ բնակչություն)
- 15- Ահմադաբադ (1607-10թթ. 120-130 ընտանիք) 1856թ. 597մարդ, 1880թ. 408մարդ, 1888թ. 318մարդ, 1901թ. 304մարդ, 1903թ. 345մարդ, 1917-18թ. 193մարդ, 1920թ. 176մարդ. 1930թ. 96մարդ, 1933թ. 45 մարդ.
- 16-Գուլոգերդ.
- 17-Սուլուզան.
- 18-Դաստգերդ.
- 19-Ֆռնդիզան.
- 20-Շալամզար.
- 21-Ջղախոռ.
- 22-Նաղան.
- 23-Սանգչին.
- 24-Չիվրիզան(Չվերդիզուն)
- 25-Բուլդաջի.
- 26-Ղալաքեշիշ(17-րդ դ.)
- 27-Գյանդուման.
- 28-Վերի եւ Ցածի Քաթագ (17-րդ դ.)
- 29, 30-Առաքելաբադ եւ Ղամշի գյուղ.
- 31-Գորագաբադ-Նասրաբադ.
- 32-Բուդաղաբադ.
- 33-Բժգերդ (հին եւ նոր, 17-րդ դ.)
- 34-Իմամդեյիս.
- 35-Գուդարքոք.
- 36-Նաղնա
- 37,38,39,40- Հանը-Սիրգայի շրջանի Սինի, Ռիզի, Ալունի, Դեյ-Արմանի գյուղեր.
- 41-Բոյրահմադի շրջանի Դեյ-Խալիֆա գյուղը.
- 42- Փլարդի շրջանի Մալ-Խալիֆա գյուղը.

Չարմահալ գավառի նոր շրջանի գյուղերը¹

- 1-Շահբուլաղ
- 2-Մուչիգան
- 3-Դեյշեխ
- 4-Սինագան
- 5-Հաջիարաղ
- 6-Աղբուլաղ
- 7-Սիրաք
- 8-Մամուռան
- 9-Լիվասիան
- 10-Վերի Քոնարք
- 11-Ցածի Քոնարք
- 12-Մամուքա

Չհարմահալում գոյություն են ունեցել նաև հետևյալ հայկական գյուղերը, որոնց մասին չկա հիշատակություն.

Խարաջի, Թիշնիգ, Շալամգար, Չյորիգան, Դասգերդ, Մուլուգան, Վաստիգան, Գյանդուման, Ասաղաբաղ, Փոնդիգան, Ռաստով, Թաղանագ, Խոսրովարաղ, և Ջաֆարաբաղ, Գյահրի Խունդ (Մաչգյազի մոտ), Նաղնա, Ղալա-Քեշիշ, Գուլուգերդ, Համգին, Սիրաք (Դասկերտ-օվրիգանի մոտ), Քորդ-շամի, Ահմադաբաղ, Գիշինգան, Բժգերդ: Ահմադաբաղ գյուղի եկեղեցին Ս. Մինաս է կոչվում, որի քարերից դեռ մնում են:

Չարմահալ գավառի հայ գյուղերի հիմնադրության օրից 1608-10թ.թ., ամբողջ 300 տարի դպրոցական շենք գոյություն չի ունեցել գավառում և հայ բնակչությունը բավականացել է յուրաքանչյուր գյուղի համար ունենալ մի երկու տիրացու-քահանայացուներ, որոնք սովորելիս են եղել իրենց գյուղի քահանա-ուսուցիչների մոտ, վարժվելով միայն եկեղեցական փոխասացություն և ընթերցանություն ու երգեր և այդպիսով պահպանել են Մեսրոպյան գիրը հայոց գյուղերում:²

¹ - Նույն տեղում. էջ 253:

² - Ավ. քհն. Եղգարյան. նշվ. աշխ. էջ 59-60:

Չարմահալի հայկական դպրոցները

Գյուղ	Դպրոց	Ուսուցիչ- ուհի	Կառուցման թվական
1 Սիրաք	Հայրիկյան	2	1908
2 Մամուքա	Պողոս Բալասանյան	2	1907-8
3 Լիվասիան	Պոպովյան	2	1904 ¹
4 Զոնարք	Վաչյան	2	1904-05թ. մինչև 1946թ ²
5 Հաջիաբաղ	Հայոց ազգային դպրոց		1922
6 Սինազան	Հայոց ազգային դպրոց		1927
7 Ադրուլաղ	Հայոց դպրոց	ազգ.	1925
8 Ներքին Զոնարք	հայոց դպրոց	ազգ.	1924
9 Մամուռան	Հայոց դպրոց	ազգ.	

Միությունները Չարմահալում

Չանազան նպատակներով Չարմահալի հայ գյուղերում 20-րդ դարի սկզբներից կազմվել են միություններ, ըստ հետևյալ ցուցակի.

Գյուղ	Միություն	Հիմն. թվակ.
1 Մամուքա ³	Դարվազաձոր	1902
	Զոր-Ասլան	1916
	Արշալույս Հ.Յ.Դ.	1919 հունիսի 1
	Առյուծ	1932-42

¹ - Այս դպրոցը հիմնվել է Ռուսահայ բարերար Պոպովյանի միջոցներով եւ Բագրադ վրդ. Վարդազարյանի հրահանգով:

² - Այս դպրոցը հիմնվել է Մարիամ Վաչյանի հիշատակին.

³ - Այլը, 1932 թ. հունիսի 19:

	Օժանդակ-Հ.Յ.Դ.	-
	Արարատ	1936-42
	Աշոտ-Հ.Յ.Դ.	1916 հունվ. 5
2	Հաջիաբադ	Առյուծ- Հ.Յ.Դ. 1919 հունվ. 2
	Աղքատախնամ	1919 փետր. 2
	Ծաղիկ (կանանց)	1922
3	Աղբուլաղ	Արծիվ 1915
	Փայլակ	1915
4	Սիրաք	Արծիվ-Հ.Յ.Դ. 1919 հունվ. 1
5	Ահմադաբադ	Ազգային եւ Չորավար 1919 հունվ. 21
6	Սինագան	Արանց 1919
7	Ներքին Բոնարք	Արշալույս 1915 դեկտ. 31
	Նոր-Մերունդ	1918 սեպտ. 10
8	Վերին Բոնարք	Կայծեր 1911 հունվ. 18
	Արծիվ ¹	1914 փետրվ. 7
	Ընթերցասիրաց	1918 դեկտ. 1
9	Լիվասյան	Նպատակ -
10	Մամուռան	Շանթեր 1916 մարտ 2

Վերոհիշյալ միություններից ոչ մեկը երկար կյանք ու գործունեություն չունեցավ. ամենատեսականը Մամուրա գյուղի երեք միություններն էղան, որոնք միացյալ ուժերով իրենց գյուղում կառուցեցին մի նոր դպրոց, եկեղեցու նորոգությունը կատարեցին եւ մի քանի փոքր բարեգործություններ արին:

Մասնավոր տեղ է գրավում, սակայն, Չամսահալ Գավառի Հայ Ուսումնասիրաց Միությունը, որի մասին «Ընդարձակ տարեցույց»-ի 1928 թ. մեջ Տեր-Հովակիմ քահ. Բարսեղեանը գրում է. «այնպես որ Հայաստանում ինչքան սար ու ձոր կա, Չհարմհալում էլ այդքան կուսակցություններ»²:

¹ - Սկզբնական շրջանում 1914-ից առաջ կրել է «Աշակ. Միություն»:

² - Ավ. քհն. Եղգարյան. նշվ. աշխ. էջ 76-77:

Չարմահալի հայկական եկեղեցիները¹

Գյուղ	Եկեղեցի	Հիմն. թվ.	Ավ. թվ.	Ծանոթ.
1 Ահմադաբադ	Ս. Մինաս		1940	
2 Ադրուլադ	Ս. Գր. Լուսավորիչ	1940	1946	Ներգաղթած
3 Ասադաբադ	-			
4 Բալեղլու	-			
5 Բժկերտ	-			
6 Բողաջի	Ս. Գր. Լուսավորիչ		1910	
7 Գյահրիխունգ	-			
8 Գյանդուման	-			
9 Գիշնիգան	-			
10 Գուլուգերդ	-			
11 Դասգերդ	-			
12 Դեյարմանի(խանենմիրգա)	-			
13 Դեյշեխ	-			
14 Չիվրիգան	-			
15 Թաղանագ	-			
16 Թիշնիշ	-			
17 Լիվասյան	Ս. Աստվածածին	1700	1946	ներգաղթած
18 Խարաջի	-			
19 Խոսրովաբադ	-			
20 Համգին	-			
21 Հաջիաբադ	Ս. Սարգիս	1905	1967	դատարկված
22 Ղալաքեշիշ	-			
23 Մալեխալիֆա(Փլարդում)	-			
24 Մամուռան(Մահմառա)	Ս. Հովհաննես	1900	1946	ներգաղթած
25 Մամուքա	Ս. Աստվածածին	1870	1967	դատարկված
26 Մուչիգան	-			

¹ - Լ. Գ. Մինասյան. Իրանի Հայկ. եկեղ. էջ 57-59:

Թ. Ղարախանյան Սիրաքի		22	Մեր անցած ուղին		
27	Նաղնա	-			
28	Նասրաբաղ(Գորագարաղ)	-			
29	Շալամզար	1 եկեղեցի	ԺԷ դար		
30	Շահրուլաղ	-			
31	Չաֆարաբաղ	-			
32	Չղախոռ	-			
33	Ռաստով	-			
34	Սինազան	Ս. Աստվածածին	1885	1946	ներգաղթած
35	Սիրաք	Ս. Գեորգ	1640 (1868)	1967	դատարկված
36	Սուլուզան	-			
37	Վաստիզան	1 եկեղեցի			
38	Քաթակ	Ս. Աստվածածին	1610 ⁹		
39	Քարասկան	-			
40	Քոնարք(Ներքին)	Ս. Սարգիս	1900	1946	ներգաղթած
41	Քոնարք(Վերին)	Ս. Գևորգ	1982	1946	ներգաղթած
42	Քորդչամի	-			
43	Ֆոնդիզան ¹	-			

¹ - Գրքի բոլոր տողատակերը պատկանում են խմբագրին:

ՄԵՐ ԱՆՑԱԾ ՈՒՂԻՆ

Գյուղից մինչև Մասջեդ Սուլեյման

Եվ այսպես վեց տարեկան հասակում, մի աշնանային իրիկնապահին մի քանի ընտանիք բարձրացանք «Գիթի Նավարդ» ավտոբուսը և արցունքոտ աչքերով թողեցինք մեր հայրենի գյուղը: Դեպի Մասջեդ Սուլեյման էինք գնում, որտեղ մեր հայրերը ապրում և աշխատում էին Անգլո-Իրանական Նավթային Ընկերության համար:

Ինչո՞ւ էինք գնում, քանի որ մեծ պապիս գյուղապետի հանգամանքով, մեր ընտանիքի վիճակը շատ լավ էր: Տարիներ անցան, մինչև իմացանք և հասկացանք, որ Անգլո-Իրանական Նավթային Ընկերությունը գործավորներ էր վարձում և տանում Մասջեդ Սուլեյման քաղաքում նավթի հորերի արդյունաբերական և արտահանման համար: Աշխատանք կար և աշխատավորը վճարվում էր: Գյուղացի հողագործն ինն ամիս չարքաշ ֆիզիկական աշխատանք էր կատարում, իսկ որոշ տարիներ եղանակի բարենպաստ չլինելու պատճառով, բերքը տուժում էր և աշխատող տղամարդը իր ընտանիքի մոտ գլխիկոր և ամոթալի էր զգում, փափագում էր այն մյուս համագյուղացիների նման քաղաք գնար, քաղաքացու զգեստ հագներ և մնայուն եկամուտ ունենար, նա ցանկանում էր բարձրացնել իր ընտանիքի կենսամակարդակը:

Այսպես, երբ արձակուրդի վերադարձող համագյուղացին, բարգավաճ վիճակով գյուղ էր վերադառնում, մյուսների հոգում ցանկություն էր առաջանում, որպեսզի իրենք էլ քրտնաջան և անվստահելի բերքատվության մտահոգությունները թողնեին և իրենց համագյուղացու, արդեն՝ քաղաքացու նման բարելավեն իրենց կյանքը:

Գնում էինք դեպի կյանքի զարգացում, դեպի նոր բարգավաճ տուն, դեպի կրթություն և լուսավորություն, նոր նվաճումներ, նորանոր կերակրատեսակներ ու զգեստներ, հիմնական աշխատանք, դեպի փրկություն անվստահելի գյուղական ապագայից: Գյուղում արդեն բարեկաններն ու հարազատները գնացել և թողել էին իրենց տուն ու տեղը, իրենց մնացյալ բարեկամներին:

Քանի տարի անցել էր Ներգաղթից և մեր գյուղը արդեն երեք տարուց ավել էր սպասել իր հերթին, շուկաներ կար որ Ներգաղթը դեպի Հայաստան դադարել էր: «Գիթի Նավարդ» ավտոբուսը իր վարորդ «Իբրամ Չոփողի» շոֆերությամբ թողեց գյուղը, այդ աշնանային իրիկնապահին՝ թողնելով մեզ միայն լացկտոց և ճանապարհի փոշու համ ու հոտը մեր շնչերի մեջ: Այսքան հիշատակեմ, որ մեզանից մեծերը մեզ սիրտ տալու համար ասում էին. « Մի լաք, մեկ տարուց հետո քաղաքացու պես, շավար-շապիկ» հագած, ետ կը գանք: Ի՛նչ երագանք...:

Հիշում եմ, որ վեց օրում հասանք Մասջեդ Սուլեյման, որտեղ մեզ սպասում էին մեր հարազատները: Ճանապարհորդության մանրամասները թողնելով, միայն երեք պարզ ու դիպուկ դեպք միշտ մնացին իմ մտքում մինչ այսօր: Առաջինը մեր առաջին գիշերն էր, երբ հասանք Սպահան քաղաքի «Գիթի Նավարդ» հյուրանոց՝ «Շափուր-Սպահան», բարձրացանք երկրորդ հարկ, մեր ավտոբուսի ղեկավարներ՝ պարոն - Թադևոս Մովսիսյանի և պարոն Եսայի Ապանյանի հրահանգով, այդ գիշեր բոլորս՝ փոքր ու մեծ, փռվեցինք գետնին փռված գորգին՝ քնելու նպատակով, երբ պարոն Թադևոսը իր հրաշալի ձեռքը դրեց պատին և էլեկտրական լույսը մարեց, ոչ ոք այդ նոր հրաշքին չանդրադարձավ, մինչև մի քանի րոպե անց, երկու չարանճի տղերք՝ մեկը Պողոս անունով էլեկտրիկ ճրագը միացրեց և մյուս չարանճին վազեց ու ձեռքը դրեց պատին և լույսը մարեց և բարձրաձայն մի մարդ զարմացած հառաչեց. «Տերդ մեռնի գիտություն» և գոգոփք ընկավ քնողների մեջ այս նոր տեսած հրաշքից և որոշ կանայք արտահայտվեցին, որ «դե հենց էսպես լույս աշխարհ ենք գնում Գարմասիր՝ այսինքն Մասջեդ Սուլեյման»: Այսպիսով երկու չարանճի տղերքը ձեռք դրին պատին՝ լույսը հանգցրին և պարոն Թադևոսից հայիոյանք կերան և էլի լույսը վառեցին և այսպես շարունակ մինչև քունը տիրեց անենքին:

Երկրորդ դեպքը «Ղոմ» քաղաքում էր, երբ առավոտյան հասանք և տիկիներից ոմանք ուզեցին ավտոբուսից իջնեն և շուկայից ուտելիք գնեն, այստեղ մեր ղեկավարները և «Իբրամ Չոփողին», որ լցրած քուլա-քուլա մուխ անելով ծխում էր իր չիբուխը, խորհրդակցելուց հետո

հրամայեցին ավտոբուսից իջած կանայք սպասեն մինչև դուրսից կանացի «չաղբր» բերեն, որպեսզի հայ կանայք իսլամական քողով իրենց ծածկեն, որ կարողանան շուկա գնալ, այլ դեպքում չէին թուլատրվի մեքենայից իջնեն, և այդ դեռ 1948 թվականն էր:

Երրորդ դեպքը պատահեց, երբ «Փոլ Դոխտար» հյուրանոց էինք հասել, առավոտյան ավտոբուսը կանգնեց նախաճաշի համար, և առաջին անգամ ես քույրիկիս լացի ձայնը լսեցի, չէ որ ես մեքենայի վերջին շարքում էի և մայրս իմ երկու քույրերիս հետ ավտոբուսի առաջին մասում էին, անընդհատ լսում էի քրոջս լացը՝ որը «հումներ» էր փնտրում, «ես հումներ եմ ուզում, ես հումներ եմ ուզում», և գրեթե պարսկերենով կիստ-պռատ ասում էր. «Մո նիլում, մո նիլում», ասինքն «Ման նեմիրամ» (Ես չեմ գնում): Տարիներ հետո այս ցավալի բացականչությամբ իր կարոտն էր արտահայտում հանդեպ հայրենական՝ պապենական տունը: Այդ մեր քույրը մինչև «Մասջեդ Սուլեյման» հումների համար գոռաց, մինչև նրան արձանագրեցինք մանկապարտեզ:

Այսպիսով գյուղից դեպի քաղաք արտահոսքը շարունակվեց և Սիրաք գյուղի տները վաճառվեցին տեղի մեր սիրելի պարսիկներին: Մինչև 1960-ական թվականները մեր գյուղը բոլորովին հայաթափվեց, բայց նպատակը բարի էր, քանզի գյուղացիների նոր սերունդը քաղաքներում կրթվեց, թե մշակութային և թե Ֆինանսական կյանքը ճոխացավ, սակայն ճշմարտությունը այն է, որ այդքան ազգային զարգացման պատճառով էր, որ հայ մարդը Պարսկաստանում մնաց և կերտեց տուն և ընտանիք, հավատքը կապեց իր ազգային արժեքներին:

Սիրաք (կամ Սիրակ) գյուղը թողնելուց վեցերորդ օրը, իրիկնապահ էր, երբ ավտոբուսը մի անապատի մեջ փոքրիկ տնակի առաջ կանգ առավ և մեր շոֆերը՝ Էբրամ Չոփոդին բարձր ձայնով արտահայտվեց՝ «Ալիան Դոլլահ ին համ դարվազեյե Մասջեդ Սուլայման»¹:

Մասջեդ Սուլեյման, որտեղ Անգլո-իրանյան Նավթային Ընկերությունը Պարսկաստանում առաջին Նավթի հորն էր խփել 1908 թվականին, բայց արդեն մինչև մեր գյուղերի արտագաղթը նավթի հո-

¹ - «Փառք Աստծո հասանք Մասջեդ Սուլեյմանի դարպասները»:

որը չորացել էր և միայն մի հուշատախտակ էր մնացել շուրջը լարերով ցանկապատ էր քաշված պահպանելու այդ հիշատակը:

Երբ մեր ավտոբուսի ղեկավարները ցած եկան և Անգլո-իրանյան Ընկերության դռնապանի հետ մի քիչ խոսելուց հետո, մեր ղեկավար - Թադևոսը վեր բարձրացավ ավտոբուս և հայտարարեց, որ «Էրեխեք ամենդ արթնացեք, խիզանին էլ արթնացրեք, որ էս բազրեսը (վերաքննիչ) ամենիդ տեսնի», ինքն էլ ավտոբուսից ցած եկավ, որից հետո դռնապանը, որ զինվորկանի նման հագուստ էր հագած, ավտոբուս բարցրացավ, հսկա բեղերով և խիտ հոնքերով աչքերը չռած և վախենալի, նայեց ձախ, աջ, մեջտեղ որը լիքը լցված էր ծալած գորգերով և երեխաներս վրան շարված՝ նստած և պառկած էինք, էս էլ մեջտեղի շարքի վերջն էի իմ պահպան ու պաշտպան Անդրանիկի մոտ, մեր գյուղի Գուլնաբատ հարսի մեծ տղան և Համբարձում փոքր եղբայրը ավտոբուսի պատուհանի մոտ. դռնապանը մեր ղեկավար Թադևոսին մի բան ասաց, որ Թադևոսը մեզ թարգմանեց մեր մեջտեղի շարքին ասելով «խիզան վեր էլիք, կանգրեք» և բոլոր երեխաններս կանգնած մնացինք մինչև դռնապանը լավ քննելուց հետո ավտոբուսից ցած եկավ և նկատեցինք, որ ավտոբուսի հետևի աստիճաններից բարձրացավ և ավտոբուսի վերևի բեռները քննեց: Ասենք որ ամեն ընտանիք իրենց բոլոր իրերը բարձել էին ավտոբուսի վրա և ավտոբուսը ամեն ծակոտիները լցրել էին և միայն մեծերը նստելու տեղ ունեին, օրինակ իմ երկու քույրերը իմ մորս գիրկն էին երկրորդ շարքում և նմանապես օտար ընտանիքները ամեն մի աթոռին երկու կամ երեք հոգի էին նստած:

Վերջապես, ճանապարհվեցինք և քանի ժամ հետո հայկական եկեղեցին երևաց և մի բլուր ցած գնալով ձորի պռունկին մի տափարակ տեղ Էբրամ Չոփողին ավտոբուսը կանգնեցրեց և մեր ղեկավարները՝ պարոններ Թադևոս և Եսային հայտարարեցին՝ «Էրեխե՛ք տեղ հասանք, էստեղ ԳԱՐՄԱՄԻՐ Է, ՄԱՍՁԵԴ ՍՈՒԼԱՀՄԱՆ, հիմի ցած արիք ձեր ապրանքները ջոկ-ջկեք»:

Ե՛վ ծիծաղ ե՛վ լաց, համբույրներն ու ճվճվոցները ձորը դորդացրին և դիմավորողները հարսանքային և հաղթական բղավումներով մեզ ըն-

դուներեցին, և թվաց թե մի լրիվ ժողովուրդ միասին հարսանիք էինք բռնել:

Մասջեդ Սուլեյմանի այս ձորի անունը «Փոշտ-է-Բուհ» էր և Պարսկաստանի հայաբնակ գավառներից մեզանից շուտ եկող գյուղացիները արդեն տեղավորվել էին և գրեթե ամենս նորեկներ էինք: Ինձ թվաց թե մենք եկել էինք մեր գյուղից, ավելի շուտ մեծ գյուղից որ մարդ ու կին, աղջիկ ու տղա ավելի հարուստ էին հագնված և ամենքի հազր կոշիկ կար ոչ թե քալաշ:

Այս ոլոր-մոլոր և չոր ու ցամաք տեղը, սկիզբ դարձավ մի ողջ կենտրոնացած հայությունը՝ որը գոյատևեց մինչև 1965-1970 թվականները:

Աշնանը փոքրիկներս գրվեցինք կառավարական դպրոց կառավարական «Դարեսթանե Մեհր», առաջին դասարանում:

Դեռ Հայկական ամենօրյա դպրոց չկար և հայերենի դասավանդումը միայն շաբաթը 2 ժամ կեսօրյա էր, և հինգշաբթի իրիկնապահին, մենք բանվոր երեխաններս տարբեր տարիքի աղջիկ-տղա 20-30 աշակերտ մեկ դասարանում էինք սովորում եկեղեցուն կից մի սենյակում: Իհարկե սովորելը վճարովի էր, բայց վերջն էլ չիմացանք թե մեր ծնողները ինչքան էին վճարում հայերեն դասի համար: Հայոց Լեզվի դասարանները սկսեցին երկրորդից և դասերը շարունակվեցին մենչև վեցերորդ: Կարելի է ասել, որ այս դասարաններում ամենքս բանվորների երախաններ էինք և միայն մեկ անձ կար Անդրանիկ անունով որ մասնակցում էր դասարաններին: Հայերենի շաբաթօրյա դասարան գնալու համար աշակերտներս քայլելով էինք դասի գնում: Այդ ժամանակ հեռու բնակվող սովորողները «Նաֆտուն»-ից կամ «Մալ Բարիմ»-ից ահագին ճանապարհ էին գալիս-գնում շաբաթօրյա դասերի համար, տարիներ են անցնում, մինչև մարդ հասկանում և ըմբռնում է թե հայ ծնողը ինչքան է կարևորել իր զավակներին այդ դժվարությունների մեջ վճարովի հայերեն դասի ուղարկել, հարգանք մեր ծնողներին:

Մեր հայերեն լեզվի ուսուցիչներն էին Չորա Բժշկյանը, Հայկ Հովսեփյանը, Ալեքը, Արտուշը, տիկին Վարսենիկը, Արաքսը և օրիորդ Մանիկը: Ներողամիտ լինեն ազգանունները չհիշելու համար:

Եկեղեցու մի ուրիշ սենյանկ տղաններս օգտվում էինք իբրև մարզանքի սենյակ և իր փոքրիկ բակում էլ մի հատ «Բարֆիքս» և «Ջիմնաստիկ» կար որ այս բոլորին ասում էինք «մարզադաշտ»: Տղաններս մարմնամարզական ծրագրեր էինք հետևում, որ քիչ և շատ մարմիններս մարզեինք, բայց մեզանից միայն երկուսը մեծերից մրցումի հասան և նրանք էին Հրանդ Մուրադյանը և Գալուստ Քեշիշյանը: Այսպիսով կյանքը եռում էր Մասջեղ Սուլեյմանում և արդեն 12 դասարանոց հսկա դպրոցի կառուցում էր ծրագրվում եկեղեցու շենքի շուրջ, որտեղ պիտի հայկական կրթություն և մշակույթի կենտրոն լիներ և հենց այդ եկեղեցու մեջ էր որ 1956 թվականին ժողով գումարվեց և Պարսկաստանի եկեղեցական թեմերը Հայաստանից ջոկեցին և կապեցին Անթիլիասի Թեմին՝ «մանրամասը հետագա էջերում»:

* * *

Կյանքի պայմանները շատ դժվար էին հատկապես բազմազավակ ընտանիքի համար, Փոշո-Քուհ եկող գյուղացու համար, «Լույս Աշխարհի» հասնելու խոստումի համաձայն: Այստեղ ընդհանրապես մեկ սենյականոց տնակներ էին, օդը տարվա 8-9 ամիսը տաք քամիներով 38-42 աստիճան տաք էր, սառույցը շատ սահմանապակ էր, 1 կիլոանոց սառույց ամեն մի ընտանիքի համար, սահմանապակ ուտելիք կար, և տաք քամու պատճառով գիշերները ճարահատված թրջած սավան էին գցում փոքրեկների վրա մարմինը հով պահելու համար:

Այս բլուրոտ տեղի մեկ կողմը ձոր էր, որ քարե աստիճաններով ճանապարհ էին գցել մինչև ձորի ցածը, որ հասնում էր փոքրիկ հոսող նավթ ու ջուրի առվակ և փոքր քարե կամուրջով նորեն քարե աստիճաններով ցածից վերև բարձրանում և աստիճանների կողքերին մինչև վերև տնակներ էին կառույցել, որ ամեն մի երկու աստիճան բարձրանալիս դուռ էր բացվում մի «հայաթի» մեջ որի շուրջեշուրջը տնակներում ընտանիքներ էին ապրում: Տնակները մեկ սենյականոց էին, գրեթե բոլոր ընտանիքը գետնի վրա էր քնում:



Թամը իր քույրիկեր՝ Հայկուշի և Հասմիկի հետ

Ամեն «հայաթ» ուներ մեկ վառարան՝ օջախ, փոքր սենյակ լողանալու և մեկ գուգարան առանց ջրի: Ջրի համար ձորի գլխին ջրի պահեստ կար կոչվում էր Բամբո պարսկերեն լեզվից վերցրած «պամպ-է-ար» ջուրի տանկ կար և ջուրը դուլերով կրում էին հայաթները: Ջուր խմելու համար կավից սարքած մեծ ամանը պարսկերենում «հորբանեհ» էր կոչվում, ամեն իրիկնապահ լցնում էինք և գլուխը ծածկում, որ գիշերվա ընթացքում ջուրը գովանա ու խմելու համար մատչելի լինի:

Լողանալու համար ջուրը տաքացնում էին և հայաթի «բաղնիս» կոչվածի մեջ ջուր լցնում մարմնի վրա:

Այս դասակարգը Մասջեդ Սուլայմանի ամենացած խավն էր որ իրենց ծննդավայր գյուղը թողած եկել էին աշխատելու նավթային ընկերության համար: Փոշտը Քուհի ձորի վերևի բնակիչները մի քիչ ավելի լավ վիճակի էին, որովհետև հայաթները 3-4 ընտանիքի համար էր և ջուր ու կայծ (Էլեկտրականություն) ունեին, բայց նրանցից որոշ հայաթներ գազ չուներին և զուգարանները հայաթներից դուրս էին, թեպետ հենց շատ նախնական կառույցով:

Այսպես կոչված «Լույս» աշխարհի խոստումն ու երազանքները որ այդքան քաղցր էին գրնգում մեր ականջներին, դեռևս անհասանելի էին թվում մեր մեծերին: Ամռան շոգը տաք քամիներով էր սկսվում: Ամառային երկար ամիսներին բանվոր ընտանիքները բոլորն էլ տան կտուրներին էին քնում և որոշ գիշերներ այնքան քամին տաք էր, որ «մալաֆանները» (սավաններ) թրջում և փոքրիկների մարմինը ծածկում էին, որ տաք քամին չխփի: Առավոտյան քնից արթնանալուց մարմինների վրա ճերմակ գծեր էին երևում, ինչպես որ մարդու թևերի գծագրությունը մարմնի աղից ճերմակ գծեր էր թողել մարմնի վրա. այնպես որ մարմինը տաք քամուց քրտնել և աղ էր դուրս տվել և աղը չորացել և նկար էր քաշել մարմինների վրա:

Բանվորական ընտանիքնում ոչ զովացնող միջոց կար ոչ «հովափըչիկ» և այսպես տաքությանը դիմանալով ասպրում էինք, գործում, սովորում բայց ՀԱՅ էինք մեծանում:

Իրանահայ թեմերի անջատումը Սբ. Էջմաիծնից

Սառը պատերազմի հետևանքով, 1956 թվականի մի ամառային իրիկնապահ, եկեղեցու դուրսը և ներսը լեցուն էր հայ տղամարդկանցով և ինչպես միշտ, բանվորների զավակներս ներկա էինք: Այն ժամանակ դեռ եկեղեցու շուրջը երկաթե ձողերով էր պատած և դեռ քարե պատ չէին կառուցել, ասիվոր բան էր պատահում, բղավումներ,

նվճարողներ, հիմարներ... դավաճաններ... դավաճաններ... հիմար եք... դավաճան եք... գոռում էր՝ նաջառ (հյուսն) Մինաս Զոնարքցին, եկեղեցուց դուրս էին վազում, ներս էին վազում, ոտքներն զարկում գետին, պատին, եկեղեցու պատերին, «թողեք էդ Հարթունին սպանեմ», խոսքը գնում էր Հարություն Լազարին, որ եկեղեցու ներսում ժողով էր վարում, Նավթային ընկերության մեջ նա «BARRAK OFFICE» Բարրակ Օֆֆիս-ի մեծն էր: Իր ֆիզիկական կազմվածքի համար ժողովուրդը իրեն մականուն էր տվել «Կուլուլակ Հարթուն»։ Ահա հանկարծ շրիկողներ լսեցինք բարձրաբոյ նաջառ Մինասը վերջապես հարձակվեց «Կուլուլակ Հարթունի» վրա և ջղայնորեն հարվածեց Հարությունի երեսին, բայց մյուսները քաշքշեցին և ջոկջկեցին և դադարեցրին: Նաջառ Մինասին քանի հոգի եկեղեցու ներսից դուրս բերին և ջանացան հանգստացնել նրան: Սակայն Նաջառ Մինասը զայրացած ու խռով բղավում էր՝ «Մարթիք էտ դավաճաններին միք հավատա ու էտ անիծված թուղթը միք ստորագրի»: Պարոն Մինասի շուրջը բռնած մարդիկ ջանանում (ջանում) էին նրան հանգստացնել, բայց նաջառ Մինասը թքելով ու մրելով իր սև ու սպիտակ մազերը ցլրված ու թափթփած երեսին ու աչքերին դեռ գոռում էր. «... նամարդներ, նամարդներ, դավաճաններ...» և դավաճան ասելով եկեղեցու բակից դուրս եկավ ու ձեռքերը թափ տալով, «Փոշտը Զուհի» ճանապարհը բռնեց և բլուրը պտտվելով քայլեց դեպի իրենց տուն: Մենք փոքրիկներս, զարմացած և հուզմունքով մեր ընկեր Մալուսի հոր վիճակից ազդված հագիվ էինք կարողանում մեր խառը ջղայնությունը և արտասուքները խեղդել, ես եկեղեցու բակից դուրս վազելով, փողոցը անցա և «Նոմրե Չեհեղ»-ի (համար 40) զաղուլ Հովսեփի տան կողքից մեր աստիճանները բարձրացա, հասա տուն և մորս գտա որ օտար դրացիների հետ շարան կանգնած Չաղուլ Հովսեփի տներին կպած՝ վարձված տներից, որ բլուրի փեշին էին, վերևից ցած եկեղեցու բակում հրիռոցներին էին նայում, մորս գտա ու մղկտացի որ՝ «Մամ, մեզի Հայաստանից կտրում են... ե և փոքրերս իմանալով թե չիմանալով լաց ու կոցով Նաջառ Մանասի համար, չիմացանք այդ օրը ինչպես մթնեց:

Ժամանակներ անցան, երբ հասկացանք նաջատ Մինասի գայրուրը այն էր որ ՅԱՎԱԼԻՈՐԵՆ Պարսկաստանի Եկեղացին Հայաստանից բաժանեցին: Նաջար Մինասը, տիկին Սաթենիկը և իրենց զավակներին՝ ատամնաբույժ Արտակի և Մալուսի հետ Մասջեղ Սուլեյմանից - Գաղթեցին Հայաստան և միացան իրենց մյուս երկու մեծ տղաներին, որոնք 1946-ին Չհարմահալի Քոնարք գյուղի գաղթողների հետ, նախորդ տիկին Սաթենիկի եղբոր ընտանիքի հետ գաղթել էին Հայրենիք:

Այս ցավալի ժողովրդ, Պարսկաստանի Թեմերը որորք կավածային հարստությամբ հայոց ամենահարուստ թեմերն էին, բաժանեց Էջմիածնից և միացրեց Անթիպասի թեմին և այսպես մեր աղի արցունքները մինչև թեմերի վերամիացումը, մեր սրտին ծանրացած քարացած է: Այդ 1956 թվականն էր:

Հասարակական շերտավորումները

Անգլո-Իրանայան ընկերությունը ի գորու էր իր գործողների ապրելակերպը դասավորել Անգլիական դասակարգային ձևերով: Ուրեմն - Մասջեղ Սուլեյմանում ապրուստի լրիվ միջոցները կարգավորված էր՝ ինչպես էին ջուրը, գազը, կայծը, դպրոցները, մարզանքի տեղերը՝ «ֆուտբոլ, կրիկետ, թենիս ...», առողջարանները և այլն, միայն ցածր խավի խղճալի վիճակն էր, որ այդ լրիվ համակարգից դուրս էր թողնվել և այդ խավը ամենամեծ թիվն էր կազմում, ինչպես որ փաստորեն իմ հայրիկի բանվորական ռեջիստրացիաի համարն էր 188,794: Գրեթե քաղաքի ժողովրդի ամենամեծ թիվը բանվորների ընտանիքներ էին: Նավթային ընկերության խտրականությունները այս խավին հրեց դեպի Պարսկաստանի ձախակողմյան՝ բանվորական շարժմանը և որոշ հայ ձախակողմյաներ կամ փամփուշտների զոհ գնացին կամ թողեցին - Մասջեղ Սուլեյմանը, իրենց գաղափարի համար: Անձամբ կարող եմ վկայել մի ազնիվ մարդու մասին, որ այդ մեր պատանի տարիներին ինքը մեզանից շատ մեծ էր, բայց հաստատ կվկայեմ, որ քնելուց առաջ

անպայման «հայր մեր» էր մրմնջում, ահա այտ անձը ինչպես կարող էր թե հավատացյալ ձախակողմ լիներ և թե քրիստոնյա հավատացյալ. Ահա այդպես էին այդ տարիների որոշ «ձախակողմերը»:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԿԱՐԳԵՐԸ

1-Senior Staff; Առաջին կարգի խավ: Բարձր գրագետ – պարսկերեն «Միրզա», իհարկե տեղիս կառավարական պաշտոնյանները նույն բարձրակարգ հնարավորություններից էին օգտվում:


Բարձր աստիճան գրագետների դասակարգ «Senior»-ները, որ ապրում էին հաստ ու կենտ «Մեյդան» անունով առանձին շրջանում և վերջին տարիներին նոր շրջան «Նաֆտակ» անունով կառուցեցին իրենց համար: Այս դասակարգը ուներ 4-5 սենյականոց տուն որի հետևի մասը ուներ իրենց կից ծառայողների բաժին: Բարձր կարգի բժիշկները այս խավին էին պատկանում:

2-Junior Staff; Երկրորդ խավ: Միջին կարգի խավ:

Այս Գրագետների խավը ապրում էր «Մեյդան» անունով շրջանի մեջ, բայց փողոցները տարբերվում էին Բարձր կարգի գրագետներից: Նաև հասարակ կարգի բժիշկները այս խավին էին պատկանում:

3-Skilled Labour. մասնագետ բանվոր՝ երրորդ դասակարգ, որոնց համար Նավթային Ընկերությունը 2 կամ 3 սենյականոց բնակարաններ էր կառուցել և նրանք ապրում էին գրագետներից ավելի հեռու շրջաններում որոնք էին՝ Նաֆտուն, Չոշմե-Ալի, Սի-Բերենջ, Բիրբան և Թեմրի կոչված շրջանները:

4- Labour: Հասարակ բանվոր՝ չորրորդ դասակարգ, որը Նավթային Ընկերության բանվորական ամենացածր խավն էր և գրեթե 80 տոկոսը գյուղերից եկած հայեր էին և ապրում էին Փոշտ Բուհ կոչված տեղում: Նույն դասակարգի պարսիկ բանվորները ապրում էին Բազարի շրջանում կամ Բալգեհ կոչված մեծ թվով օտար պարսիկ ընտանիքների շրջանում, որ Փոշտ Բուհի ձորի հարավային կողմում էին և բոլորովին հեռու հայկական շրջանից:



Մասջեդ Սուլեյման

5-Բագարի շրջան, որ կազմում էր 99.9 տոկոսը պարսիկ և հատ ու կենտ հայ խանութպանները ընդհանրապես մանրավաճառներ էին, օրինակ՝ օղի ծախող, կոշկակար, դերձակ և այլն:


Ոչ-բանվորների՝ այսինքն գրագետների «Junior, Senior»-ների առևտրական կենտրոնները յուրահատուկ խանութներ էին, որ միայն իրենք և իրենց ընտանիքները իրավունք ունեին ներս մտնել, նմանապես իրենց սկուսբներն էլ իրենց ապրած շրջանում էին գտնվում, նույնիսկ «Senior» գրագետների վաճառատները և սկուսբներն էլ ավելի բարձր կարգի էին, որտեղ միայն «Senior»-ները իրավունք ունեին ներս մտնել, բայց «Senior»-ի և «Junior»-ի կինոթատրոնը նույնն էր և միայն իրենք իրավունք ունեին օգտվելու: Այս վիճակը շատ նման էր սևամորթների ստրկական ժամանակաշրջանին:

Անձամբ վկա եմ եղել որ գրագետների հացի մեքենան Փոշո Քուհի փողոցից անցավ հաց հանձնելու՝ միայն բլուրի փեշին մի գրագետ «Հուշիար Նեժադ»-ի տունը: Գրագետների հացի մեքենան եվրոպական հացից էր բաժանում :

Բանվոր դասակարգի զավակների դպրոց գնալու բեռնատար մեքենայի հետևի մասը ծածկված էր և մենք փայտե աթոռների վրա էինք նստում, որ պատուհան չունեին և վրանի նման կոշտ կտորով ծածկված էր, բայց գրագետների երեխանների դպրոցի մեքենան ավտոբուս էր, փափուկ աթոռներով և պարզ պատուհաններով:

Նման դեպքերն էին, որ տարիների ընթացքում կուտակվելով բանվոր և իդեալիստ մարդկանց սրտերի մեջ, ձախակողմյան շարժումներին համակիր դարձրին նրանց:

Բանվոր մարդիկ Նաթային ընկերության տված 15-օրեա «company ration»-ով (մթերաբաժին, օրապարեն, օրաբաժին) էին ապրում. դա շատ նման էր այս օրերի food stamp-ին, ամեն բանվորի ընտանիքի չափը նույն չափի ուտեստեղեն էր, օրինակ՝ բրինձ, ոսպ, լոբի, յուղ, այլուր, սառույցի կտրոն և այլն, բայց օտար ուտելիքները բազարից էին առնում, իսկ ամառվա սառույցի չափը շատ քիչ էր: Ամռան առավոտները նախքան արևածագը, բանվորը քայլում էր դեպի սառույցի գործարան, բազարի սկիզբը և իրեն տրված կտրոնը հանձնում սառույց բաժանողին և այդ օրվա քառորդ «դալիբ» (կաղապար) սառույցը «30x30 սանտիմետր» առնում. փաթաթում էր գունիի (ջուտ, կենսաֆ), մեջ և տուն բերում ներփակում մի փոքր փայտե տուփի մեջ որտեղ ուտելիքները շարում էին սառույցի վրա. գրեթե այս օրերի սառնարանի նման: Խմելու ջուրը կավից պատրաստված կուժի մեջ էր պահվում, որին պարսկերենով «Հորբանե» էինք ասում և իրիկնապահին ջուր էին լցնում, որ գիշերվա զովին հովանա, շորով բերանը ծածկում և բաժակով ջուր վերցնում և խմում:



Թամը՝ 1952թ.

Փոքրիկներիս ասեսանքով և կարոտով հիշում էինք գյուղական աղբյուրների սառը ջրերը և գովաշունչ հովը: Կաթ չկար, հումսեր չկար, գառների և ոչխարների բառաչ չկար: Բայց կար աշխատանք, որ ընտանիքի մարդը պարզ երեսով ամեն 15 օր վարձի արճագույն ծրարը պարծանքով բացում էր իր ընտանիքի առաջ և ազնիվ աշխատանքի արդյունքը ցուցադրում իր կնոջը և պարզ ճակատով գրուցում նոր գնելիքների և պարտքերի մասին: Որքան որ այդ տեսարանի գրույցներից է հիշվում նոր ծրագրերի մասին ասելիք չկար, միայն

պարտքերը ծածկելու, տան վարձը վճարելու, երեխաների դպրոցի թոշակը վճարելու մասին խոսք կար: Գրեթե հազվիվ խոսվում էր երեխանների կոշիկ կամ շորերի հաշվի մասի, որ պիտի «Չավիդ»-ի կամ «Ամինի» բազարի խանութներից պարտքով վերցնեին և մինչև մյուս վարձին վճարեին:



Գյուղը

Գոնե տարին մի 2-3 անգամ խոսվում էր տոների առթիվ «Նանա Հուշանգ» պարսիկ կնոջ «յուխա» (խմորողենի մի տեսակ) թխելու վարձի և շաքարի ու ընկույզի ծախսերի մասին, ընդհանրապես դասավորում և թխում էին այդ համեղ յուխան:

Անգլո-իրանյան Նավթային ընկերության դասակարգային խտրականությունների բերումով բանվորներն ու գրագետները տարբեր շրջաններում էին ապրում և իրար հետ ընտանեկան հարաբերություն չունեին, հարազատը հարազատից կտրվում էր :

Այնքան հիշատակելի է այն պահը երբ կառավարական «Մարգարադ» դպրոցի ֆուտբոլի խաղին մի խաղացողի հարվածից աջ ոտքս ծունկից ցած կոտրվեց և որևէ միջոց չկար տուն հասնելու:

Անդրանիկ անունով մի հայ երիտասարդ՝ 9-րդ դասարանից, ոտքս փաթաթեց և իր հեծանիվի առաջը նստեցրեց և մեր տուն հասցրեց: Տեղիս հիվանդանոցին և բժիշկներին չվստահելով, վերջապես, սընըխչի «Մահմուդ»-ը (բեկաբույժ) ոտքս կապեց և առողջացա:

Ոտքս լավանալուց հետո ծնողներս իմ համար մի հեծանիվ առան, և ես հենց այդ ազնվական Անդրանիկի հետ հեծանիվի ընկեր դարձա և մեր գյուղի կյանքից պատմեցի, սարերից ու դաշտերից, աղբյուրներից ու լանջերից, լուսաբացի սարերի կաքավների կշկչոցը, ամառվա արձակուրդի եկող Նավթային ընկերության գրագիր ու բանվոր ընտանիքները, որ կրկին այցելում էին իրենց հայրենի գյուղը և լուսնկա գիշերների զվարճալի ընկերական գրույցները, երգերը և ... Անդրանիկը՝ շատ սիրեց և այդ ամառ ինձ հետ գյուղ եկավ, մնաց իմ պապոնց: Գյուղում ձիավարություն արեցինք, ձին ցորենի արտերի մեջ խոտնեց և միասին գետին ընկանք, բայց չվնասվեցինք: Այդ տարիներն անձանոթ Անդրանիկ Ղարախանյանը և ես հարազատ ՀՕՐԵՂԲՈՐ ԹՈՌՆԵՐ էինք («Կարապետ և Թադևոս Ղարախանյաններ»):

Մյուս տարի ամռան, Արնդրանիկը դայրոցը վերջացնելուց հետո իր հորեղբոր հրավերով Թեհրան գնաց, որ մի արհեստի համար գնար Անգլիա և լսեցի որ գնաց, սովորեց, վերադարձավ և ամուսնացավ ու լավ վիճակ ունեցավ, բայց մեր կապը լրիվ կտրվեց. Ես ամառը գյուղ վերդառձա և հասկացա, որ գյուղում քանի տուն ավել հայ չի մնացել, եկեղեցին անտեր էր մնացել. զանգերը, ավետարանը և եկեղեցու մնացած իրերը փոխադրվեցին Նոր Ջուղայի **Վանք** և եկեղեցին քանդվելուց հետոյ իր 4 սյուները, որ Քալանթար Մեհրաբ «ԵԱՎԱՐ» Ղարախանյանի կողմից Էջմածնից էին բերվել եկեղեցու կառուցելու համար, բնականաբար ժառանգում էր մեծ պապս Քալանթար Թաթևոս Ղարախանյանը և իր թաղման վայրը Նոր Ջուղայի գերեղմանոցում, տեղ գտան Սիրաք գյուղի Մուրբ Գևորգ եկեղեցու 4 Քարից տաշված ամուր սյուները: «Սեփահ-Է-Դանեշ»-ի ծառայության ժամանակ անձամբ տեսա ինչպես մյուս հայկական գյուղերի

եկեղեցիները հանձնվել էին պարսիկ ժողովրդին, ինչպիսին էին Մամուռան, Աղբուլաղ, Սինագան և Քոնարք գյուղերը, «Նաջառ Մինասենց գյուղ»-ի եկեղեցին:

Այա կոտրված ոտքիս ցավը թեթևացնելու համար ռադիո առանք և որովհետև ռադիոն (ռադիոընդունիչ) հազվագյուտ էր, մեր տան փոքրության բերումով ընկերներով որոշեցինք օրվա հատուկ ժամերին մեր տան հետևը հավաքվեինք ու ռադիո լսեինք: Հայերեն ծրագրեր չկային մինչև «Երևանն է խօսում» գիշերվա 11-ին և այդ մեր օրվա ամենից ցանկալի պահն էր, հատկապես մեծերի համար Սիամանթոն և Խաչե Զարեն; «Երեվանն է խոսում» մեր ամենաքաղցր և հուսալի ձայնն էր, որ մեր հոգին շաղկապում էր Հայրենիքի հետ:



Թամի մտորումները

Մեր փոքր տղանների համր խաղերն էին՝ Չուբ Քիլի (Base Ball)-ի նման, Գուլուլե, Սար-Բոթրի, և աղջիկների համար՝ Պլան-Պլուտիկ, Քարոջ և այլն:

Նավթային Ընկերության կանոնների համաձայն մեր շրջանում Սինեմա (կինոթատրոն) չկար, միայն հինգշաբթի գիշերները Փոշտե Քուլից շատ հեռու բանվորների գաղութի մի այլ նստավայր՝ «ՆԱՖՏՈՒՆ»-ուն, որտեղ հայ և պարսիկ բանվորները ընկերության սարքած տներում էին ապրում, այդ գաղութի համար ընկերությունը սինեմա էր կառուցել որի մեջ 300-400 հոգի կը տեղավորվեին: Սինեմաի տոմսը 5 կամ 10 ռիալ էր, ամեն մարդ կարող էր գնալ առանց խտրականության, այդ ժամանակի ֆիլմերի շատ մասը սև – սպիտակ էին և սիրված ֆիլմերիը կամ Քարոյի ֆիլմերը Գարի Քուլիցից էին և դեռ Չան Վեյնից ֆիլմ չկար, կամ հնդկական թարգմանված պարսկերենի, բայց օրիգինալ պարսկական ֆիլմ չկար, մինչև 50-ական թվականների վերջերը որ բազարում 2 մասնավոր սինեմա բացվեց՝ Դիանա և Սետարե-Աբի, որոնցով և բանվորը սկսեց ազատություն վայելել: Մինչև այդ, Սինեմա գնալու համար, Փոշտ Քուլից քայլում էինք 3-4 կիլոմետր մինչու Նաֆտուն և սինեման վերջանալուց հետո ետ էինք քայլում տուն, որովհետև հատ ու կենտ տաքսի կար, բայց խումբը որ միասին սինեմա էին եկել նույն խումբն էլ վերադառնում էին տուն:

Գյուղի ավանդական սովորության պես, մարդիկ զրույցի էին գնում իրար տուն, հատկապես տոները շնորհավորելու: Իհարկե զբաղմունքների պակասությունից էլ իրար տուն հավաքվում կամ կարդ (խաղաթուղթ) էին խաղում կամ լոտո էին խաղում: Մասջեդ Մուլեյմանում ճան խաղալը փոքրերի սիրված բայց արգելված խաղերից էր, ես էլ երբ առիթ էի գտնում մերոնցից գաղտնի գնում էի ճան խաղալու, մի անգամ «միջնակ» քույրս՝ Հասմիկը նկատում է մոտակա բլուրում ընկերներիս հետ ճան խաղալիս, լուր է տալիս ծնողներին: Երեկոյան երբ ուզեցի տուն գնալ, տան դռի՞նը փակված գտա, իբրև պատիժ ինձ տունից վռնդել էին, այդ պահին Հասմիկ քույրս

նեղացած լացելով մերոնց խնդրում էր դուռը բացեն, վերջապես երկար սպասելուց հետո դուռը բացվեց, ներս մտա և խոստացա, որ էլ երբեք ճան չխաղալ: Այս խավի մեջ մի հսկա ցանկություն կար պատմիչի բերանից պատմություններ լսել և Փոշտ Քուհի պատմիչի շուրջը այնքան որ հիշվում եմ հինքշաբթի գիշերները մեծ թվով փոքր ու մեծ հավաքվում էին արևելյան սրճարանների «ղահվախսանեի» նման ու լսում այդ հրաշալի պատմիչին՝ տարիների սիրելի և հարգելի պարոն ԿԱՐԱՊԵՏ ՄԱՆՍՈՒՐՅԱՆ-ին որի ծածկանունն էր «Մեյեղ Քրամվիլ»:



Թամը և անորոշ ապագան

Պատմում են թե «Մեյեղ Քրամվիլ»-ը իր ծածկանունը ստացել է Պարսկաստանի Նոր Ջուղայի նահանգին կից, ԼՈՐԵՍՏԱՆ՝ նահանգի Խոռամ-Աբադ քաղաքի լեռնային շրջանում իր երիտասարդ մասնագետի շոֆերության ժամանակ, երբ ճամփի գողերը իր բեռնատարի գլխից բեռը գողանում և երբ աշխատում է դիմադրել, նրան կալանավորում և իրենց հետ գերի են տանում:

Ասենք, որ բեռնատար մեքենաները շատ դանդաղոր էին բարձրանում այդ լեռնային ոլոր-մոլոր ճանապարհներով, որ մինչև 1960-ական թվականներին դեռ ասֆալթապատ չէին և գրեթե այդ ժամանակի բեռնատարային տրանսպորտի բոլոր շոֆերները Հայ էին

և ամեն բեռնատարի շոֆեր ուներ իր հայ աշակերտը: Բեռնատար մեքենայի աշակերտի մեծագույն դերերից այն էր, որ բեռնատար մեքենան իր ծանր բեռով գառիվեր բարձրանալու ժամանակ այնքան դանդաղ էր բարձրանում, որ բեռնատարը հենց շունչը կտրվելու ժամանակ, աշակերտը մի կտոր ծառից կտրած արգելող ճյուղ արագ գցում էր հետևի անիվի տակ, որպեսզի արգելի բեռնատարը հետ-հետ գնալուց: Էլի երբ բեռնատարը փոխանցում էր անում (Change gear) և ճանապարհ էր ընկնում էլի աշակերտը փայտի կտորը դուրս էր քաշում, վերցնում և գրեթե բեռնատարի հետ այնքան քայլում էր մինչև բեռնատարը հասնում էր լեռների գագաթը: Շոֆերությունն ու աշակերտությունը, այն ժամանակ Պարսկաստանի վստահելի և ապահով արհեստներից էին համարվում, իհարկե իր գործի յիսկերով: Այս ճանապարհները տարիներ հայ շոֆեր-աշակերտների առօրյա կյանքի մասն էր դարձել, օրինակի համար ամենից հայտնի հերոս ու քաջ շոֆերներից էին «Ղուլ Կարո»-ն որ տուն ու տեղը Նոր Ջուղա էր, ինքը իր բեռնատարը ուներ և Պարսկաստանի նավահանգիստներից՝ Աբադան, Խոռամշահր, Ահվազ քաղաքներից բեռ էր տեղափոխում Թեհրան: Օտար հայ շոֆերների պատմածի համաձայն, քշելու ժամանակ ամեն գիշեր ժամը 11-ին պիտի Հայաստանի ռադիոն լսեր: Մոտիկ բարեկամները լսել էին որ Ղուլ Կարոն ասում էր՝ «Երևանն է խոսում, Երևանն է խոսում»-ը լսելիս ջիզյարս հովանում է»: Պարսկաստանում, Սովետական օրերին, Հայրենիքի հետ միակ հոգեկան կապի միջոցը ամենօրյա ռադիոյի հաղորդումներն էին և նամակների ստացումն էլ ամիսներ էր տևում: Մեր շոֆեր-աշակերտ արհեստավոր հայությունը այնքան հոգով-սրտով սիրեց իրենց անցնող լեռնաշխարհը և ճանապարհները, որ մտան հայի ստրի մեջ և սկսեցին երգ ու պոեզիա հորինել և հայերեն, պարսկերեն և թուրքերեն բերնեբերան երգեցին իրենց ամենօրյա գործի ու կյանքի մասին և միացան Պարսկաստանի այդ ժամանակի մտավորականներին, արհեստավորներին, աշուղներին, քաջերին, հերոսներին, իմաստուններին: Ավանդ էլի ավանդ, որ մշտական այս ամենից ծանօթ «հայ

գաղթը» տեղից տեղ առիթ չստաց, որ այսքան բերնեբերան մտքի ստեղծագործությունը գրի առնվի, բայց մնաց գոնե մեր սերնդի մարդկանց հուշերի մեջ: Այսքան գոնե հիշենք, որ Թեհրանում ապրող հավանաբար շատերին ծանոթ սիրելի ու հարգելի «Փերիայի գավառից» Պողոսը իր գեղեցիկ մշտագալար մագերով և բեղերով, թամադայի բնածին ընդունակություններ ուներ և հարսանիքների հարգելի «Թամադար» էր, իր ջահելության ժամանակ ստեղծած ու հորինած էր «Շոֆերների երգերը» Պարսկաստանի հենց այդ լեռնային ճանապարհների մասին: Օրինակ այդ դժվար լեռնային ճանապարհների տասնյակ պտույտների մեկի անունն էր Չալան-Չուլանի լեռնային պտույտը, և մեր սիրելի Պողոսի հորինած երգը այսպես էր սկսվում իր բեռնատարը քշելու ժամանակ...

*«Շոֆեր տղեն մաշին է քշում,
 Ռուլը ձեռին միշտ է պտտում,
 Սար-բալեքին¹ դանդա² է փոխում,
 Գլխավերին³ թոռմոզն⁴ է բռնում,
 Քաշի՛ քաշի՛ քաշի՛ լենթերը ցլրվեց,
 Կայնի⁵ կայնի՛ կայնի՛ թորմոզը կտրվեց,
 6000 թունան⁶ վաքսալս⁷ փչացվեց
 ...
 Չալան-Չուլանի փչերը⁸ պտտվեց,
 և այն »*

¹ -Չառիվեր:

² -Փոխանցում:

³ -Չառիվայր

⁴ -Արգելակ

⁵ - Կանգնի՛ր:

⁶ -Իրանական դրամ, հավասար էր 10 ռիալի:

⁷ -Անգլիական Vauxhall մակնիշի ինքնաշարժ:

⁸ -Պտույտներ:

Հենց այս մեր սիրելի նույն Պողոսն էր որ Մասջեդ Մուլեյմանի Միհրդադ դպրոցի առաջին երգչախմբի երանելի և երազային ու առասպելական երգի փորձի ժամանակ մայստրո և ուսուցիչ Պարոն Չորա Բժշկյանի ղեկավարությամբ սկսեց ձայնը փորձել երգելով՝

*«Դուն էն գլխեն իմաստունիս...
Խիլքդ հիմարին բար մ'ի անի...»*

Ոչ մի տեղ այս տողերը չէին գրված, ոչ էլ Չհարմահալի Աշուղ ՀԱՐԹՈՒՆԻ օրինակ այս տողերը.

*«Չարմանում եմ էս աշխարհից,
Թե էս ինչ աշխարհ է դառել,
Քույուխը չի վախնում քարից,
Աղվեսը Մարդար է եղել »*

...

«Սեյեդ Քրամվիլ»-ի ծածկանունի մասին պատմությունը այսպես է հասել մեր սերնդին, որ «Սեյեդ Քրամվիլ»-ը հենց այդ կոչված «Չալան-Չուլան» լեռնաշղթայից բեռնատարը քշելիս, ճանապարհային գողերը հին ժամանակների «Կարավան կտրողների» նման մեքենան կողոպտել և իրեն գերի են վերցրել, և ինքը իր հայությունը թաքցնելու համար, իմաստությամբ և ճարակությամբ գողերին ասել է, թե ես «Մարգարեի և Աղաների¹ տոհմից եմ». Երբ հարցրել են թե «Աղաների ո՞ր տոհմից ես», նորից կայծակի ճարակությամբ պատասխանել է «ԶՐԱՄՎԻԼ» հիշելով՝ մեքենայի մի դժվար կտորներից “Crown wheel” (Քրան-վիլ) մասը և իր հարցաքննողները երբ շվարած են մնացել այս նոր «Աղա» տոհմից իր կյանքը փրկել են և իբրև մեծ «Աղա»-ի տոհմից խնդրել են, որ իրենց շրջանի ծերուկ իմաստունների խորհրդական

¹ -«Աղա» նշանակում է տիար, պարոն, որի համար արաբերենում օգտվում են «սեյեդ» բառը, որը իր հերթին նշանակում է Մուհամեդ մարգարեի շառավիղ:

լինի, և այդպես իր կյանքը փրկելով միառժամանակից հետո վերջապես հարմար առիթից օգտվելով հերոսաբար իրեն փրկել է այնտեղից և հասել Մասշեղ Սուլեյման և աշխատանքի անցել Նավթային Ընկերության մեջ, բայց և այնպես պահել է իր հերոսական ծածկանունը: Մենք փոքր ու մեծս խոր հարգանքով և սրտի սիրով դեռ մինչև օրս հիշում ենք մեր սերնդի հոգին սնող և ազգային առասպելների ստեղծագործ «ՊԱՏՄԻՉ»-ի այդ պատմական սքանչելի ծածկանունը:

1998-ին Կանադայի Տորոնտո քաղաքում, ընկերային մի հանդիպման ընթացքում մեր հարգարժան պատմիչ Պարոն Կարապետ Մանսուրյանի գովքը գովեցի մեր սիրելի համազյուղացի պարոն **Կարո Մարտինին**: Կարոն իր Հարգելի հորեղբայր Մարտիրոս Քեշիշյանի ջանքերով պատանի տարիքին մեր գյուղից մեկնել էր Հնդկաստան կրթվելու և Կալկաթայում կրթվելուց հետո վարձվել էր Հնդկաստանում հիմնադրված Անգլիական «Դարջինգ» թեյի ընկերությունում և հասել էր տնօրենի պաշտոնի: Տարիներ պաշտոնավարալուց հետո հաստատվել էր Տորոնտոյում և անդամ էր թե՛ Տորոնտոյի Սուրբ Երրորդություն Եկեղեցու ծխականի և թե՛ Վարդանանց Ասպետների միությանը: Կարոյի հետ մեր այդ խոսակցությունը այնքան ոգևորիչ և ազգային էր, որ ծրագրվեց մեր սիրելի Կարո Մարտինը Պարսկաստան գնար և այդ հարուստ պատմիչի բեղմնավոր գործնությունը գրի առնել, որ այդքան մեծ դերակարություն ունեցավ մեր ժողովրդի ամենագուրկ դասակարգի համար, այդ անցողական դարեշրջանում և ծանոթացնելով մեր ժողովրդին հարգանքի տուրք մատուցել նրան և իր տիկնոջ ու զավակներին: Ինչպես ասվում է ... ցավոք պիտի ասենք որ չստացվեց և ծրագիրը կիսատ մնաց մեր հարազատ ընկերոջ բազմաթիվ ազգանվեր ծրագրների բերումով:

Ազգանվեր պարոն Կարո Մարտին Բեշիշյանը հայրենասեր լինելով նույնիսկ սովետական տարիներին հաճախ այցելում էր Հայաստան և ամեն անգամ հանդիպում Երջանկահիշատակ Վազգեն Կաթողիկոսին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում և տարիներ մեծ քանակությամբ անվճար թեյ էր ուղարկում Էջմիածին իբրև նվեր Իրանա-Հնդկաստանի Թեմի կողմից առանց հայտարարության և ինքնասիրության: Մեր սիրելի Կարոի նվիրումը ինչքան նման է Կանադաում Տորոնտո քաղաքում հիմնված Հայաստանի Համահայկական Հիմնադրամի ազգանվեր աշխատանքներին, որ Տորոնտոյի փոքրաթիվ հայության տարեկան դրամահավաքից Արցախում ճանապարհ, դպրոց, գազամուղ են կառուցում և հայտարարվում է, որ Տորոնտոյի բոլոր հայերի կողմից է դրամ հավաքել: Այսպես գլուխ ենք խորարհում «ԱԶԳԻ ՀԱՄԱՐ ՔԱՐԸ-ՔԱՐԻ ՎՐԱ ԴՆՈՂՆԵՐԻՆ» որ իրենց ԳՈՐԾՈՎ են հիշվում հավիտյան:

Կարո Մարտին Բեշիշյանը ծայրագույն մեծ դեր ունացավ Իրանա-Հնդկաստանի թեմի գործնեությանը, այնպես որ Կանադայի Տորոնտո քաղաքում անձիս պատմածի համաձայն, ինքը Իրանա-Հնդկաստանի հայկական դպրոցական և եկեղեցական մարմնի պատասխանատուներից էր և Հնդկաստանի Եկեղեցական Թեմը **անբաժան** պահեց Ամենայն Հայոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին **կից** և ապահովեց “HONG KONG”-ից ստացված տարեկան հազարավոր դոլարների մշտական շահույթը, որ 18-րդ դարից Հնդկաստանի Հայ Ազնվականների պահ դրած Կապիտալ անձեռամխելի դրամագլուխն է, և մշտապես ուղարկվի Հնդկաստանի Հայկական Դպրոցա-Եկեղեցական գանձանակը և այսպես մնա Ամենայն Հայոց Սուրբ Էջմիածնի հովանավորության տակ:

Վկայում ենք այստեղ, ի հարգանք մեր ազգանվեր **Կարո Մարտին** Բեշիշյանի, պիտի հիշվի որ Տորոնտոյի Սուրբ Երրորդություն Եկեղեցու ներքնահարկի հսկա սրահը կառուցվեց **Կարո**-ի “Lobbying”-

ի¹ ջանքերով Տորոնտոյի քաղաքապետարանից ստացված 150,000 դոլարի օգնության շնորհիվ, և ներքնահարկի սրահը **Կարոի** առաջարկով պիտի անվանվեր «Արարատ», նպատակը լինելով այն որ բոլոր հայության որևէ երկրից եկած որևէ խավից, հայախոս թե ոչ, պարզորեն բոլոր ՀԱՅՈՒԹՅԱՆ-ը ծառայի. աղպես էլ եղավ: Հարգանք **Կարո Մարտինի** հիշատակին:

Այսպիսով մի ազգային լուսավոր հիշողությունը մնում է պատմության գրկում և կյանքը շարունակվում է Մասջեդ Սուլեյմանում և Նավթային Ընկերության աշխատավորները շշուկներ են լսում Ընկերության տեղափոխվելու մասին:

Արադան

Մինչև 12-րդ դասարանի դիպլոմի լուրջ քննությունների տարիները, պատանիներս ամեն առիթից օգտվում և խաղում էինք: Բանվոր դասակարգի պատանիներիս համար ամռան այդ կրակոտ օրերին, որ լրիվ աշխատավորները միայն կես օր էին աշխատում առավօտյան 6:30 ից մինչև կեսօրվա 2-ը, տուն վերադառնում և հանգստանում: Մեր զբաղմունքի և խաղի վայրը, բլուրներն էին: Մի տեղ ձորի մեջ, մի ավազոտ տեղ էինք գտել որ նավթ ու ջրով խառը փոքրիկ գետակ էր անցում, դրա ափին մի մեծ հողաբլուր շվաք էր գցում և բլուրի դռշին 3-4 մետրանոց քանդված՝ ներս գնացած տեղ կար, ուր տղերքս բարձրանում էինք ու գրեթե երևակայական լողի ավազանի գլխից թռչում էինք ներքև՝ ավազների վրա, հետո չափում թե ով կարող էր ամենից հեռու թռչել: Անհամ փոքրիկ խաղերից որ անցնենք, տղաների մյուս խաղերից էին ֆուտբոլը, դաջբոլը², վոլեյբոլ, ՉՈՒԲ ԶԻԼԻ կամ ՉՈՒ-ՈՒ որ ճիշտ Ամերիկյան բեյսբոլի³ էր նմանում միայն գնդակի փոխարեն 20 սանտիմետրանոց փայտից էինք օգտվում և վազելու

¹ -Լորբիստական միջնորդություն:

² - Dodgeball

³ - Baseball

ընթացքում էլ ՉՈՒԲ էինք կանչում առանց շունչերս կտրելու, մինչև փոքր փայտը իր զարկած տեղին հասցնեինք կամ գցեինք մինչև մեր թիմի ընկերը առանց բռնվելու վազեր ու տեղ հասցնել: Աղջիկների խաղերն էին «քարոջ», «պլան-պուտիկ» և այս ամենը առանց փողի էին կատարվում:

Միջնակարգ դպրոցի 12-րդ տարին վերջացրինք և մեզ երեք ամիս ժամանակ տրվեց քննություններին պատրաստվելու համար: Բանվորի զավակները ավելի սահմանափակ վիճակում էին, ամեն տեղ փողոցներում, որ գիշերը լուսավորվում էր, անպայման հայ կամ պարսիկ աշակերտներ լույսի տակ քննության համար դաս էին սովորում, ապա երբ հոգնում էին՝ փողոցի մեջ լույսի տակ քնում կամ քնելու համար տուն էին վարադառնում: Վիճակը բարելավելու համար քանի դասընկերներով որոշեցինք ծնողների տված փողերով քանի հոգով մի մեծ սենյակ վարձենք, որ մեկ սենյակի մեջ սովորենք, քնենք, արթնանաք, նավթի ճրագով թեյ պատրաստենք և մեր տներից էլ շատ հեռու չլինենք, որպեսզի մեր ծնողների կերակուրները ճաշակելով մեր բոլոր ժամը հատկացնենք մեր դասերին: Ապրիլ և մայիս ամիսներին արդեն շոգը ահավոր էր և կայծ էլ չունեինք և նավթի լույսով մինչև կես գիշեր կարդում՝ սովորում:

Այսպես բոլոր երեք ամիսները սովորեցինք, լավ ու վատ անցավ և բարերախտաբար շատերս որ թվաբանության ճյուղ էինք ընտրել, դիպլոմը ստացանք: Այս սկսեցիք որևէ կերպով աշխատանք գտնենք, փող աշխատենք և մեր ընտանիքների կողքին կանգնենք մինչև կանչվենք զինվորություն¹:

Նավթի ընկերությունը սկսեց դանդաղորեն աշխատողներին փոխադրել Ահվազ և Թեհրան քաղաքներ. շատերին էլ պատասխանեց, իհարկե նկատելի էր, որ այդ տարիներին Աբադանի հսկա քաղաքը որտեղ միայն Պարսկաստանի նավթի գտարանն էր աշխատում, կենտրոնական ուշադրությունից դուրս էր մնում և չէինք գուշակում թե ինչ ճակատագիր էր սպասում Աբադանի հայ ժողովրդին, որովհետև

¹ - Բանակի երկամյա ծառայությունը Պարսկաստանում պարտադիր է:

Աբաղանի նավթագտարանը հին տարիներից նույնն էր մնացել և որևէ զարգացնելու ծրագիր չկար և պարզորեն լինում էր գուշակել, որ նոր աշխատատեղեր չէին ստեղծվում և գնալով գտարանի մարդուժն էին պակսեցնում, արդեն քանի տարի էր անցել Աբաղան կղզին և Խոռամշահր նավահանգիստ քաղաքին միացնող կամրջի շինարարությունից հետո Նավթային ընկերությունը որևէ նոր բնակարաններ չէր սարքում: Արդեն կարելի էր գուշակել, որ Նավթային ընկերությունը հանդարտորեն նվազեցնում էր աշխատավորների թիվը և այսպիսով հայ մարդը ցավ էր զգում երևակայել Աբաղան քաղաքի հայահոծ մշակույթային կենտրոնը առանց հայության: Հիրավի, այդ տարիներին Աբաղան քաղաքը կարելի էր համարել եռուզեռով ու աշխատավորնրով ճոխ մի զարգացած եվրոպական քաղաք՝ Պարսկաստանի հարավային քաղաքների ՀԱՐՄ-ը: Մի զարմանալի հարազատություն կար հայ և պարսիկ համայնքների միջև: Երբեք մեկի մտքով չէր անցնում, որ հայկական գյուղերի արտագաղթը կրկնվեր, հատկապես, Աբաղան քաղաքի հայության համար: Հայ մարդու համար հարցը մնում էր նույնը՝ «որտեղ հաց, այնտեղ կաց» և այդպես էր որոշվում Պարսկաստանի հարուստ «Խուլգեստան» նահանգում Հայ մարդու ապրելավայրը այսինքն՝ Նավթային ընկերությունում աշխատատեղի լինել- չլինելու պատճառով:

Մասջեդ Սուլեյմանի նավթի հորերը գնալով չորանում էին և Նավթային ընկերությունը նոր հորեր էր փնտրում հարավային անապատներում, Պարսից Ծոցի հյուսիսային ափերում և Նավթային ընկերության շահերից էին բխում, որ իր մարդուժի թիվը նվազագույնին հասցնի և այդ որոշումից պիտի տուժեին մեծաթիվ ընտանիքներ այդ թվում շատ հայեր, և այսպես այդ ընկերությունը որոշեց իր նստավայրը փոխադրի Ահվազ քաղաք և պարսիկ ու հայ բանվորների մեծագույն մասը աշխատանքից պատասխանեց, իհարկե

վճարումներով: Պարզորեն լսեցինք որ քանի քանիսներ հայ և պարսիկ թե՛ հասարակ բանվոր և թե՛ գրագետ աշխատավորներ ճիշտ միջնորդներ գտնելով կաշառք տվեցին և վռնդվողների ցուցակից հանվեցին: Ուրեմն նորեն ամենքիս ծանոթ հայկական արտագաղթ սկսվեց՝ Խուզատանի նավթային նահանգի քաղաքներից՝ Մասջեդ Սուլեյման, Աբադան, Օմիդիե, Աղաջարի և փոքր թվերով՝ Հաֆտ-Քել, Նաֆտ-Սեֆիդ, Գաչ-Մարան և Բանդար-Մահշահիից:

Գաղթը ուղղված էր դեպի 3 քաղաք.

1-ԱՀՎԱԶ քաղաք, մեծ թվով հայ և պարսիկ աշխատավորներ Նաֆթի ընկերության ընտրված մնացողներից:

2-Թեհրան մայրաքաղաք, մեծ թվով հայ ընտանիքներ և գործազուրկներ:

3-Նոր Ջուղա, փոքր թվով հայ ընտանիքներ և գործազուրկներ:

Ժամանակը ծանր էր և պարապությունը¹ խենթացնում էր մեր նման ջահելներին: Նավթային ընկերությունից դուրս միայն կարելի էր ծանոթ, բարեկամ, միջնորդ ունենալ և տեղի կառավարական դպրոցներում կամ Հայոց Միհրդադ դպրոցում ուսուցիչ դառնալ բայց պիտի զինվորությունը վերջացրած լինեիր որևէ գործի համար, միայն մնում էր անձնական խանութներում իբր աշակերտ վարձվել, այն էլ մոտիկ հարազատ ծանոթի միջոցով և ամիսներ ձրի աշխատել մինչև փոքր վարձի հասնեիր: Օտար տեղ Մասջեդ Սուլեյմանում ոչ մի տեղ գործի առիթ չկար և մնում էր հեռանալ մի այլ քաղաք, այսինքն մեր պարագայում ամենից մոտիկ մեծ քաղաքը Ահվազ քաղաքն էր, որ 24 կիլոմետր հեռու էր և ճամբորդության միջոցները շատ սահմանափակ, հատկապես անփող մարդու համար: Ուրեմն անճարությունից առիթից օգտվեցի և Նավթային ընկերության գործի դիմում գրեցի. շարաթներ պատասխան չստանալով, դիմեցի «ՈՒՄՄԱՆ ԶՈՐ-ՔԻ» զինվորական / ուսուչական ծառայությանը, պարսկերենով՝ «Սեֆահե Դանեշ»-ի զինվորություն: Նորստեղծ՝ Ուսման Չորքի կենտրոնը ձրիաբար մեզ ուղարկեց Ահվազ քաղաքի զինվորական կենտրոն և

¹ -Գործազրկություն:

այնտեղ հարցաքննություններից հետո 59 օտար պարսիկ երիտասարդների հետ 2 լեցուն ավտոբուս ուղարկեցին Պարսկաստանի հարավային զինավարժության կենտրոն՝ Շիրազ քաղաքում, որտեղ 6 ամիս խիստ զինավարժություն և ուսուցչական դաստիարակություն ստանալուց հետո մեզ ուղարկեցին գյուղացի ժողովրդին ծառայելու և մի քիչ էլ դաստիարակելու: Իմ բաժինն էլ ընկավ Չարմահալ գավառի Ադբուլաղ գյուղը, որտեղից հայերը 1946 թվականին լրիվ գյուղը ներգաղթեց Հայաստան և գյուղը բոլորովին վերաբնակվեց շրջանի պարսիկ ընտանիքներով:

Հայության հեռացումը և «ՀԱՅԱՍ»-ը

Այսպիսով զինվորություն գնացի և Նավթային ընկերությունը մերոնց տեղափոխեց Ահվազ քաղաք, մյուս հայ ընտանիքներ էլ սպասում էին իրենց հերթին: Նավթային ընկերությունը թողնում էր Մասջեդ Սուլեյմանը:

Մի բոլակ կանգ առնենք և մտածենք.

Արդյոք կարելի է իբրև մի սրտցավ հայ մարդ մենք մեր սիրտը բացենք և մի քիչ էլ ինքներս մեզ հարց տանք, տեսնենք արդյոք մեր խելքին կը գա պատասխան տանք:

Իբրև ազգ, Ինչ էինք թողնում հետևում և իբրև պատմության դաս, արդյո՞ք կարելի էր այստեղից քանի տարի փորձառությունից մի ազգային բան սովորել թե ոչ: Եթե ազգը տեր ու տիրական ունի պիտի կարողանա այս հսկա պատմական լաբորատորիայից ճակատագրական դասեր քաղի և ինչպես սրտցավ ընտանիքի ծնող, ընտանիք և ազգը փրկելու և բարձրունքների հասցնելու համար, կիրառի պահպանողական միջոցներ: Նավթային ընկերությունը իր շահերի համար գաղթ էր կազմակերպել իր գործողներին՝ մեծ մասամբ հայության տեղը փոխել բայց հացի հասնել հենց նույն երկրի մեջ: Նույն պատկերը այս օրերին

Թեհրանի և Ջուղայի¹ հայությանն է պատահում, և այս անգամվա կազմակերպողը «ՀԱՅԱՍ» կոչված-ն է, հարց է առաջանում. Ով հայ ժողովուրդ արդյո՞ք այս արտագաղթի նպատակները նույնն են՝ այսօրվա 2009-ի՝ Թեհրանի և Ջուղայի արտագաղթը դեպի Լոս Անջելես և 1970-ական Մասչեդ Սուլեյմանի հայության արտագաղթը դեպի օտար քաղաքներ:

Ուրեմն եկեք ազգովի պատասխանենք ՈՉ, Երկուսի նպատակները շատ տարբեր են, մեկը շինիչ մյուսը քանդիչ: Վատահ գիտենք մեծաթիվ հայեր Մասչեդ Սուլեյման, Աբադան և Նալթային ընկերության օտար փոքր տեղերից մասամբ գաղթում էին իրենց նույն աշխատանքը պահելու համար, ուրքեր միայն հայերը չէին. այլ հայ ու պարսիկ և լրիվ Նալթային ընկերության աշխատակազմը. մի փոքրաթիվ հայեր էլ որ աշխատանքները կորցրել էին, իրենց վճարված գումարը վերցրել և Թեհրան կամ Ջուղա էին գնում աշխատանք գտնելու և ընտանիք պահելու նպատակով: Ոչ մի ընտանիքի դեկավար չէիր կարող գտնել, որ մի տեղ գնար ձրի ապրելու համար, որտեղ «ՀԱՅԱՍ» կազմակերպությունն է հայերի տեղը դասավորում Լոս Անջելեսում: Այդ գուզահեռ կա արտագաղթների 70-ականների և 2000 թվականների միջև: Պատճառը պարզ ու հասկանալի է որ 70-ականների Նալթային ընկերության արտագաղթ կազմակերպելը իր նախի հորերի շահերից էին բխում և պարզորեն նախի հորերը հենց Պարսկաստանի մեջ էին: Բայց «ՀԱՅԱՍ»-ի արած գործը հայոց ազգի կամավոր փափուկ տեղահանումը «ԵՂԵՌՆ» է, որ ԴԱՍԱՎՈՐՈՒՄ է հայ ընտանիքները իրենց օջախի կաղնին տնից-տեղից պոկեն, շինքները Հայ ու Հարենիքից ծռեն և տանեն Լոս Անջելես նորից տնկեն, և Ամերիկայի Լոս Անջելեսի գանձարանին ձեռք մեկնեն և իրենց կաղնին ջրեն, Ընտանիքի ջահելներն էլ գործ ճարեն գործեն, սովորեն և քիչ ու շատ ընկնեն Ամերիկայի կյանքի հոսանքի մեջ և մեծ մասամբ հազար հազարների նման հայությունից դուրս խառնվեն Ամերիկայի խառնիխուռը ազգերի մեջ և ինչ որ կուզի թող լինի: Ախր այս խելքի բան է մի օտար ազգի, մի օտար երկրացի կազմակերպություն

¹ - Սպահանի Նոր Ջուղա:

Պարսկաստանում շահ չունենա և սիրտը Պարսկաստանի մի փոքրամաստության համար ցավի և սափ, մնացեք լավ ծերացեք, թոշակի որ հասար մեր «ՀԱՅԱՍՏ»-ի նավը նստեք արեք մեր տուն ձեր ցավը տանեմ, ու ձեզ տուն ու տեղ կտամ, կպահեմ: Ախր եթե էս մեղմընթաց տեղահանումի մեջ դավադրություն չկա, եթե մի ծածուկ նպասակ չկա, ինչպես կարելի է այսքան ֆինանսական հիմնարությունը տեսնես և չմտածես որ «բա ախպեր իմ այսքան բարի կամեցող տուն ու տեղ տվողս ՈՎ Է, բա այս «ՀԱՅԱՍՏ»-ները հո այսքան տարի ապա որտեղ էին. կը լինի ասենք երկնքից իրենց դրկեցին Պարսկաստանի հայերին տեղ կանգնեն ու ջիզարները մեր համար էրվի. դե եթե այդքան սեր ու սիրական են հայության համար, դե թող մեզ հենց Հայաստան կամ Արցախ տանեն, դա հո Արաքսի մյուս ափը, միջոց չէ. Էլ ուր եք մեզ ովկիանտաների մյուս կողմը հրավիրում»:

Պարզորեն լինում է այսպես եզրակացնել.

Մասջեդ Սուլեյման, Աբադան և օտար փոքր տեղերի հայության քաղաղից քաղաք փոխադրվողը միայն տեղափոխվել էր և կառուցիչ, որովհետև Հայը իր երկիրը չէր լքում և քանդում:

Նույն ժամանակ այսպես կոչված Հայի տեր ու տիրական ղեկավարները, իմանան, հասկանան և սովորեն ու կիրառեն որ՝ Հայը ունեվոր ու ջրավոր, հարուստ ու աղքատ, գրագիր ու բանվոր մեկ կորիզից է ծիլ առել և ժողովրդի հետ սիրող ու փայփայող հարազատ ծնողի նման և ազգի ամենաբարձր Մեր և հարստությունը ՀԱՅՐԵՆԻԶ-ն է:

Հայաստան, Արցախ տեղափոխվելը Հայ մարդուն տանում է անմահության:

Ամերիկա, Լոս Անջելես գնացողների տեղափոխվելը դավադրական քայլ է, որ «ՀԱՅԱՍՏ»-ը հայի հանդեպ կատարում է, որ նրանք կորչեն և վերջում պիտի մնա դատարկություն, վերջնական կորուստ ինչպես հազարավոր հայեր կորեցին և կորցրին հայությունը Լեհաստանում, Հնդկաստանում, Անգլիայում:

1956 թվականին “TIMES MAGAZINE- little Armenia in Arizona, by Secretary of State John Foster Dulles”-ը հորդորեց Փոքր Հայաստան ստեղծել Հայաստանի կլիմային հոգեհարազատ միջավայր և լրիվ հայ Զրիստոնյա հայության այնտեղ հավաքել Ամերիկայի ԱՐԻՉՈՆԱ նահանգում. Այստեղ այս օրերին կատարվում է 50 տարի այդ թվականից անց Պարսկաստանի հայության տեղահանումը «ՀԱՅԱՍ»-ի միջոցով:

Հայաստանի շուրջը բնակվող հայ ժողովրդին հեռացնում են և այս դավադրություն է Հայաստանը նվազեցնելու համար և կարելի է մատոյ ուղիղ դնես «ՀԱՅԱՍ»-ի կազմակերպողների վրա, «ՀԱՅԱՍ»-ը եթե ճիշտ է ասում թող ԲԱՀԱԻՆՆԵՐ-ի համար բարեգործություն անի որ հոգեկան նեղության մեջ են ոչ թե հայերը: Ուրեմն ով արթուն է պիտի հասկանա որ այս գործը չարիք է, ջարդ է և վերջ:

Դե այսպես թողեք վերհիշենք մեր արած չարածը Պարսկաստանի «Խուզատան» նահանգի Նավթային շրջանում մոտ 25-30 տարվա ընթացքում. Իբրև մի հասարակ մարդ մեր ազգի սրտի տրոփումը հասկանալով, հիշում ենք որ մեր սերնդի ծնողները կիրթ ու անկիրթ փորձառու և անփորձ իրենց ընտանիքներին շակած դատարկ գրպանով գտնվեցին **Մասջեդ Սուլեյման** և կպան աշխատանքի և երբ հացի ու ուտելիքի պահանջը հարթվեց, կպան հայոց լեզվի ու դասի, խաղի ու հրճվանքի և որոշներն էլ մշակույթի ու մտավորականության: Մառը պատերազմի ժամանակներ էին, Գերուժերն էին Ամերիկան և Սովետական Միությունը, Պարսկաստանում ժամանակի թագավորական իշխանությունը Ամերիկայի ամենամոտիկ դաշնակիցն էր և հակասովետական ու խիստ հակահայաստանյան դիրքորոշում ուներ, և գուցե իշխանության հրահանգով էր որ մեր հայազգի ղեկավարներից պահանջեց որ Պարսկաստանի Հայոց եկեղացական թեմերը իր երեսը Արևելքից շրջի դեպի Արևմուտք: Մինչև 1956-ը Պարսկաստանի **հարուստ** եկեղեցական Հայոց թեմերը պատկանում էին Մայր Աթոռ

Մր. Էջմիածնին և երբ ազգովի թողնում էինք Մասջեղ Մուլեյմանը հայոց եկեղեցին բաժանված էր Հայաստանից և կապված էր Անթիլիասին:

Մասջեղ Մուլեյմանում (նմանապես Աբաղանում) հայության թիվը հասավ հազարների. Սկզբում ամենօրյա դպրոց չկար և մեր տարեկիցները միայն եկեղեցու կից դասարանում շաբաթը կես օր հինգշաբթի օրերը կեսօրից անց ժամի 5-ից 7-ը հայերեն երկսեռ դասարան էր դրված, որը սկսվեց երկրորդ դասարանից և շարունակվեց մինչև 6-րդ. մոտ 20 հոգի բանվորների գավակներ էինք և ԳՐԱԳԻՐՆԵՐԻ գավակներից 2 հոգի ավել չմիացան մեր դասերին մինչև ամենօրյա դպրոց սարքվելը: Հայերեն շաբաթօրյա դասարանը դասավանդում էին պրն. Հայկը, պրն. Ներսեսը, Օրիորդ Մանիկը, տիկին Արաքսը և տիկին Վարսենիկը և մեր ծնողները վճարում էին մեր դասավանդության համար: Հետագայում մի հսկա դպրոց - համալիր սարքվեց 12 հայկական դասարաններով և հսկա մշակութային սրահով իր լույսավոր բեմով: Բեմի երկու կողքերում հսկա և տպավորիչ Հայոց տառերի ստեղծողների գեղեցիկ նկարներն էին ձեռանկարած: Չախ պատին Մր. Մահակ և աջ պատին Մր. Մաշտոցի և ինչքան շնորհալի և հարուստ ճաշակով նկարների շրջանակներով:

Ձեռքով նկարած այդ մեծ Նկարները անձամբ նկարել և նվիրել էր պրն. Արսեն Սարվարյանը, հարգանք իր հիշատակին:

Դպրոցի շենքը գեղեցիկ մոխրագույն տաշված քարերով և կտուրը բաց մոխրագույն ալումինից էր և այս բոլորը ձրիաբար նվիրվել էին Նավթային ընկերության պաշտոնեա պրն. ԼԱՀԼԻ անունով մի ազնվական պարսիկի կողմից, որը լավագույնս ծանոթություն ուներ հայերի հետ: Դպրոցը և կից եկեղեցին լրիվ շրջափակված էին տաշված քարերից և փողոցի մակերևույթից ահագին բարձր էր, որ դրսից դպրոցի և եկեղեցու հայաթը չէր երևում: Հսկա համալիր էր, նախակրթարանից մինչև միջնակարգ 12-րդ դասարան, իր մարզադաշտով և եկեղեցիով, որը ուներ իր մղդսու ընտանիքի

հարմարությունները և կից գրադարանով և փոքրիկ բայց բավարար մարզանքի տունը, եռուն հայության կյանքով:

1955-57 թվականներին հսկայական 12 դասարանոց **Միհրդատ** դպրոցը վճարովի էր: Այդ տարիներին **Միհրդատ** դպրոցը արդեն մեր հայերեն շաբաթօրյա աշակերտներիս համար ուշացել էր, որովհետև թե ամսական թոշակն էր ծանր և թե մեր տարիքն էր մեծ և մեր պարսկական դասարանները դիպլոմի դասարան էին: Ամենայն դեպս քույրիկներիցս երկուսը ինչ-ինչ ֆինասական դժվարությամբ սովորեցին **Միհրդատ** դպրոցում: Դպրոցի տնօրեն դարձավ պրն. Չորա Բժշկյանը և ուսուչական կազմը մայրաքաղաք Թեհրանի երիտասարդ տղաներ էին բայց և տեղիցս տիկիներ և օրիորդներ էլ վարձվեցին ուսուցչական կազմում:

Արդեն մշակութային աշխատանքները զարգ ստացան, կազմակերպվեցին ամեն տարիքի համար՝ պար, երգ և թատրոնի խմբակներ: Հենց այստեղ էր մեր խոր ազգային լարերը գործի ընկնում և նոր պատուհաններ բացվում մեր երևակայական երկնքներում, պատկերները նկարում՝ ազգի պարզ ու տխուր անցյալը, ուրախությունն ու ցավը և մեր լավ ու վատը հասկանում ու մեր բարեկամ և թշնամուն ճանաչում: Հենց այստեղից իմացանք մեր ազգի հզորությունը շատ հեռավոր անցյալում և մեր տխուր վեցդարյա անտերությունը, սակայն ամենատխուրը 1915-ի Ապրիլ 24-ի Մեծ Եղեռնը: Ամեն Ապրիլի 24-ի ձեռնարկներում այդ հսկա **Միհրդատ** դպրոցի սրահի բեմում պարոն **Ղազարոսն** էր ոսկորների կմախք հագնում և բեմի վրայի կմախքների գերեզմանից դուրս գալիս և Ավետիս Ահարոնյանի «Կույր Աշուղ» ոտանավորը մրմնջում՝ «Կույր աշուղը հառաչանքի պարտք ունի, Ավարայրի և անեծքի վայրերում...»:

Հենց այդ **Միհրդատի** սրահից սովորեցինք ազգի պատմությունը, մշակույթը և ամենից վշտալի մեր ազգային ցավը իմանացանք բեմին տեսնելով պարոն **Ղազարոսին** կմախքի ոսկորներ հագած: Ընկերներով դրսում թեպետ պարոն **Ղազարոսի** կմախքի ոսկորներ հագնելուց մի լավ ծիծաղեցինք, կատակներ արինք, բայց կամաց

կամաց խելքներս տեղն եկավ մեզնից մեծերը հասկացրին այդ կմախքի և ոտանավորների իմաստը, և իմացանք, տխրեցինք և հասկացանք ինչ մեծ կորուստ է ունեցել այս փոքր ազգը և հասկացանք որտեղ ենք կանգնած աշխարհի պատմության մեջ, ցավ զգացինք որ մեր «Եքքա» Արևմտյան Հայաստանը կորցրինք թուրք թշնամուն մեր նվազությունից, քանի ու քանի հազար հազարներ մարդկային տաղանդ կորցրինք, էլ կալվածքներ ու միլիոն բիլիոն տրիլիոն ԴՈՒԱՐՆԵՐԻ արժեքով հարստություն կորուստը մի կողմ: Արդյո՞ք մի օր պիտի կարողանայինք այդքան քաջության ու հզորության հասնենք որ մեծ առաջնորդ Գարեգին Նժդեհի մարգարեական խոսքերին հավատանք որ «այնքան ուժեղանանք և ուժով ծնենք արդարություն և հետ խլենք մեզնից իվված հարստությունները»: Հենց այդ **Միհրդատ** սրահից արթնացավ և հարստացավ մեր ժողովրդի ազգային մտածելակերպը: Հենց **Միհրդատ** սրահի բեմում հայտնվեցին Լիբանանից եկած նախկին Հայաստանի վարչապետ Սիմոն Վրացյանը, Ֆրանսիայից Էլլեն Բյուզանդին, Սովետական Հայաստանից Գոհար Գասպարյանը և նմանապես այդ տարիներին Մասջեդ Մուլեյմանում ապրող և աշխատող անձինք իրենց դասախոսություններով, թատրոն, պար ու երգ ու ասմունքներով, երգչախմբեր ու պարախմբեր, մարզական և մշակութային աշխատանքներ, գիտելիքներ, պատմագետներ և դասախոսներ, ինչպես էին Գեորգ Դարֆին, Օնիկ և Հասմիկ Սահակյանները, Չորա Բժշկյանը, Մ. Սարվարյանը, Հարություն Բեգլարյանը, Սմբատ Փշիկներ և տասնյակ շատ ուրիշներ... Այստեղից խմորվեց և ամրացավ այդ տարիների մեր հայ սերնդի նկարագիրը և ազգային մտածելակերպը: Հարուստ ու աղքատ, ունեցող և չունեցող, գրագիր և բանվոր աշխատանք ունանալով մի չավիով կյանքի հոգսը թեթևացնելով առիթ ունեցան իրենց ազգային պատմությունը սովորել ու ազգը և ազգային մշակույթը ճանաչել, այստեղից սկիզբ առան ապագա սերնդի ազգային առաջնորդներ և գործիչներ:

Այսպես եռում էր հայության կյանքով շարունակ 25-30 տարի մինչև ՀԱՅԻ ՍԵՂԱՆԻ ՏԵՂԸ ՓՈԽԵՑԻՆ:

Մի քիչ էլ մտածենք ու հետ նայենք մեր անցած ճամբին և տեսնենք եթե Աստված ոչ արած սխալներ ենք ունեցել գոնե ջանանք ճշտել: Օրինակ՝ հենց այս Միհրդատ դպրոցի կարճատես դեկավար վարչության սխալ որոշումներին նայենք: Գրագրների գավակներ պատանի ջահելների համար աղջիկ-տղա պարի գիշերներ էին կազմակերպում որին բանվորների երեխաններից ո՛չ տղա, ո՛չ էլ աղջիկ որևէ մեկը չէին հրավիրվում և այդ երիդասարդական հանդիպումի պարի և շփումի գիշերները բանվորի գավակներս դպրոցի պատի շրջակայքում էինք բայց ներս գնալու իրավունք չունեինք, այդպես բանվոր գավակները տարեկից ընկերներով դպրոցի բակում պտտում էինք մինչև այդպես կոչված «ԹԵ-ԴԱՆՍԱ»-ն վերջանար, այդ գրագիրների տղա-աղջիկ գավակները իրենց պապերի մեքենաններով տուն գնան և մենք էլ միամտվենք և տուն գնանք: Էլի իբրև մի այլ օրինակ, մեզ նմաններին այդ տարիներին անվանում էին պարսկերենով «Փողոցային ԼԱԹ¹», որովհետև բանվոր դասակարգից էինք, և չարաճճիություններ էինք անում և կռվում՝ ջարդվում էինք ոչ-հայ տղանների՝ հայ աղջիկներին «ՄԱԹԱԼԱԹ» զցողներին (անվայել խոսք ասողներին) դեմ:

ԿՈՇՏ տղերք էինք: Օրինակի համար՝ երկաթի ձողերից սարքված ելարանների 84 աստիճաններից բարձրանում էինք հազարավոր լիտրանոց ջրի հսկա պահեստների գլխի վրա, որ քաղաքի ջրի պահուստներ էին, գլուխից թռնում ջրի ամբարի մեջ որ 20 մետր խոր և 30 մետր լայն էր և լողանում էինք մինչև մեր ընկերներից որոշված հերթապահը մեզ իմաց էր տալիս որ հեռվից ջրի պահեստի պահակը երևում է, և մենք ջրից դուրս գալով, երկաթե աստիճաններից

¹ - Նշանակում է՝ ընչազուրկ, խուլիզան:

կատվի պես ճարակորեն ցած գալիս և փախչում, և խեղճ պահակը «ուշունց» տալով մեզանից տարիքով մեծ հագիվ էր կարողանում մեզ հասներ և բռներ պատժեր և մենք հաղթական զգացումով փախչում և պատժից փրկվում էինք մինչև մի օտար անգամ:

Բայց և այնպես Մասջեղ Մուլեյմանի Միհրդադ դպրոցը իր հսկա սրահով, 12 դասարաններով, մեծ բակով, եկեղեցիով և փոքր մարզադաշտով մի հսկա հայեցի սերունդ կրթեց ու դաստիարակեց և պիտի ասենք որ բանվոր դասակարգն էլ ունեցավ իր փոքր ներդրումը տեղիս հայ ժողովրդի կյանքում, հակառակ նյութական դժվար պայմանների:



Գյուղ – Եղիսապետ տատը իր հարսների հետ, Լուսիկը (ձախից առաջին, Ծաղկուշը (մեջտեղում)

Հարկ է նշել, որ դպրոցական ամառային արձակուրդները գյուղում էի անցկացնում, վայելում մեծապապ-մեծմամիս սերն ու գուրգուրանքը, որ այդ տարիներին դեռ Սիրաք գյուղում էին, մասնակցում գյուղի բոլոր աշխատանքներին, զբաղվում որսորդու-

թյամբ և լեռնագնացությամբ հատկապես Չարմահալի հայտնի Չլաթ լեռում:

25-30 տարիների զարգացումով, վերջին 5 տարվա ընթացքում այդ հագարավոր հայության թիվը այնքան պակասեց որ մինչև 1970-ին Մասջեդ Մուլեյմանում արդեն մնաց մեկ հայ անհատ Պրն. Աստվածատուր «Ծատուր» կոչակարը:

70-ականների կեսերին այրն. Աստվածատուրի մահից հետո ոչ մի հայ չմնաց: Լսելով՝ համալիրը ծախվեց տեղացի ժողովրդին և Նավթային ընկերության կառուցած շենքերը և գրագիրների տները հանձնվեց զինվորության:



Սիրաք-1952- Թաղևոս պապի հետ

Չարմահալ գավառի Սիրաք գյուղը ուներ «Ջահանբին» անունով լեռնաշղթա, որի ամենաբարձր գագաթի անունն էր «ՂԼԱԹ» և որը

դարեր առաջ հրաբխային էր, որովհետև հենց իր գագաթից մի խոռը հոր էր բացված գուցե հարյուրավոր մետր խորությամբ, որովհետև մի քար որ գագաթի գլխից գցում էիր հորը 15 վարկյանից հետո էր մի տեղի կայնում և դրմբոցի ձայնը լսվում: Հենց պապենական Հայաստանից պոկված, Լոռիի հմայիչ լեռնալանջերի սիրով ու հիշողությամբ այս լեռնային ստորոտներում մի անանուն աղբյուրի մոտ, աղբյուրի անունը դրեցին «Լոռի աղբյուր» և փոքր բերդ սարքվեց «Շիրակ» անունով, որը պարսկաստանցին հնչում և գրվում էր «Սիրաք» և 17-րդ դարի կեսերին այդ շրջանի մեծ խան՝ Մորթեզա Ղուի Խանը, որ հայտնի Ամիր Մոջահեդ Խանի հայրն էր, **Ղարախանյաններ** տոհմին նոր գյուղի տեղ առաջարկեց «Շահրե Զորդ» Գյուղաքաղաքի և «Հովշիգան» գյուղի պատմական «Դեհ քորդի» Չահիրի պռունկին և ամեն ձև մթերքի օգնություն տվեց, որ մի մեծ գյուղ կառուցեն հենց «Շիրակ» անունով որն պարսկերենով հնչեց «Սիրաք», տեղ տալով շրջակայքի հայ ընտանիքներին: Դե ադպես գոռոռան հայության հիլոց բարձրացավ և եկան ընտանիքներ շրջակայքի գյուղերից՝ Թաղանակ, Ահմադաբադ, Թիշնիզ, Շամսաբադ և մոտ ու հեռու գյուղերից, և լցրեցին 3 բերդանոց Սիրաք գյուղը, որի երեք բերդերն էլ կպած էին իրար կտուրներով, ու ամեն մի բերդ իր վճարովի բերդապահի տնակ ուներ իր հսկա դառվազանների¹ գլխին, այդ երեք իրար կպած բերդերին մենք գյուղում անվանում էինք «Ցածի Ղալա²», «Միջի Ղալա» և «Վիրի Ղալա»: Գյուղի նախամուտքի տարածքին էլ ասում էինք «Ղալի-Դուռ», գյուղի հետևի մասն էլ որ գետի պռունկն էր, ասում էինք «Ղալի Ետև»: Մեր գյուղում, 17-րդ³ դարում կառուցվեց Սուրբ **Գևորգ** եկեղեցին, որի 4 քարե մուք մոխրագույն սյուները բերվել և նվիրվել էին հենց Սիրաքում ծնված

¹ - Դարպասներ:

² - Ղալա նշանակում է բերդ:

³ - Ըստ բանասեր Լևոն Մինասյանի, և մեզ (Էդիկ Բաղդասարյան) Սիրաքի եկեղեցին հիմնվել է 1868թ. (ըստ Անդրանիկ Սարյանի՝ 1866թ.), որը վերաբերում է նորակառույց եկեղեցու հիմնադրմանը, որը տեղի է ունեցել հին եկեղեցու (հիմնված 1640թ.) փլուզումից հետո:(Խմբ.):

Մէիրաք Ղարախանյանի կողմից, որին Պարսկաստանի Նասերեդդին Շահ թագավորը իրեն «Եավար Իսան» տիտղոսն էր տվել, պարսկերենով նշանակում էր «ժողովրդի հոգացող բարեկամ»:



Որսորդ՝ Թամը



Չարմիկ Վրեժ(ձախ) և Թամը(աջ), 1959



Որսից հետո- Սիրաք 1959- Թամը հրացանով , զարմիկ Հայրիկի հետ



Սիրաք 1959



1958-Թամը առաջինը - սիրաք գյուղի ամառային աշխատանք



1959-Սիրաք-քաղվորները ճաշի պահին



Սիրաք 1952- Թաղևուս պապը չամի վրա

Այդ թվականներին ևս սարքվեց «Խրիմյան Հայրիկ» նոր դպրոցը և ունեցավ իր կրթական, դաստիարակչական, մարզական, թատերական, մշակութային և ազգային ազատագրական գաղափարական

ղերը: 1955-60-ական թվականներին գյուղացին քաշվեց քաղաքներ աշխատանք փնտրելու, գյուղի տուն ու տեղը ծախվեց և դպրոցն ու եկեղեցին դատարկ մնալուց փլվեց:

Մեր անդադար պայքարող ժողովրդի այս հոգեվառ ու լուսամիտ դիրքը կրկնվեց Պարսկաստանի բազմաթիվ մյուս գավառներում, գյուղերում ու քաղաքներում, այսպես էլ նույն ազգային հոգեկան կրակը վառվեց Մասջեդ Սուլեյմանում, Աբադանում, Ահվազում, Ադա-Ջարիում, Օմիդիյեում և մեր ժողովուրդը նորից այս քաղաքներում կառուցեց դպրոց ու եկեղեցի և ամենից մեծը եղավ Մասջեդ Սուլեյմանի հսկա **Միհրդադ դպրոցի** համալիրը, բայց էլի քանի տարի անցավ և աշխատանքի պատճառով փոխադրվեց օտար տեղ և էլի ու էլի պարտավորվեց թողնել իր ձեռքով ու ջանքերով կառուցած հասարակական շինությունները և այս ամենից մնաց միայն մի երազի պես հիշողություն: Հասարկ ժողովուրդը միայն իր գլուխը պահեց:

2010 թվականի այս օրերին, Կարելի է ասել լրիվ Պարսկաստանը դարձել է մի մեծ Մասջեդ-Սուլեյման կամ Աբադան և մեր ազգի այսքան ծանոթ պատմությունը էլի ու էլի կրկնվում է...

Ահվազ քաղաքը

Մինչև մերոնց տեղափոխվելը Ահվազ քաղաք, միջնակարգ ավարտած, անորոշ, մտահոգված, զինվորության ծառայությունը չավարտած, այսպես քանի-քանիների նման անգործ էինք, պարսապսարապ:

Տասնութը տարիս լրացած, արդեն միջնակարգը ավարտած, պիտի զինվորական 2 տարվա ծառայության ավարտականը ներկայացնեի որևէ գործատիրոջ մինչև ինձ աշխատանք տային, այդ պատճառով հենց զինվորության հայտարարված թվականին ներկայացա Մասջեդ Սուլեյմանի ամենամոտիկ քաղաքը Պարսկաստանի հարավային նահանգի կենտրոն Ահվազ քաղաք և ինձ ներկայացրի զինվորական կենդրոնի **ՈՒՍՄԱՆ ԶՈՐՔԻ բաժին: 1961 թվականից Պարս-**

կաստանի կառավարությունը հիմնադրեց Չինվորական Ուսման Չորր պարսկերենով՝ «Մեփահ-է-Ռանեշ», անգլերենով՝ «Literacy Corps». Այդպես երիտասարդ զինվորականը երկու տարվա զինծառայության փոխարեն, 6-ամսյա ռազմական-ուսուցչական կրթություն կստանար և գյուղերում ուսուցչությամբ կծառայեր, և այդպես գյուղերի փոքրիկներին սկսած կամաց-կամաց ժողուրդին կրթություն կտար:



Կամուրջ՝ Անվագում

Պարզ էր կը նախընտրեի Նոր-Չուղայի շրջանի Չարմահալ գավառի մի գյուղում կատարել նշված ծառայությունը, որ արդեն հայաթափ էր եղել: Գիտեինք որ հայ գյուղացին հարյուրավոր տարի հայրենիքի կարոտով, 1946-ի Ներգաղթի տարիներին Պարսկաս-

տանի տարբեր գավառներից հայրենադարձվել էր: Բայց և այնպես հաստ ու կենտ գյուղերում դեռ փոքրաթիվ հայություն մնացել էր Ներգաղթի կանգ առնելու պատճառով:

Սիրով և հարգանքով մորաքրոջս 7-հոգանոց ընտանիքը սիրով ցանկություն հայտնեցին, որպեսզի իրենց մոտ մնայի մինչև 15 օր անց զինվորության վիճակս պարզվեր և պարտավոր չլինեի երկրորդ անգամ հետ վարադառնալ: Ուրեմն 15 օրից պիտի ինձ ներկայացնեի, որ տեսնեի զինվոր կզնայի թե ոչ, ո՞վ գիտեր թե հավանաբար վիճակահանության ընթացքում անունս դուրս կմնար և զինվորություն պետք չէր գնայի, սակայն զինվորության ավարտական վկայական կստանայի և կսկսեի աշխատանք փնտռել. ուստի համոզվեցի մնալ:

Ահվազ քաղաքում հենց ՔԱՐՈՒՆ գետի արևելյան մասում, մորաքրոջս ընտանիքի նման մի քանի հայ ընտանիքներ էին ապրում որոնք ունեին իրենց սեփական գործը և Նավթային Ընկերության հետ որևէ կապ չունեին: Ասենք թե Մասջեդ Սուլեյմանի Նավթային Ընկերությունը Ահվազ քաղաքի հյուսիսում մի բաց անապատում Քարուն գետից մի քիչ հեռու իր կենդրոնական շենքն էր պատրաստել և իր գրագիր ու բանվոր դասակարգերի համար Ահվազ քաղաքից դուրս բայց ոչ հեռու շենքեր էր կառույցել այնպես, որ այս ամենը ազդեցություն չուներ Ահվազ քաղաքի և Ժողովրդի ապրելակերպի վրա և Մասջեդ Սուլեյմանի դասակարգային խտրականությունները այնքան զգալի չէին, բայց և այնպես Նավթային Ընկերությունը ուներ իր դասակարգային ակումբները, սինեմաները և Ընկերության զանազան ապրանքներների և ուտելիքների առանձին խանութները: Բանվորներին փայտե աթոռներով ավտոբուսներ էին հատկացվել իսկ գրագրներին փափուկ կաշվից պատրաստված աթոռներով: Ահվազ քաղաքում մի նորություն նկատելի էր որ հույս էր ներշնչում և այդ նորանոր Ամերիկյան և Եվրոպական հաստատություններ էր: Խոսքը չմոռանանք որ այդ 15 օրվա սպասողական սրտատրոփ վիճակում մորաքրոջս տան շրջակայքում հայ տղաների էի փնտրում, դրացիներից շատերը պարսիկ ընտանիքներ էին կամ էլ խանութներ.

օրինակ 24-մետրանոց փողոցը (պարսկերենով բիստ-օ-չահար մեթրի փողոց) ցածից գլուխ միջև Քարուն գետի կամարով կամուրջը գրեթե լրիվ անձնական խանութներ էին, մեծ թվով ավտոմեքենաի նորոգման համար և աչքի ընկնող մեծ հաստատություններ աչքի չէին ընկնում:

Դե այսպես ամաչելով համոզվեցի միջև վիճակահանության կատարվելը Ահվազ քաղաքում մորաքրոջ նեղություն տայի: Ամեն օր փողոցներում շրջում էի, հայ տղաներ փնտրելով, միջև որ մի քանի օր անց մի սափրիչի դռան մոտով անցնելիս հայ մարդու ձայն լսեցի, որ ասում էր. «գլուխտ ձախ պտտե»: Մանրամասնությունը դժվար է հիշել, բայց իմացա, որ այդ ձայնը ջահել մարդու ձայն էր: Ուրախությունից սիրտս ոկսեց թո՛վոպ այն մտքի համար որ մտածեցի գործի անցնելու համար այդ մարդը լինելով սափրիչ՝ շատ մարդիկ պիտի ճանաչի և կարող եմ նրանից տեղեկանալ Ահվազ քաղաքի մասին: Մի կես ժամ խանութի մոտակայքում քայլեցի որ տեսնեմ երբ առիթ կլինի սափրիչ մարդը դուրս գա որպեսզի առիթ ունենամ նրա հետ խոսելու:

Այս ու այն կողմ էի նայում և մտածում որ ես այսքան ամաչկոտս ինչ պիտի հարցնեմ, երբ աչքս մի ուրիշ խանութի ընկավ որի ցուցափեղկի վրա պարսկերենով գրված էր «Զաֆֆաշի Սաքո» (Սաքո կոշկակարանոց): Մտածեցի արդյո՞ք նա հենց մեր Մասջեդ Սուլեյմանի կոշկակար Սաքոն է թե մի ուրիշը: Մոտեցա և ականջ դրի, խանութի մեջից պարսկերեն խոսակցություն լսեցի, սպասեցի միջև մեկը դուրս գար և իմ բախտից մի հաճախորդ ծիծաղելով և շնորհակալություն հայտնելով դուրս եկավ և մի քիչ հեռացավ: Ամոթիսածությամբ կիսաբաց դուռը բացեցի և տեսա մեր Մասջեդ Սուլեյմանի կոշկակար Սաքոին: Ոչ ես բարևեցի ոչ էլ ինքը, մի քիչ պաշ-պշվեցինք, գրկախառնվեցինք ու նստեցինք՝ ինքը իր ՈՒՄՏԱ Սաքոի տեղը ես էլ հաճախորդի: Ապա հենց ինքը ասաց, որ Մասջեդ Սուլեյմանի

Նավթային Ընկերությունը Ահվազ է փոխադրվելու և հայերից շատ-շատերը պիտի Ահվազ քաղաք գան: Ընկերությունը Ահվազ և Թեհրան քաղաքներ էր փոխադրվելու, և Աբադան, Աղաջարի ու Օմիդիեի գործողների թիվն էլ շատ պիտի պակասեր: Հայության ամենաշատ կրթվածները Աբադան էին աշխատում և Թեհրան պիտի գնային ու հայերից շատերն էլ, որ լավ վիճակ չունեին կամ լավ գործ չէին տիրապտում պիտի Նոր Ջուղա գնային, որովհետև Ընկերությունը իրենց պատասխանել էր և օտար տեղ գործ չկար:

Թեև Սաքոն մի քանի տարով ինձանից մեծ էր, բայց իր ընտանիքը հենց նույն պատճառներով Չարմահալի Հաջի-Աբադ գյուղից էին Մասջեդ Սուլեյման եկել և մենք տարիներ նույն շրջանում էինք ապրում, որ նկատեցինք Սաքոն մի քանի ժամանակ է Մասջեդ Սուլեյմանը թողել և եկել էր Ահվազի այս խանութն էր բացել: Արդեն ինքը ասաց, որ իմ մորաքրոջս լավ ճանաչում էր և իր լավ հաճախորդներից էր: Ուրեմն մի քիչ էլ իմ մասին պատեմելուց հետո Սաքոից հարցրի Ամերիկական հաստատությունների և գործ ճարելու մասին և ինքը առանց մտածելու ասաց «Էտ Ընկերությունների մեծամեծների կնիկները թամամ¹ Համոի մուշտարիքն են. Համոից հարցրու: Արդեն իմացա որ գուցե այդ «գլուխտ ձախ պտտե»-ի ասողը հենց ինքը լինի:

Եվ այսպես զինվորության վիճակահանությունը մտքիցս թռավ և ուրախ-ուրախ Սաքոին ցտեսություն ասի մինչև Սափրիչ Համոի հանդիպելը:

Մինչև վարպետ Համոին հանդիպելը վարպետ Սաքոից խնդրեցի, որ նոր գործատեղերի մասին ինձ տեղեկացնի. նա էլ իսկույն ասաց «Դեզ» անունով մի ընկերության մասին է լսել և կարծում է, որ Զարուն գետի արևմտյան մասում է գտնվում: Անհապաղ ճամփա ընկա:

¹ - Լրիվ:

Քարուն գետի կամրջով անցա և հարց ու փորց անելով վերջապես գտա այդ Դեզի շենքը: Դիմեցի Դեզ ջրամբարի Պարսկա-Ամերիկյան ընկերությանը (անգլերենով “DEZ DAM PROJECT”) և աշխատանքի դիմումնագիր խնդրեցի: Պարսիկ կառավարիչը միայն հարցրեց իմ կրթության մասին, և ինձ դիմումնագիր տվեց: Մինչև 8 էջանոց երկու լեզվով կեսը պարսկերեն, կեսը անգլերեն դիմումնագիրը լրացրի հոգիս դուրս եկավ, ապա *զինվորականի* հարցին հասնելով երկար ու բարակ չարչարանքով մտածեցի «Բա տեր Աստված զինվորական հարցի պատասխանը ինչ գրեմ, բա ոնց ԱՅՈ ստեմ եթե դեռ չեմ ավարտել. իսկ եթե ՈՉ ասեի աշխատանք չէի ստանա»: Երկար-բարակ մտածելուց հետո, նույնիսկ վախեցա գրել ՈՉ, վերջապես որոշեցի ԱՅՈ և ՈՉ-ի հարցը դատարկ թողնել, մտածելով որ եթե բախտ ունենայի և ինձ կանչեին, կասեի մոռացել եմ պատասխանել ուստի հույսս զցեցի Աստծուն: Երբ վերջացրի գրելը, աշխատողները արդեն ճաշի էին գնացել: Միայն մնացել էր շենքի դռնապանը, որը իրավունք չուներ դուռը բանալ:

Դրսում սպասեցի մինչև դիմումնագրի պատասխանատուն ճաշից վերադարձավ և իր մեքենայից ցած գալով գլուխը զցեց քայլելով դեպի ընկերության շենք. իր հետևից վազելով և ամաչելով ազգանունը կանչեցի «Ջենաբե Մոեզի... Ջենաբե Մոեզի» այսպես իրեն հարգելի պարոն «Մոեզի» ազգանունով կանչելով իմ լրացրած խնդրագիրս ձեռքս առած երեք անգամ կանչելուց վերջապես անդրադարձավ ու գլխով արեց հետևեմ իրեն: Շենքը ներս մտնելուց դռնապանը պարոն Մոեզիին հարգանք ցույց տալով իր նստած տեղից կանգնեց և պարոն Մոեզիին առանց ինձ նայելու ասաց «թամամ քարդի ռույե միզ բեզար, խաբարեթ միքոնիմ»: այսպես ասելով որ «Եթե դիմումնագիրը վերջացրել ես, սեղանի վրա դիր, պետք եղած քեզ հետ կը կապվենք»: Շնորհակալություն հայտնելով դուրս եկա և նույն ճանապարհով քայլելով վերադարձա վարպետ Սաքոի խանութ, հուսալով որ կը հանդիպեմ, կանացի սափրիչ վարպետ Համոին: Արդեն մոտենում էի մեր ընկեր Սաքոի խանութին երբ հայերեն խոսակցության ձայն լսեցի

և շատ հոգնած բայց ուրախ-ուրախ ներս մտա և բարևեցի: Ընկեր Մաքրոն առանց սպսելու վարպետ Համոին ծանոթացրեց ու ասավ «Էս էլ մեր Մամուքցի Համոն, որ աշխարհից լուր ունի»:

Խսանութի անկյունի հանախորդների տեղը գրավելով, երկար ու բարակ զրուցեցինք և որքան ուրախալի էր որ Չարմահալ գաւառի Մամուքա գյուղից եկած այդ հողագործ բանվոր ընտանիքի զավակը քիչ կրթությունով և առանց որևէ արհեստից գաղափար ունանալու մի հայի մոտ սափրիչ էր վարձվել և կարճ ժամանակում, կամաց-կամաց կանացի սափրիչության մասնագետ դարձել և իր համար անկախ խանութ բացել: Երբ իմ ուրախությունը տեսավ, մեր համագավառացի հարգելի մասնագետ սափրիչ Համոն պատմեց մի ուրիշ հաջողակ մամուքցի համագյուղացու մասին, որ նա էլ իր նման սափրիչի աշակերտությունից, իր մասնագիտությունը փոխել և «Սեդքո/ Sedco» անունով Ամերիկյան ընկերության մեջ գործի անցել և ճարակությամբ ինքն էլ կարճ ժամանակում այնքան էր առաջադիմել որ բարձր գնահատանքի էր արժանացել և մեծ պաշտոնյա էր դարձել, նաև ասաց, թե լավ կլիներ ինձ ծանոթացնելով նրան, ինձ էլ աշխատանքի հրավիրեն այդ ընկերությանը:

Հարգելի վարպետ Համոն նաև ասաց որ Ամերիկյան ընկերությունների մեծամեծների կանայք իր հանախորդն են և որոշներն էլ հայ մեծամեծեր են ու ինքը կարծում է առաջին մեկի հետ որ իմ մասին խոսի, պարոն Հրանդ Մինասյանի տիկինն էր լինելու: Վարպետ Համոն խոսելով պարոն Մինասյանի մասին պատմեց թե այն լավ Ջուդայի տղերքից է, որ շատ օտար ջուղացիների նման Հնդկաստան է կրթվել և «Երկրաբանություն» մասնագիտության համար Հնդակաստանից Անգլիա էր գնացել և այդքան հաջողությունից հետո վերադարձել էր Պարսկաստան: Վարպետ Համոն ասաց, որ շատ և շատ հայ անձնավորություններ մեծ պաշտոններ ունեն նոր բացված ընկերությունների մեջ և լավ մարդիկ են, օրինակի համար հենց այս պարոն Մինասյանն որքան օգտակար է գտնվում Ահվազ քաղաքի

հայկական նորակառույց եկեղեցու, 6 դասարանոց դպրոցի նորոգումի և միության այլ աշխատանքներին:

Երկար խոսք բացվեց Ահվազ քաղաքի լավ և հաջողակ և օգնող հայ մարկանց մասին օրինակ՝ Նեգրոյի (Negro) Վազգենը, որ հենց այդ անունով մեծ խանութ ուներ «24 Մեթրի» անունով փողոցի գլխին հարյուրավոր օտարազգիներ, հատկապես ամերիկացի ու եվրոպացի հաճախորդներով, կամ Մուկուչը (Կակալ մականունով), որ Վազգենից մի քիչ հեռու գեղեցիկ նպարավաճառի կենտրոն ուներ կամ Մինասը (Ճեկի Մինաս մականունով) որ հսկա մեխանիկի կենտրոն ուներ «30 Մեթրի» անունով փողոցի վրա. այս անուններից բացի նորեկներ կային Հրանդ Մինասյանի նմաները և կամ Հովսեփը որ Օմիդիյե քաղաղից էր տեղափոխվել և ձեռնբաց մարդ լինելով, թե՛ հայկական և թե՛ պարսկական դպրոցներին էր օգնություն հասցնում: Ասենք թե Ահվազ քաղաքում մինչև վեցերորդ դասարան հայկական դպրոց կար, որ մի քանի տարի առաջ էր սարքվել հենց այս տեղական ուժերով, բայց Նավթային ընկերության տեղափոխումը Մասջեդ Սուլեյման, Ադաջարի, Օմիդիյե պատճառ դարձավ օտար տեղերից դեպի Ահվազ քաղաք գաղթը և այնքան հայության թիվը շատացավ, որ եկեղեցու պակասը կար և վարչությունը որոշեց նոր եկեղեցի կառուցել: Այսքան կարելի է ասել որ այդ հին ու նոր եկող մարդկանցից հազիվ մի երկուսն էին կուսակցական: Հայապահպանման և ազգասիրական շունչն ու հոգին այնքան պարզ ու նկատելի էր որ միայն կարելի է ասել «Ոսկի սերունդ»: Մի օտար բան էլ նկատելի էր, որ այդքան մեծ թվով նորեկ հայեր եկան և փոխադրվեցին Ահվազ քաղաք, բայց Աբադան քաղաքից մատահաշիվ ընտանիքներ փոխադրվեցին Ահվազ: Աբադանի Նաֆտային հայ և պարսիկ աշխատավորներից շատերը ավելի կրթված լինելով փոխադրվեցին մայրաքաղաք Թեհրան, Նավթային Ընկերության տնօրինության կենտրոն:

Եվ այսքան գրույցներից հետո, Վարպետ Համոն ասաց, որ պարոն Հրանդ Մինասյանը կարող է ինձ տեսնի հինգշաբթի առավոտ, բայց ժամը չպարզեց: Այս անսպասելի ուրախությունից վեր-վար թռա ու

վարպետ Համոին համբուրեցի, բայց Համոն ասաց «Լավ է հալա տեսնենք մե տեղ կհասնենք թե չէ»: Սրտատրոփ ու լեզուս կապ ընկած հինգշաբթի օրը հասավ և պարոն Հրանդ Մինասյանին հանդիպելու հույսով գնացի դեպի G.S.I. (Geological Seismology Institute՝ Երկրաբանակա-սեյսմիկ ինստիտուտ) անունով մի Պարսկաստանիկյան ընկերություն, որը գտնվում էր հենց Ահվազ քաղաքի «24 Մերթի» անունով փողոցի վրա՝ Զարուն գետից ոչ շատ հեռու: Զայլած ու քրտնած ինձ տեսնելով հրամայեց նստեմ և սեղանի վրայից անձեռոցիկը երկարացրեց, որպեսզի քրտինքս մաքրեմ ապա սառը ջուր հրամցրեց և ես սովորաբար ամաչկոտ լինելով, ամեն հարցին «ոչ մերսի» ասեցի: Մի քիչ ընտանիքի և ընկերների և դասերից խոսելով հարցրեց «Չինվորությունդ վերջացրել ես» և այս հարցի վրա կանգ առա մի քիչ էլ քրտնեցի և ասեցի «դեռ չէ»: Ինձ հանգստացնելու համար ասավ «կարելի է մի զբաղմունք գտնեմ համարդ, բայց ավելի լավ է զինվորությունդ լրացնես, ու կգաս իմ մոտ»:

Այս պատմական ու հրաշալի Նոր Ջուղայի քաղցր ու հանելի բարբառը լսելով սիրտս մի քիչ տխրեց և նույն ժամանակ հույսով լցվեց հիշելով իր վերջին խոսքը «ՈՒ ԿԸ-ԳԱՍ ԻՆՉ ՄՈՏ»:

Երկու-երեք անգամ շնորհակալություն հայտնելով հետև-հետև քայլելով «ցտեսություն» ասելով դուրս եկա և չգիտեմ ինչպես ինձ հասցրեցի վարպետ Մաքոի խանութը և բարևի փոխարեն ասեցի «զինվորություն, Մաքո ջան զինվորություն» և գնացի դեպի ջրի բաժակը:

«Բան չկա տղա ջան, բան չկա, նստե»: Մի քիչ նստեցի պատմեցի և շնորհակալ լինելով դուրս եկա: Արդեն զինվորական հագուստը երևակայում էի և մի երկու օր անց պիտի ինձ ներկայացնեի:

Մասշեղ Սուլեյման...

Չինվորության հայտարարված նշված օրվա իրիկնասպահի ժամի 3-ին, տխրության և ուրախության մեջ մորաքրոջս «բարի տա Աստված» ասելով, աղոթքների ու օրհնանքների շունչը հետս, ինձ ներկայացրի Ահվազ քաղաքի զինվորական **ՈՒՄՄԱՆ ԶՈՐՔԻ** բաժնին: Չինվորական շենքի առջևում ասեղ գցելու տեղ չկար, հարյուրավոր մարդ, ծեր ու ջահել, ծնողներ և բարեկամներ եկել էին և բոլորը չափազանց հուզված էին: Աղոթքի ու աղաչանքների ձայներ էր բարձրացել երկինք, Աստծուց մինչև մարգարեներ ու սրբեր: Այսքան աղոթքներից մեզ էլ բաժին հասավ երբ մի տիկնոջ ձայն բոլոր Մասշեղ Սուլեյման քաղաքից եկած զինվորականների ծնողների անունից աղթոթեց, հուզիչ էր մերոնց պատկերը: Այդ տիկնոջ օրհնակին օտար ձայներ միացան և մյուս փոքր ու մեծ քաղաքների ծնողների անունից իրենց աղոթքի ձայնը բարձրացրին: Մի պահ թվաց, թե կարծես մեծաթիվ ուխտավորների միջից պիտի անցնեի և ինձ ներկայացնեի: Վերջապես աստիճանները բարձրացա և մի շարք զինվորական հսկիչներին ներկայացման թուղթերը ցույց տալով միացա 320 հոգի ինձ նմաններին որ ներկա էին գտնվել վիճակահանությամբ մեր զինվորական ճակատագիրը պարզելու՝ կամ վիճակահանությամբ ազատվելու էինք կամ գնալու էինք զինձառայության:

Հավանաբար ժամեր անցան մինչև սպանների վազվզոցը վերածվեց հանդարտ քայլերի և մեզ 8 շարքի կանգնեցրին, ամեն մի շարք 40 հոգի և ամեն շարքի մոտ մի հսկող զինված սպա հատ ու կենտ հրամաններով շարքերը հսկում և պատրաստում էր վիճակահանության համար:

Եվ այսպես 8 շարքերը պարսկական այբուբենի հերթակա-նությամբ նշանակվեցին և վերջապես ճակատագրական պահը հասավ, երբ ձեռքի բարձրախոսով, տարբեր անուններ կանչելով, չորս շարք դուրս մանացին և մյուս 4 շարքը նշանակվեցին «ՉԻՆՎՈՐ» և այսպիսով սրտի տրոփյունները կանգ առան և այդպիսով մեր շարքը

կանչվեց զինծառայության: Ակամա տանկերի հետևից վազող զինվորի պատկերներ էինք երևակայում մեր մտքերում. մի քանի փսփոցներ էլ լսվում էր `«ավանդ, ավանդ», որը արգելվեց սպայի կողմից:



Շիրազ 1961- դեպի զինվորություն, Ժամը նստածն է

Բոլորիս մի ցուցակ տալով, հայտարարեցին որ.

- Նրանք որ ի վիճակի են, միայն ցուցակի մեջ գրված պիտույքները վերցնեն և մինչև Ժամը 23-ը վերադառնան զինվորանոց:

- Ովքեր ձեռնահասություն չունեին ցուցակի միջի անձնական իրերը պատրաստելու կամ այս քաղաքում որևէ հարազատ չունեին, պիտի հայտնեին, որպեսզի զինվորանոցում իրենց անձնական իրեր տրվեին:

Փոքրաթիվ մի քանի ձեռք բարձրացան, որոնք մի շարք կազմեցին և մնացածիս իրավունք տրվեց քաղաքում, մեր հարազատներին հրաժեշտ տալու և նույն գիշերը Ժամի 23-ին ներկայանալու զինվորանոց: Հայտարարեցին որ այս զինվորանոցից ավտոբուսով պիտի ուղարկվեինք օտար քաղաք: Մեր ընտրված չորս

շարքերը առաջին շրջանի **ՈՒՍՄԱՆ ՉՈՐՔ**-ի զինվորներն էինք լինելու և խտացած 6-ամսյա զինավարժության էինք ուղարկվելու Պարսկաստանի Շիրազ քաղաք:

Երբ դեռ շվարած այս ու այն կողմ էինք նայում, լավեց բարձրախոսի ձայնը և նշանակված սպա՝ «**Բորեյրի**»-ն ձեռքի բարձրախոսը բերանին մոտեցրեց կարդալով իր վերջին հայտարարությունը.

«ՈՒՍՄԱՆ ՉՈՐՔ-ի առաջին շրջանի ընտրյալներ՝ Իմացեք՝ որ մեծն թագավորի Սպիտակ Հեղափոխության նպատակները մեր հայրենիքի զարգացման և բարգավաճման համար է, ընտրվել եք իբրև Ուսման Չօրքի առաջին զինվորներ, պիտի սրտով ու հոգով նվիրվեք այս սրբազան նպատակին և ազնվորեն ծառայեք մեր ժողովրդին ձեր նախընտրած գյուղերում... կրթեք և դաստիարակեք փոքրիկներին և ուղեկցեք մեծերին, այդպիսով կատարելու եք մեր Թագավորի նպատակները իրականացնելու փափագը և իմացեք, որ այդ նպատակների համար ուլքեր որ ձեզ խանգարեն կամ որևէ դժվարություն ստեղծեն, իսկույն կապվեք ձեր նշանակված դեկավարի հետ, որի հետ միասին հարցերը լուծեք: Դուք պիտի գյուղացի երեխաններին գրել կարդալ, խաղալ ու սպորտ սովորեցնեք և դեպի լույս աշխարհ տանեք, եթե դպրոց չունեն, գյուղացիներին համոզեք ձեզ հետ ձեռք-ձեռքի տան և միասին դպրոց կառուցեք, ձեզ կր-սովորեցնեն ինչպես քարոզեք գյուղացի մարդկանց, որ իրենց առողջ պահեն և իրենց քաջալերեք աղբյուրների և քարիզների ջրերից խմեն և կերակրեղեն պատրաստեն և գետերից ջուր չխմեն, գյուղի փողոցները և իրենց տները մաքուր պահեն: Լսե՛ք, լավ լսե՛ք, գյուղացու հետ ազնիվ եղեք, իրենց հետ բարի վերաբերմունք ունեցե՛ք: Այս ամենը ձեզ սովորեցնելու են զինվորանոցներում: Հիշե՛ք և իմացե՛ք որ թագավորի կողմից հրաման է տրված ծայրից-ծայր մեր ազիզ երկրի բոլոր նախարարություններին որ ձեր նման **ՈՒՍՄԱՆ ՉՈՐՔ-ի** զին-ծառայողների հետ ուղղակի համագործակցություն ունենան և դժվարությունները հաղթահարեն:

Եվ այս հրաման է: Կեցցե՛ մեր ամենասիրված թագավորը.
 Հուռուռասաա՛...: Հիմա 3 անգամ հուռա սսե՛ք... Հուռա՛... հուռա՛...
 հուռա՛...: և սպա «**Քորեյրի**»-ն հուռաներից հետոյ շարունակեց...

Ուրեմն 4-5 ժամ միջոց ունեք ձեր անձնական իրերը վերցնելու:
 Այս զինվորանոցը գտնվում է Ահվազ քաղաքի Քարուն կամրջի
 մոտակայքում. օրը երկար է և դեռ ահագին լույս կա մինչև մթնելը...»:

Ժամանկը կարճ էր, արագ քայլերով Քարուն կամուրջը անցանք
 մտանք քաղաք, մի քանի հոգի ձախ ու աջ գնացին ու ես «24 Մեթրի»
 փողոցը վերև քայլեցի, մորաքրոջս ընտանիքին «մնաք բարով» ասելով
 խնդրեցի մերոնց լուր տան, որ «բախտի բերմամբ թե պատահմամբ»
 վիճակահանության խաղը ինձ զինվորության կանչեց: Չոհաբերող ու
 կարոտալի Մորաքրոջս ընտանիքը տխրեց ու շշմեց ինչ ասել,
 հասկանալով իրադրությունը՝ մի քիչ կատակներով հարցը փոխեցի և
 վերջապես հրաժեշտ տվի: Ընկա համբուրների և աղոտքների մեջ, մի
 քիչ էլ «տաքսի դրամ» ստիպելով գրպանս լցրեցին, ազնվական
 մորաքրոջս ընտանիքը բարի զինվորություն մաղթելով՝ կապույտ
 չամադանս¹ ուտելիք-չարագ լցրեցին և բարի վերադարձ մաղթեցին և
 խոստացան մերոնց էլ, որ դեռ Մասջեդ Սուլեյման էին մի ձև լուր տան:
 Մտքովս անցավ որ ... «դե մեր տներում հո թելեֆոն չկար, գուցե
 շոֆեր Ապրահամի միջոցով մերոնց լուր կտային»: Ապրահամին
 Նավթային ընկերությունից դուրս էին արել իր Անգլիացի մեծի
 ԱՆԱՐԴԱՐ խոսքը չսելու համար և որոշել էր անկախանալ և իր
 համար անձնական գործ ստեղծել... այդպիսով շոֆերություն
 իմանալով, իր 1965-ի Շեվրոլեթ կապույտ ու ճերմակ գեղեցիկ
 մեքենայով գրեթե ամեն օր Մասջեդ Սուլեյման և Ահվազ քաղաքների
 միջև, հաճախորդներ էր տեղափոխում, բայց միայն հայ:

Ամենաբարի ու զոհաբեր մորաքրոջս ձայնն է դեռ հնչում
 սկանջներումս, որ «ջանիտ մեռնեմ...» ասելով ու աղոթքներով, ինձ ու
 մերոնց բարին էր ցանկանում: Եվ այդպես... ինքնավստահ քայլերով
 մնաս բարով ասեցի և առանց ժամանակ կորցնելու հասա վարպետ

¹ -Ճամպրուկ:

ընկեր Մաքոյի խանութը, որը դեռ բաց էր: Ընկեր Մաքոն կոշիկ կարելու պահին, կես ժպիտը երեսին գլուխը բարձրացրեց և պատիկ կապույտ չամադանս տեսնելով, ժպիտը կորցրեց ու տխրեց միայն ասաց «էյ դադ»: Հանգստացնելով իրեն ասացի «Մաքո ջան, տեսար պարոն Մինասյանը ինչ ասաց, ԿԸ ԳԱՍ ԻՄ ՄՈՏ»: և չամադանս վերցնելով վարպետ ընկորոջս ասեցի՝ «Ադա ջան եկել եմ մերսի ասեմ, զինվոր եմ գնում, էտ էլ ինչ Մեփահե Դանեշ, Ուսման Չորք », և վարպետ Ընկեր Մաքոյից խնդրեցի ինքն էլ վարպետ ընկեր Համոին իմ կողմից մերսի ու մնաս բարով ասի և կես կատակով ասեցի «Դե իրան ասա էլ չուզեցի քո տաք-տաք զրույցը կին հանախորդներիդ հետ խանգարեմ»:

Դեպի Քարուն գետի կամուրջը քայլելով, վերադարձա զինվորական կենտրոն և ինձ ներկայացրի սպա «**Բորեյրի**»-ին:

Տարիներ անց, երբ Անգլիայի Լոնդոն քաղաքի Սըրրի “London, Surrey” շրջանում, Աբադանից եկած մեր բարեկամ՝ հարգելի և սիրելի Անուշ և Թոնիենց տանը տաք-տաք զրուցում էինք Պարսկաստանի և Կիպրոսի հայության մասին և երանի էինք տալիս այդ ժամանակաշրջանի խաս ու հարազատ, ազնիվ ու գոհաբեր բարեկամության և ընկերության մասին, չգիտեմ ինչպես եղավ որ երեքս միասին բացականչեցինք«**ՈՍԿԵ՛ ՍԵՐՈՒՆԳ՝ , ՈՍԿԵ՛ ՍԵՐՈՒՆԳ՝**»:

Այստեղ, հուզմունքից և սիրով ու կարոտով լցված Անուշն էր որ երեսը շրջեց իր արտասուքները մեզանից գաղտնի մաքրելով:

Տասնյակ տարիներ անցան...տարբեր երկրներ ապրեցինք, հայ ու ոչ-հայի հետ աշխատեցինք ու շփվեցինք, տեսանք և լսեցինք...ու դեռ մինչև օրս այդ կարծիքին ենք մնացել...

Ուրեմն ուղարկվեցինք Ծիրազ քաղաք և Ամերիկյան սիստեմի դժվար բայց կարևոր զինավարժություն նաև ուսուցչական-կրթական վարժեցում ստանալու համար, առավոտյան ժամը 6:30-12:00-ը զինավարժություն, 12:00-ից մինչև 1:00-ը մեկ ժամ ճաշ և հանգստություն, 1:00-ից մինչև 4:00-ը հենց նույն զինվորանոցում

ուսուցչական դաստիարակչություն: Այդ օրերին Պարսկաստանի Շիրազ քաղաքի Ուսման Չօրքի գորանոցի պետն էր պարսիկ «Սարհանգ¹ Աֆջեի»-ն: Չինվորանոցի ամեն մի 40 հոգանոց խմբակի համար հատկացված էր հսկա սրահներ՝ փայլուն հատակներով և մաքուր պատերով, որտեղ 40 մահճակալ էին դասավորել մաքուր անկողիններով և ծածկված բաց մոխրագոյն բրդե ծածկոցով և բարձերի վրա ճերմակ ու մաքուր հուրհուրան սավանով: Ամեն զինվոր պարտավոր էր այս մաքրությունը պահպանել: Բացի ուրբաթ, ամեն առավոտ ժամը 5-ին դահլիճին արթնացնում էին և զինվորը պիտի լվացվեր, մաքրվեր, սափրվեր, մաքուր հագնվեր և պատրաստվեր, պիտի այսքան մաքրությունը ամեն առավոտ պահպանվեր, երեսներս սափրված, գլուխներս խուլույ, զինվորական ունիֆորմը մաքուր ու արթուկած, կոշիկներս մաքուր և պլպլան սև փայլով, պատրասվեին նախաճաշի, իսկ կես ժամ անց, պատրաստ կանգնել մահճակալի առաջ սպասելու օրվա սպաին ստուգում կատարելու համար:

Իրիկնապահին զինվորական արարողություններից հետո փոքր անց ընթրիքի ժամի շեփուրն էր հնչում, որ շարքերով ուտելիքների սրահ էինք դեկավարվում և նույն դեկավարությամբ վերադառնում կենտրոնատեղի (պարսկերենով՝ Ասայեշգահ), որտեղ ամեն մի զինվոր իր անձնական իրերն էր պահում իր մահճակալի տակ: Ընթրիքից հետո 5:30-ից մինչև 9-ը ազատ էինք անձնական գործերով- հարցերով զբաղվելու և մյուս օրվա համար մաքրություն անելու՝ մինչև 9-ի շեփուրը հնչեր և արդեն այդ ժամին պիտի մահճակալ մտած լինեինք: Չինվորական և զին-ուսուչական դասերը հենց տեղում էինք սովորում, որևէ նոր դաս հենց նույն օրին և նույն ժամին էր արձարծվում և այդ սիստեմով էլ մյուս օրը գոյություն չունեին: 12 կենտրոնատեղի կար և ամեն կենտրոնատեղի ուներ 2 զինվորական կապիտան և 3 ուսման կրթական ուսուցիչ: Մեր խմբի դեկավար Ամերիկայում զինվորությունը ավարտված պարսիկ Կապիտան «Բորեյրի» անունով, մի քանի առիթներով գրույցեց ինձ հետ և չգիտեմ ինչ պատճառով դեռ 3 շաբաթ

¹ - Գնդապետ:

զինվորությունից չանցած նշանակվեցի կենտրոնատեղի ղեկավար, և այսպես մինչև զինվորության վերջին օրը մնացի կենտրոնատեղի ղեկավարի պաշտոնում, որ մնացած 39 հոգուն հարգանքով, սիրով և երբեմն էլ պատժելով ղեկավարեցի մինչև մեզ բաժանեցին և ուղարկեցին մեր ծառայության վայրեր՝ հեռու գյուղեր:

Շիրազ քաղաքը հարուստ էր իր հրաշալի անցյալով, թագավորական պալատներով, գրականության և փիլիսոփաների դամբարան «Սաադիեհ և Հաֆեզիեհ», թագավորական պարտեզ Էրամի այգի «Բադե Էրամ», «Մասջեդ Շահե Չերադ», ամենից ճանաչված Պերսպոլիս թագավորական նստավայր, թագավորական հանգստարան և գերեզմանոց ժայռերի մեջ քանդած «Նադե Ռոստամ» անունով: Փիլիսոփայական և Սուլիզմի կենտրոնը՝ հենց Շիրազ քաղաքի հյուսիսային լեռներում դեռ վառվուն էր Բարա-Քուհի դերվիշների բնակարան-աղոթարանը, որտեղից Դերվիշները իրենց դերվիշային զգեստը հագած, սև կաղնի փայտից քիսականման բարակ շղթայով քաշ ընկած ուսից (պարսկերենով կոչվում է «Քաշքու») և սիմվոլիկ բարակ ու լայն ձիու թամբի նման ուրագը երկաթյա և ոսկեզույն (պարսկերենով ասած՝ «Թաբարզին»): Այս Քաղաքի լեռներից քաղաք շրջապտույտ անելով դերվիշությամբ մուրացկանություն կանեին ամեն դուռ խփելիս փիլիսոփաներ «Հաֆեզ»-ի և Նիշաբուրցի «Շեյխ Աթթար»-ի պոեզիա ու աղոթք, Աստծո փառաբանանք կմրմնջային՝ տնացուն օրհնելով և ինչ փող ու նվեր որ ստանային կվերդարնային իրենց վայրը, դրանք չքավորներին բաժանելու համար: Այս հրաշալի մարդկային արարմունքը մենք մեր ազգի մեջ այնպես էլ գոյություն չունի, գուցե Սալմաստեցի ՔԱՎՈՐ ՊԵՏՐՈՍԻ-ին կարող ենք նմանացնել:

Այդ տարիներին Ամերիկայի կառավարության կողմից մասնագետներ էին հրավիրված (Point 4 անունով) հողագործության զարգացման ծրագրով, և հողագործական և անասնապահության նորանոր գիտություններով և տեխնիկայով, աշխատում էին Պարսկաստանի Շիրազ քաղաքի շրջակա գյուղացիների հետ՝ նրանց սովորեցնելու

նորանոր սիստեմի ավելի արդյունավետ հողագործական բոլոր մարզերում արդյունաբերական նոր ձև ու մեթոդները և մեզ Կրթական-ուսման զինվորներիս շրջապտույտի էին տանում այդ գյուղերում և մոտկից ծանոթացնում արդյունավետ մեթոդների հետ:

Այդ հսկա գեղեցիկ եռուն-գեռուն քաղաքում փոքրաթիվ հայությունը կազմվում էր փոքրաթիվ ընտանիքներից: Հոգին լուսավոր՝ Մամուքա գյուղի Տեր Մինաս քահանան և Տերուհին միայն հայկական եկեղեցին էին պահում շաբաթը մի օր, կիրակի օրերը կարճ պատարագ անում և իրկնապահիները կարճառոտ աղոթքով մոմ վառում և եկեղեցուն շունչ տալիս: Ափսո՛ս շատ ափսո՛ս:

Վերադառնալով ծառայության... առաջին 3 ամիսը դաժան և դժվար ու կառուցողական զինվորությանը հաղթահարելով արդեն մյուս 3 ամիսը մի հանգիստ շնչելու առիթ ունեցանք ուրբաթօրյա արձակուրդին, հանգստանալու և ազատություն վայելելու և այս ժամանակի ընթացքում միայն կարողացա մեկ կիրակի ժամանակ գտնել և այցելել Տեր Մինասին և Տիրուհուն: Թե ինչ ազգային հարստության կորուստ զգացի միայն Աստված իմանա: Տեր Մինասի զավակները 2 տղա 1 աղջիկ արդեն Մասջեդ Մուլեյմանից Ահվազ քաղաք էին փոխադրվել: Տեր Մինասը ու տիրուհին իրենց զավակների և թոռնիկների մասին այնքան սիրով ու կարոտալի աղոթներով խոսեցին, որ թվաց թե արդեն կողքի պատին կպած եկեղեցու մեջ մոմերի առաջ սրբերն իրենց օրհնանք էին բաժանում: Անբացատրելի էր սրբացած Տեր Մինասի այդ լրիվ ճերմակած մորուսն ու գլուխը և տիրուհու աղոթքի մրմունջները: Աղաչեցին մնամ իրենց մոտ մի հաց ու պանիր կիսեմ, հենց Տիրուհու պատրաստած արբեցող չայով էլ գոհ մնացի: Երկար գրույցից ժամանակս կարճ էր խնդրեցի տեր Մինասի աջը համբուրեմ, բայց ասաց «բալամ ջան, դու մերոնցից ես, արի գլխիտ մի էրկու բերան օշնանք կարթամ օր խերով բարով գործդ տեղ հասցնես»: Գլուխ կախեցի ու հենց այն զգացի որ Թադևոս մեծ պապս՝ ձեռքը գլխիս դրած լցնում էր իմ հոգին բարի ուժերով: Օրհնանքը ավարտելուց ասաց «Աստված օրհնի, բալամ ջան քանի

Էստեղ ենք արի գլուխ քաշե»։ Խոստացա նորից գամ, բայց էլ առիթ չեղավ, իրենց օրհնանքը մաշկիս վրա երկար մնաց, հույսով ինձ ներած լինեն։ Ապա... այդ հսկա եկեղեցու շենքը և բակը այդ քաղաքի բազարի մեջտեղում սրտիս ծանրություն արավ, կարծես մի երկու օր էր շունչս վառող մոմերի բուրմունքն էր հոտոտում, դժվար էր մոռանալ։

Վերջապես 6-ամսյա զինավարժության ծրագիրը խիտ էր բոլոր իր դժվարություններով, բայց հաջող ավարտվեց և շնորհանք ասել որ այդքան բազմաթիվ զինվորների մեջ գրեթե միայն ես էի ՀԱՅ։

Ուսման Չորքի վեց ամսյա զինավարժությունը ավարտման վերջին օրերին մեզ հայտնեցին մեր ծառայության գյուղերի անունները։ Ես ցանկացել էի ծառայել որևէ մի հայաթափ կամ հայաբնակ գյուղում որևէ մի գավառում, Չարմահալից ու Փերիայից բռնած մինչև հյուսիսային Ուրմիա և Սալմաստ։ Ինձ բախտ վիճակվեց ծառայել Չարմահալ գավառի արդեն հայաթափ եղած Աղբուլաղ գյուղում, որտեղից 1946 թ. լրիվ գյուղը ներգաղթել էր Հայաստան և Աղբուլաղի կողքի Բողազի անունով մեծ գյուղից տեղի պարսիկ ընտանիքներ ներքաշվել էին Աղբուլաղ՝ շարունակելով հողագործություն և նախրապանություն։

Շիրազ քաղաքից, մեզ տեղափոխեցին Իսֆահան քաղաքի կենդրոնում ուսման գորքի կենտրոնավայր և հինգ օր արձակուրդ տալով հրամայիցին մեր ընտանիքներին այցելել և մեր անձնական անկախ ապրելակերպի իրեղենները դասավորելու և վեցերորդ օրը պատրաստ լինել մեկնելու դեպի մեր նշված գյուղերը։ Այսպես հինգ օր հորեղբայրներին, հորաքույրներին, մեծ պապ ու մեծ մամին նեղություն պատճառելուց հետո, մերոնց ուղարկած դրամով և զինվորության վեց ամսվա խնայողություններից մենակ ապրելու կահավորանքները լրացրի և պատրաստված վերադարձա զինվորանոց։

Մյուս օրը քսան երկու հոգուս զինվորական բեռնատարով փոխադրեցին ավելի փոքր գավառի կենտրոն Շահրեքորդ անունով մի փոքր քաղաքի զինվորանոց։ Չինվորական արարողություններից

հետո, մեզ բաժանեցին չորս հոգանոց խմբակների, երեք զինվոր մեկ ղեկավարով և այնտեղից զինվորական «Ջիփ» մեքենաներով մեր ղեկավարը շոֆերի տեղը նստեց և քշեց դեպի արևելք Բորուջեն անունով մի քաղաք:

Մոտ կեսօրվան հասանք այդ Բորուջեն կոչված քաղաքի ուսուցչական կենդրոն և բոլոր քսաներկու զինվոր-ուսուցչականներս միացանք մի դահլիճում, որտեղ մեզ դիմավորեց Բորուջեն քաղաքի ժանդարմերիայի մեծը (իր Թավրիզի հատուկ քաղցր պարսկերեն-Ատրպատականի բարբառով և ժպտալից երկու ոսկե ակռեքը երևացնելով) և գավառի կրթական պետը որը ինքն էլ մեզանից վեց ամիս առաջ էր եկել Պարսկաստանի Ռաշտ քաղաքից: Նա էլ իր Ռաշտի քաղցրահունչ բառերով հարգանքի բարի գալստյան խոսքերով և Շահնշահ Թագավորի Սպիտակ Հեղափոխության վեց կեսանոց ծրագրերի գովասանքը կարդալով, մեզ մեր ծառայության բարձրագույն իդեալիզմի մասին խոսեց որ գրեթե Ուսման Չորքը այն ծրագրներից էր, որ մեր ժողովրդին պիտի հասցներ ԳԵՐ-ՔԱՂԱՔԱ-ԿՐԹՈՒԹՅԱՆ դարպասների մոտ:

Այս ճառերից՝ շոյված, բացականչեցինք...: Քիչ անց ղեկավարվեցինք հսկա ուսելիքի սեղանի և զինվորական կարգապահությամբ սնվեցինք և ամեն 3 հոգի իր ղեկավարով զինվորական «Ջիփ» նստելով ճամբա ընկանք դեպի մեր գյուղերը: Մոտ մեկ ժամից հասանք առաջին ծառայության գյուղ ՄԱՄՈՒՌԱՆ (պարսկերենով Մահմուրե), որը 1946-ին լրիվ հայաթափ եղավ, բարերախտաբար ներգաղթելով Սովետական Հայաստան: Գյուղը մոտենալիս նկատեցինք որ արդեն գյուղապետը և մի քանի ծերուկներ գյուղի առաջ այսպես կոչված «Ղալի Դուռ»-ում սպասում էին իրենց գյուղին նշանակված թագավորական հրամանագրով վարժված և մասնագիտացած ծառայող զինվորական-ուսուցչին: «Ջիփ»-ը կանգնեց գյուղի առաջ քահրիզից եկող առվակի պարզ ու վարար ջրի ափին և կարմիր աղյուսով սարքված զույգ ապակի պատուհաններով դպրոցի մոտ: Աղյուսից սարքած այս շենքը 1946 ներգաղթից առաջ

Չարմահալի Հայ ուսումնասիրաց մյուսությունը սարքել էր իբև անվճար բուժարան բոլոր շրջակայքի հայության համար և բժշկության ծառայությունը վճարվում էին Չարմահալի Միության ֆոնդից:

Մեր ղեկավարը իջնելով ջիպից մեզ էլ նշան արեց իջնենք և մոտեցավ գյուղապետին ծանոթացրեց Մամուռան գյուղի զինվոր-ուսուցչին: Բարի գալստյան և հարգանքի խօսքեր ասվեցին, կնիկները փախան՝ կորան, բայց տղամարդիկ բազմացան, շատացան և գյուղը գրկաբաց ընդունեց իր զինվոր-ուսուցիչին, իմ պարսիկ ռազմընկերոջ՝ ԱԼԻ ԻՐԱՆՓՈՒՐ-ին:

Մեր ղեկավարը միանալով գյուղի ընդառաջող խմբին տեղավորեց իր զինվորին նշանակված և հատկացրած իր տանը և վերադարձավ Ջիպի մնացած երկուսիս մեր նշանակված գյուղերը հասցնելու:

Այս պատկերը մեր երկու ջահել ու անփորձ զինվորի համար մտքի հանգստություն տւեց և երկուսս էլ տաք ու ջերմ զգացումով շարժվեցինք Արևմուտք՝ դեպի երկուսիս ծառայության գյուղերը, նախ իմը Աղբուլաղ և մյուս ռազմընկերոջս Մամուրա: Մեր ղեկավարը իմ գյուղի մասին շատ չնչին խոսեց ու անցավ բայց ընկերոջս նշանակված Մամուրա գյուղից շատ խոսեց ասելով՝ թե «այդ գյուղում դեռ հատ ու կենտ հայեր կան, գյուղապետի անունն էլ Մկրտում Քալանթար է, ասում են խելացի ու արդար է»: Հարցրի արդյոք Մամուրա գյուղն էլ իր դպրոցն ունի, ասավ «այո» հայերի գնալուց հետո Մկրտում Քալանթարն գյուղի հայ ու պարսիկ ժողովրդին հավաքեց և իբրև մի սիրող ընտանիքի հայր խրատեց, սիրեց և հրահանգեց ամենքը իրենց աչքը դպրոցի վրա պահեն, որ օտար դրացի գյուղերի նման չքանդեն: Երկու զինվորներս էլ հանդարտ լսեցինք և բան չհարցրինք: Ջիպը մեզ վեր ու վար գցելով և ճանապարհի հողոտ-փոշոտ օդը շնչելով. արդեն հատ ու կենտ կանաչ ծառերի մէջ գյուղի էինք մոտենում և մեր ղեկավարը խոսեց «ին համ Աղբուլաղ՝ ահա Աղբուլաղ գյուղ»:

Ինչպէս գիտենք, Պարսկաստանի հայաբնակ գավառներից, հատկապէս Փերիսից և Չարմահալից 1946 թվականին արտագաղթ

կատարվեց դեպի Մայր հայրենիք, այդ գյուղերից էին Չարմահալ գավառի **Աղբուլաղ** հայկական գյուղը, որի գաղթից մնացել էին երեք ցավալի, բայց ոգեշնչող հիշատակներ: Մեկը Գյուղի մեջտեղում եկեղեցին էր որ տեղի պարսիկ գյուղացին «Մասչեդ» (mzkit) էր օգտվում առանց փոփոխության և մյուսը քանդված ու փլված հին հայկական դպրոցն էր գյուղի արևելյան մասում որ անտերությունից միայն մեկ սենյակն էր կանգուն մնացել, որովհետև պարսիկ գյուղացիների ասությամբ իրենք հողագործության համար էին քաշվել այս գյուղը ոչ թե դպրոց ունանալու և այդքան ցանկություն չունեին նոր սերնդին կրթության տալու, ուրեմն մի երկու երեք տարի փակ էր մնացել, մի քանի տարի էլ այժ ու ոչխար էին պահել ու կամաց-կամաց դպրոցի դուռ, պատուհան ու կտուրի գերանները քանդել՝ վառելիք էին օգտագործել մինչև մի անկյունի սենյակն էր մնացել: Երրորդը գյուղի դրսում աղբյուրի մոտի ծառաստանն էր որ դեպքերի բերումով իմ զինծառայության ժամանակ հայտնաբերեցի հայերի հետ կապված ազգային մեծահոգությունը:

Հայաթափ **Աղբուլաղ** գյուղը տափարակ կանաչագարդ երկար տարածքի վրա էր կառուցված: Այս ժամանակ հատ ու կենդ մեքենանները հին ժամանակվա կարավանների ճանապարհների հետքերով էին գյուղերը երթնեկում և մինչև «Իրանի Իսլամական Հանրապետության» տարիներին որ ասֆալտապատվեցին գյուղերի ճանապարհները, մինչ այդ մեր զինվորական Ուսման Չորքի ծառայության օրերին ճանապարհերը դեռ հողոտ ու փոշոտ էին: **Աղբուլաղ** գյուղի աշխարհագրական դիրքը կարելի էր այսպես տեսնել... Արևմուտքում գտնվում էր մեծ թրքախոս Բոլդաջի գյուղը, որտեղից էլի դեպի Արեվմուտք բլուրներից անց գտնվում էր մի օտար հայկական գյուղ, որ մեծ մասամբ հայրենադարձվել էին բայց դեռ փոքրաթիվ հայ ընտանիքներ էին ապրում այս Չարմահալ գավառի **Մամուքա** գյուղում իր հարուստ պտղի ծառաստաններով, գյուղամեջ եկեղեցիով և գյուղի առջևում կառուցված դեռ շեն ու կանգուն դպրոցը: Այդ օրերին թեպետ պարսիկ ընտանիքներ էին ներքաշվել,

զնացող հայերի տեղը բռնել, բայց դեռևս Գյուղապետը՝ Քալանթարը, հարգելի Մկրտում Մանսուրյանն էր: Մամուքա գյուղից էլի դեպի Արևմուտք գտնվում էր **Հաջիաբադ** հայկական գյուղ, որ մասամբ հայրենադարձվեցին և դեռ փոքրաթիվ մնացողներ էին ապրում և աշխատում իրենց հայ գյուղապետ քալանթար, հարգելի Մինաս Եղիզարյանի ժամանակին:

Հյուսիսում էլ երևում էին բարձր բլուրները՝ իրենց կրծքին ունենալով **Տերտերիղալեն** իր մշտադալար երեք կանաչ ծառերով: **Հարավից** մեծ գետ էր անցնում որի մյուս ափում 1946-ին օտար հայրենագնաց հայաթափ **Սինագան** գյուղն էր զրկված հսկայական լեռնաշղթայով իր հպարտ **Քալլար** գագաթով: Սինագանից մի քիչ հեռու գտնվում էր արդեն փոքրացած «Վաստիգանի Ծամբը», որ ասում էին մոտիկ անցյալում այնքան ճոխ էր եղել դամիշներով և տարբեր ջրային անասուններով, որ ամեն տարի աշնանը շամբը կրակ էին տալիս վայրի անասունները հեռացնելու համար: **Վաստիգան** հայկական գյուղում մարդ չէր բնակվում, մնացել էր պստիկացած շամբով և հին ջրաղացը լեռների կրծքին փորված իր ջրհորով, որ նմանվում էր Հայաստանի **Գեղարդի** եկեղեցու փորած քարայրիներին: Օտար հիշատակելի վայրը **Վաստիգան** գյուղի գերեզմանոցն էր իր գյուղի քահանայի ամենամեծ գերեզմանաքարով, որ զարկելիս զրրընգ-զրրընգ արձագանք էր տալիս: Քարի վրա քանդակագործված էր «7 լիր թամբաքու է ծախսվի այս քարը բերելու քանդակագործել», այդ հսկա գերեզմանի կողքին գյուղի տիրուհու գերեզմանաքարն էր դրված, որ ավելի փոքր էր նույն գյուղի տերտերի զրնգան քարից.....

Արևելքից երևում էր մի օտար հայաթափ գյուղ **Մամուռանը**, որտեղ բլուրները միանում և բարձրանում էին մինչև ժայռոտ սարերի փեշերը գրկելով ոլորապտոյտ քարաքրոտ հին կարավանների ճանապարհը, որ արդեն մեքենաներ էին անցնում դեպի մեծ քաղաքներ, ինչպես Նոր Ջուղա և Իսֆահան: Այդ ափսոսալի Մամուռան հայրենյաց գյուղն էր որ 1946 ներգաղթի ժամանակվանից հայաթափ էր եղել և այնտեղում դրացի մեծ Գյանդոման գյուղից եկած

պարսիկ գյուղացիներով էր բնակեցված: Մամուռանը իր վարդագույն աղյուսներից կառուցված չորս պարիսպներով բերդանման գյուղ էր:

Նույն գյուղի դրսում էլի աղյուսից կառուցված նախքան 1946 թվականը Չարմահալ միության ջանքերով կառույցված հիվանդանոցն էր որ արդեն պիտի վերածվեր Ուսման Չօրքի գյուղական դպրոցի: Մամուռան գյուղից դեպի արևելք էլի գետը անցնելով գտնվում էր Լիվասիան հայրենադարձ գյուղը, որտեղ արդեն բնակվում էին տեղի պարսիկ գյուղացիները: Այս գյուղում շատ մոտիկ լինելով մեծաթիվ պարսիկ գյուղ Գանդումանին, պահել էր իր վեց դասարանյա դպրոցը և արդեն կորցրել էր իր գյուղական տեսքը, որովհետև միացել էր պարսկական մեծ գյուղին՝ Գանդումանին: Այնտեղից մի քիչ Արևելք գտնվում էր 1946-ի հայրենադարձ մյուս քույր գյուղերը՝ Վերի Քոնարք և ցածի Քոնարք: Այս գյուղերը հարուստ էին մրգի ծառերով և լայնատարած մուք սրճագույն հողագործական դաշտերով: Այստեղից էլի դեպի Արևելք, ոչ շատ հեռու հայրենադարձ գյուղերի շարքի վերջին գյուղը Մուշիզան հայաթափ գյուղն էր, որ ինչպես բացված վզնոցի վերջին մարգարիտն էր և Մուշիզան գյուղով Չարմահալի գյուղացի հայության շարանը վերջանում և սկսվում էր Պարսկաստանի Չարմահալ գավառի Բախտիարի Չագոռս լեռնաշղթան:

Երթևեկության միջոցը դեպի մեծ գյուղեր կամ գյուղաքաղաք փոքրիկ բեռնատար մեքենաներ էին (pick-up) որ թե բեռ էին տանում թե հաճախորդ, բայց գյուղից գյուղ իմ հեծանիվից էի օգտվում, թեպետ որոշ ժամանակ էլ ոչխարատեր հարգելի Ղոլամ Ռեզա անունով անձն էր որ միայն գյուղի ձիատեր մարդն էր և ինձ ստիպում էր իր ձիուց օգտվել:



1962-Թ-ամը զինվորական հագուստով գյուղապետի հետ

Ես զինվորագրվել էի ծառայելու Ադրուլաղ գյուղում, որտեղ կառավարության հրամանով և գյուղապետի որոշումով, գյուղի հին և կանգուն եկեղեցուն կից մի գյուղացու բակի մէջ մեծ սենյակ էր հատկացված իմ համար և տանուտերը պայմանավորվել էր նոր զինվորական-ուսուցչին այդ տեղը հատկացնել մինչև այդ տարվա աշնան վերջը, երբ պիտի ամուսնացնեի իր անդրանիկ որդուն, և այդպես էլ եղավ:

Այդ մեկ սենյականոց տնում վարագույրով կիսած, կեսը զինվոր-ուսուցչի քնասենեակն էր, մյուս կեսն էլ տասվեց հոգանոց աշակերտների դասարան, որի անունները ստացա գյուղապետից: Առաջին օրը տասներեք տղա աշակերտ դասարան եկան, բայց երեք աղջիկներից ոչ մեկը ներկա չէր:

Գյուղապետը բացատրեց որ ծնողները ասում են իրենց աղջիկները տնային գործով են զբաղված և հավանաբար դասարան չեն գալու: Սկսվեց դասավանդությունը և դաստիարակչությունները իր յուրահատուկ մեթոդներով ինչպես սովորացրել էին մեզ, օրերը փոքրիկներին և իրիկնապահիները այցելություններ գյուղի տարածքներում և գյուղի նշանակված մարդու ուղեկցությամբ

այցելում որոշ մարդկանց բակերը մտնելով առողջապահական խորհուրդներ տալիս, որ իմ ուղեկիցը իրենց բարբառով կրկնում էր առաջարկներս: Նույնիսկ գյուղապետի հետ գյուղի բաղնիս այցելեցինք, որտեղ նկատելով մամռոտ պատերը և լողանալու ջրի մակերեսի վրայի աղբը, առաջարկեցի մաքրել մինչև երկու շաբաթ անց, որ նորեն պիտի վավերացնեի մաքությունը և հենց այդպես էլ կատարվեց: Գյուղապետը ինձ հիշեցրեց, որ այս բաղնիսը կառուցված է եղել հայության ձեռքով և հայերը լողավազանի մեջ չէին մտնում, բայց երբ հայերը գնացել են նորեկները սկսել են բաղնիսից օգտվել և «Հալալացնելու աղոթք են կարդացրել և հալալացրել այն» և հետո մի երկու պատ են շարել և ավազանը փոքր լայնացրել են, թե ոչ հիմնականն բաղնիսը հայերից է մնացել: Նմանապես առողջապահական նկատումների համար ամեն ուրբաթ իրիկնապահին, գյուղի տները այցելություններ էի կատարում և նույն ժամանակ առիթից օգտվելով, ուղեկցիս խնդրում էի արձանագրել այն գյուղացիների անունները, ովքեր ցանկություն ունեին նոր դպրոցի շինարարության որևէ ներդրում անել՝ նշելով, որ ամեն մեկ օր աշխատելու համար երկու կիր այուր կստանան:

Աղբուլաղ գյուղի, Հայ գյուղացու բարեգործական նպատակների համար տնկած աղբյուրի մոտի ծառաստանից արդյունք քաղելու համար, նախքան Գյուղատիրոջը հանդիպելի և իրենից օգնություն խնդրելի, մտածեցի, այդ ծառաստանի վերաբերյալ իմ հետազոտության արդյունքները ներկայացնել կառավարության պաշտոնյաներին, որտեղից մի հստակ դիրք ձևավորեմ, ռիսկային քայլ վերցնելու համար և ինչ գնով որ եղել է քսան երկու ծառ ձեռք բերեմ: Դիրքս ուժեղ էր, համոզում ունեի, որ արդար եմ համարում պահանջելու քսան երկու ծառ աղբյուրի մոտի ծառաստանից: *Անճարը կուտի բանջարի առակին* չէի հավատում, պարզորեն գիտեի Աղբուլաղ գյուղի հայության անցյալը. օտար ճանապարհ չկար, ունեի ծառաստանի բարեգործական անցյալի փաստ և սաղ վկա, նմանապես ունեի նույն գյուղից պարսիկ բնակիչներ, որ ինձ հետ համամիտ անձինք էին: Առաջին քայլս

վերցրի... պաշտոնական նամակ շարադրեցի բացատրելով նոր դպրոցի կարիքները և հանդիպեցի պրն. Մանասեր Ղարախանյանին իր տանը՝ գրելով Նոր Ջուղայի տան հասցեն, նշելով, որ ինքը բնիկ Աղբուլաղ գյուղից էր և երբ գյուղի հայությունը գյուղովի ներգաղթեց Հայաստան իր ընտանիքին չհաջողվեց ներգաղթել՝ միանալ և արդեն երբ երկրորդ անգամ մայրաքաղաք Թեհրան գնաց և դիմեց ներգաղթի հանձնախմբին արդեն Սովետական Միությունը դադարեցրել էր ներգաղթը և այդպես հետ մնաց ներգաղթից: Բայց ամենայն դեպս պրն. Մանասեր Ղարախանյանը հանձնախմբի անդամ է եղել այն բարեգործական միությանը, որ հիմնադրեց **ԱՐԾԻՎ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ** (Պարսկերենով՝ **Մոասեսեսեյե խեյրիյեյե Օղաք**) առավել ևս հենց ինքը այն անձն է, որ երեք մյուս հանձնախմբի անդամների հետ դրամ են հավաքել և գնացել Չարմահալի պարսկական ՍԱՄՈՒՆ անունով մի գյուղ և այնտեղից են տունկերը Աղբուլաղ բերել և այս ճշմարտությունը վկայում է այն մասին, որ նախկին հայկական Աղբուլաղ գյուղի աղբյուրի մոտի ծառաստանի հիմնադիրները հայ գյուղացիներն էին եղել և այսու եզրակացվում է, որ ծառաստանը պատկանում էր գյուղի ժողովրդին, որովհետև իբրև վկա՝ պրն. Մանասեր Ղարախանյանի անունից կարող եմ արձանագրել որ, այս ծառաստանը չի ծախվել և մնացել է գյուղատեր **Իսմաիլ Խան Բախտիարիին**:

Պաշտոնական նամակս շարունակելով ավելացրի, որ նվաստիս կարծիքով լավ կլինի այս ծառերը հենց այս գյուղի բարեգործական նպատակների համար գործածվի և մեր անցյալի հայրենակից հայ գյուղացու բարի ու մարդկային նպատակներին ծառայի:

Այսպիսով թե՛ մարդուն դուր կգա և թե՛ Աստծուն: Այսու մեր ծողովրդասիրական նպատակներին հասնելու, իբրև ծառայություն չուննոր հողագործին ձեր թույլտվությամբ, խորհրդակցելով գյուղի պեկորների հետ մտածում ենք այս նոր դպրոցին հատկացնենք քսան երկու ծառ, որոնցով մեր դպրոցի տանիքը ծածկենք և Սպիտակ

Հեղափոխության նպատակների կրթության այս կետին իրագործենք և մեր գյուղի աշակետներին կրթենք և դաստիարակենք:

Նամակում ավելացրի, որ մեր անցյալի Հայ գյուղացիները մեր սիրելի հայրենի Պարսկաստանին ավելի քան երեք դար բարությանը ու ազնվությանը հնազանդ ու ճշմարիտ ծառայեցին, որոնց նախնիկները թաղված են այս հողում և իրենց դրած ԱՐԾԻՎ ԲԱՐԵԳՈՌԾԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ նպատակները կիսատ են մնացել հենց իրենց հիշատակը վառ պահելու համար՝ ինձ իրավունք տրվի որ գյուղատիրոջ հետ լեզու գտնեմ և այս ծառաստանից քսան երկու ծառ խնդրեմ որպեսզի կիսատ մնացած դպրոցի կտուրը ծածկվի և դպրոցի շենքը լրացնենք, Կեցցե՛ մեծ..., կեցցե իր արդարությունը և կեցցե՛ Ուսման Չորքը և Պարսկաստանի ժողովուրդը... և խոշոր տառերով վերջացրի կեցցե՛ “ԻՐԱՆ” հայրենիքը և կեցցե այն իդեալիզմը, որ մեր հայրենի Պարսկաստանի ժողովրդին մեզ հասցնելու է ԳԵՐ-ԶԱՂԱԶԱԿԱՐԹՈՒԹՅԱՆ Դարպասներին:

Ստորագրեցի; Չինվորական Թ. Ղարախանյան... Գյուղ Աղբուլաղ, Չարմահալ...

Քանի օր սպասեցի, դպրոցը մի օր արձակեցի, գյուղի պահակին *-ղաշտվանին* - գտա, գյուղի մարդկանցից երեք անուն տվի և ապասպրեցի այդ երեք հոգի թասիքով ծնողների մոտ գնա, իմ կողմից ասի որ իրենց ծառ կտրելու սղոցները և մեկ հատ էլ ավելորդ սղոց վերցնեն, իրենց էշերով փալանները դրած մոտս գան և պնդեցի, որ գյուղամիջով անցնելիս սղոցները թագնված պահեն որ չտեսնվի... այս մարդիկ գիտեին որ ամեն անգամ երբ պարտականություն էի հանձնարարում, վերջում *-և իմ հաշվին-* մի լավ սեղան էին նստելու այս մասին միայն գյուղի միակ խանութպանը գիտեր, որ արդար ոչխարի յուղով չամչով փլավ պիտի եփել տար. և սփռոցը լցնեմ ճոխ ուտելիքներով ինքն էլ մասնակցեր: Երբ ամենքս նոր դպրոցի առանց կտուրի ու անգուլիս դպրոցի մոտ հավաքվեցինք արդեն գիտեինք, որ մի ծառ կտրելու պատմություն կա, խոսեցի ասելով «Սիրելի ազիզ ու չարքաշ եղբայրներ դպրոցի կտուրը բաց է մնացել և քսան երկու

գերանի կարիք ունենք...գնանք աղբյուրի մոտ բախչեն որ նախկին հայ գյուղացիք են տնկել բարեգործության համար, կտրենք բերենք, ապսպրեցի որ մեկ մեկ աղբյուրի մոտի բախչեն մտնեն և գյուղի պահակն ու ես էլ միանանք իրենց...կայծակի արագությամբ քիչ անց քսան երկու չինարի պես շիտակ ու երկար ծառեր կտրվեցին չվաններով չորս-չորս ամբացվեցին էշերի փալաների կողքերին և նախքան իրիկնապահ քաշվեցին դեպի նոր դպրոց և ելարանից բարձրացան դրվեցին դպրոցի պատերի գլխին: Հանգիստ շունչ քաշեցինք և իրենց հիշեցրի որ գիշերը սեղան է բացվելու ամենքիս համար և կսպասեմ իրենց:

Բացի ինձանից, գյուղի հանդապահը՝ «դաշտվան-ը» և երեք գյուղացիները տուն վերադարձրին անասունները և սոցոները և արևը մայր մտնելուն միացան ինձ, գյուղից դուրս, նոր դպրոցի մեծ դասարանում, այս անգամ հարուստ գերաններով ծածկված բայց դեռ բաց տանիքով նոր դպրոցի շենքում, որտեղ գյուղի խանութպանին վճարել էի, որպեսզի ընթրիքի սեղան գցեր: Մինչև ուշ գիշեր կեր ու խում արինք, Աստծուն, մարգարեներին և իշխանությանը փառք սովինք և որոշեցինք երկու-երեք օրերում գերանների տաշեղները պոկելինք, մինչև մի ձև մտածենք դպրոցի տանիքը դամիշներով և հատուկ հողով ծածկենք՝ լրացնենք և բացում կատարենք:

Իրենց ասեցի ծառերի մասին ով որ մի բան հարցնի ասեն՝ «գինվորական Ղարախանյանը ասում է այս ծառերը նախկին գյուղի հայերը տնկել են հենց դպրոցի համար և հիմա հայերը գնացել և մեզ հիշատակ են թողել»: Քանի օր անց Բորուջեն քաղաք գնացի, հանդիպեցի անմիջական Ուսման Չորքի դեկավարիս, կրթության տնօրենին և ժանդարմերիայի կառավարիչին, որոնք արդեն նամակիս մասին տեղեկություն ունեին և բոլորն էլ արտահայտվեցին, որ շատ մեծ ռիսկային գործ եմ արել, «առաջի անգամ է այսպես բան պատահել և մենք որևէ հրաման չունենք որևէ մի քայլ վերցնելու և հենց այսպես լուռ կմնանք մինչև մայրաքաղաքից հրաման ստանանք, բայց իմացիր, որ որովհետև առաջին շրջանի Ուսման Չորքի գինվորական ծառայող

ես, բարձր հովանավորության տակ ես լինելու»։ Այս քաղաքում գտնվելիս, առիթից օգտվեցի և մեծ հացթուխարանին առաջարկեցի մեր վեց տոպրակ այուրը, որ Ամերիկյան բարեգործական “Care Institute”-ի կողմից էր նվիրվել Ուսման Չորքին, իրենք վերցնեն և փոխարենը մեզ կանխիկ դրամ վճարեն, որ մենք այդ դրամով թե դուռ ու պատուհան գնենք և թե դպրոցի տանիքը դամիչներով ծածկելու ծախսը հենց այս փողից վճարենք։

Այդպես էլ ստացվեց, որ Փառք Աստծո մեր վեց հարյուր կիր եգիպտացորենի այուրը, որ Ամերիկյան էր նվիրել Պարսկաստանին, դրամի վերածեցինք և ուստա **Մահբուբ**-ին Գիշնիզան գյուղից կանչեցինք և քանի օրվա ընթացքում հենց մեր նախկին հայկական քանդված **Քաթակ** գյուղից պստիկացած ու ճգնված ՇԱՄԲԻ դամիչներով ութ բեռ բերել տվինք և դպրոցի տանիքը ծածկեցինք... գեղեցիկ ապակիններով, երկաթյա դուռ ու պատուհան գնեցինք, իմ խնդրանքով և ժանդարմերիայի մեծի կողմից տրամադրված Ադրուլաղ գյուղ տեղափոխելու մեքենայի շնորհիվ, փոխադրեցինք գյուղ և “Care Institute”-ի դրամից Ուստա **Մահբուբ**-ին ձեռնավարձը դասավորեցինք և Ադրուլաղ գյուղի Նոր դպրոցը տանիքը այսպիսով ծածկվեց և նախկին հայկական գյուղից մի կենդանի ու մնայուն հիշատակ մնաց հայրենադարձ հին հայկական և նոր պարսկաբնակ **Ադրուլաղ** գյուղում։

Իբրև Ուսման Չորքի – *Սևիսահ-է-Դանեշ* (Litracyc corp) ծառայող և Պարսկաստանի քաղաքացի լիքը թոքերով էի շնչում, ուռում ու հպարտանում մեր Հայ գյուղացուց թողած այս հսկա ազգային բարեգործական հարուստ արդյունքը և այս մտքի թռիչքից ույժ ու եռանդ էի ստանում... և պաշտոնական և հասարակ ժողովրդի հետ խոսելիս այս «ԱՌԾԻՎ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՄՅՈՒԹՅԱՆ» անունը հնչելիս թվում էր, որ Սուրբ գրքից մի գլուխ էի կարդում լսողիս դիմաց և լսողներն էլ իմ համաքաղաքացի պարսիկներ, տարբեր տարիքի

մարդիք էին, այնպես որ քսան երկու ծառերը կտրելուց ոչ մի վատ բան էլ չպատահեց և Իսմաիլ Իսանի գանգատների շարանները կառավարության ատյաններում աչքաթող եղան. գուցե դեռ մինչև այսօր էլ սպասում են Թեհրան մայրաքաղաքից որևէ պատասխանի... Այդքան գիտեմ, որ Իսմաիլ Իսանը մի մարդու էր կանչել որ լավ վճարումի դիմաց ինձ մի վնաս հասցնի, բայց այդ անձը մեր գյուղի միլիտանտ անձ “Մաշհադի Նաջաֆ” կոչեցյալի կնոջ եղբայրն էր որ Իսմաիլ Իսանին ասել էր «Հարգելի Իսմ... ինձ վստահելու համար շնորհակալ եմ..բայց ես պատիվ ունեմ պահելու, ես լավ տեղյակ եմ որ այդ Ղարախանյան զինվորականին մեկը դիպչի թե Աղբուլաղ գյուղի խալիսը կը քանդվի իր գլխին և թե կողքի գյուղ Մամուռանի խալիսը, էտ մեկը ինձնից մի ուզենա, եթե օտար մեկն էլ ուզի կատարի հենց ես իմ քրոջ ու փեսայիս պատվի խաթեր համար իրա դեմ կը կանգնեմ»:

Վերջապես, դպրոցի շենքը լրիվ կառուցվեց և արդեն ժամանակն էր բացման մասին մտածել:

Նոր դպրոցից մի կարճ և լայն ճանապարհ էինք զգել երկու կողմը կանաչ ծառերով, միացնելով գյուղից քաղաք տանող մեքենայի ճանապարհին: Նոր դպրոցին գեղեցիկ տեսք էր տվել իր նարնջագույն դեմքը և երկաթյա ամուր դուռ ու պատուհանները գյուղին նոր շունչ և հույս էր բերել: Հրավերագիր գրեցի բոլոր կառավարական պաշտոնյաների, ուսման գորքի կրթական մարմնին, Ժանդարմերիայի պարագլուխներին, Սպահան, Շահրեքորդ և Օրոջան քաղաքներում և բացման օրվա թվական ու ժամ նշանակեցի: Ոչ-պաշտոնական թվում էին մոտակա գյուղի քալանթարները և իմ զինակիցները, բայց յուրահատուկ մարդկանց անձամբ այցելեցի: Հայկական Մամուրա գյուղում այցելեցի Գյուղապետ քալանթար Մկրտում Մանսուրյանին, որ մենակ էր ապրում և իր տիկին Մարգարիտը երեխանների մոտ Թեհրան մայրաքաղաք էր մեկնել ծրագրելու իրենց տեղափոխվելը այդ քաղաք, նույն ժամանակ տեր կանգնել իրենց երիտասարդ տղին, բայց քալանթար Մկրտում Մանսուրյանը որոշել էր քանի կարող էր և դեռ ույժ ուներ՝ մնալ Մամուրա մինչև վերջին հայ ընտանիքը քաշվի դուրս

և վերջին գնացողը ինքը լինի: Իրեն հրավիրեցի ասելով որ Հաջի Աբադ և Սիրաք գյուղերից էլ եմ հրավիրելու, շատ ուրախությամբ ընդունեց, որովհետեւ ինքը արդեն շատ մոտիկից ճանաչում էր երկու գյուղապետերին հատկապես Սիրաք գյուղի քալանթար իմ մեծ պապ, Թադևոս Ղարախանյանին: Ինձ շնորհակալություն հայտնեց և խոստացավ իր հետ մի քանի շիշ օղի կբերի որ հենց ինքն էր պատրաստել և պնդեց որ ծածուկ ու թաքուն կբերի: Նույն Մամուքա գյուղից հրավիրեցի իմ Հայ զինակից Սիրգայանցին, որ խոստացավ եթե այդ թվականին Նոր Ջուղա չգնար անպայման ներկա կգտնվեր: Հեծանվով Մամուքա գյուղը թողի դեպի Արևմուտք Հաջի արադ հայկական գյուղ...

Մամուքա գյուղի մրգառատ այգիներից անցնելով, խոռը շնչեցի արբեցնող պտղատու ծառերի և թփերի բուրմունքը և այնտեղից չոր դաշտ ու բլուրներ անցնելով միայն պարսկաբնակ Գահրի գյուղը տեսա, որ այնքան բուրմունքալից չէր քան Մամուքա, չոր դաշտ ու հողոտ բլուրներ անցնելով, մեկ ժամ անց մտա հատ ու կենտ ծառերով շրջափակված հայկական Հաջի Աբադ գյուղ: Այցելեցի Հարգելի քալանթար Մինաս Մինասյանին իր տանը և իրեն հրավիրեցի Աղբուլադ գյուղի դպրոցի բացմանը, նշելով որ Սիրաք գյուղից քալանթար Թադևոս մեծ պապիս ու Եղիսաբեթ մեծ մամիս էլ եմ բերելու և ավելացրի, որ կողքի գյուղ Մամուքաից իր խաս ընկեր Զալանթար Մկրտում Մանսուրեանն էլ այնտեղ էր լինելու, այնպես որ մենակ չէր լինի: Ձեռքը քաշելով գլխի լրիվ ճերմակած մազերը, իր բարի լույսի պես ճերմակ ու վարդագույն երեսը տրորելով, իր բնականից խոշոր աչքերը տրորելով ծիծաղը բացվեց ու ասավ «այ դադ ու բիդադ, ափսո՛ս մաղյանս նոր եմ ծախի, եստի աստծու օրն էլ մաշին չէ գալիս օր քեզի դովը տամ, տեսնեմ բլքի կարենամ հենց մենակ ես գամ... էլ ափսո՛ս մաղյանս ծախեցի, տեսնեմ բլքի կարենամ մէ բան ջուռ անեմ.. Սիրդս շատ կուզի համ նոր շինած դպրոցդ տեսնեմ

մե հազ անեմ համ էլ տեսնեմ քեռեքանցս Թադևոսին ու Մգրդումին. Համա ազեր չկարցա ջուռ անեմ, մե լավ կրարեվես ու տեղս դարդակ կոնեք... Էյ ափսո՛ս մաղյանս հենց երկու օր հառաջ ծախեցի»։ Քալանթար մինասի գավակները բոլորն էլ արդեն տարիներ Մասջեդ Մուլեյման քաղաքում Նավթային ընկերության աչքի ընկնող դիրքեր էին գրավել և Հաջիաբադում մնացել էին միայն ինքը և տիկինը. իրենք էլ այդ գյուղի վերջին քանի հայ ընտանիքներից էին, որ պատրաստվում էին տեղափոխվել նոր Ջուղա։ Չգալի էր որ ինչքան հուզմունքով էր խոսում իր ձին՝ «մաղյան-ը» ծախելու մասին։ Տարիներ առաջ իրեն և իր ձին Սիրաք գյուղում էի տեսել, իր մի այցելության ժամանակ։ Գեղեցիկ էր իր ձին, խառը գույներով բաց կապույտ ու ճերմակ ոտքերով :

Մի փոքր հանգստվելուց և այդքան սիրելի քալանթար Մինասի գրույցներից անկուշտ, շնորհակալությամբ և ափսոսանքի զգացումով թողեցի Հաջիաբադ գյուղը մտքիս մեջ կրկնելով... «Հաջի Աբադ գյուղն էլ է դատարկվելու... երանի Հայաստանի ճամփեն բաց լինեք գոնե հայրենիք կգնային, նունիսկ հիշում եմ հենց մտածելու պահին ինքս ինձ հարց էի տալիս... դե հայրենիքը այս ծերացած մարդկանց հետ ինչպես կվարվեր և այս սիրելի տարեց մարդիք ինչ ներդրում կունենային Հայրենի երկրում»։ Հեծանիվով անցա գյուղեր, Շալամզար, Խարաջի, Խարաջի նեղանցք –*պարսկ. Խարաջի Թանգ-որտեղ* գտնվում է հոջակաւոր **Վախտը Սհաթ աղբյուրը**, որ պարսիկ գյուղացիների համար ուխտատեղի է... Այս աղբյուրները անկարգորեն պարբերաբար լցվում են ջրով ու հանկարծ սկսում են արագորեն ջրից դատարկվել և չոր չորանում և հանկարծ էլ ջուրը աղբյուրի սկերից բլրթալով լիքը լցվում և հոսում դեպի գետ։ Այդ օրը երբ հասա աղբյուրների գլխին արդեն առատ ջուր էր հոսում. եթե օրը երկար լինեք այնքան կմնայի որ մեկ անգամ ևս վկա լինեի աղբյուրի լրիվ չորանալուն և նորից բլրթալով ջրով լցվելուն։ Ուրախ էի որ շուտով մտնելու էի իմ հայրենի գյուղը և փաթաթվելու իմ մեծ պապ-մամիս Թադևոս և Եղիսաբեթ Ղարախանյանների հետ հենց այն տներում

որտեղ ծնվել էին, Հայաստանից եկած, մի լրիվ Ղարախանյան գերդաստան ներառյալ իմ սերունդը...



Սիրաք – Վախտ ու Սհաթի աղբյուրը

Վերջապես հասա հայկական Սիրաք գյուղ, որտեղ դեռ այդ 1964 թվականին ապրում էին քանի տուն պարսիկ և տասներ հինգ հայ ընտանիք և գյուղապետն էր իմ մեծ պապ քալանթար Թադևոս Ղարախանյանը: Երբ գյուղ մտա և մեր պապոնց հսկա բակի դարպասից ներս մտա արդեն պապս ու մամս լուր ունեին որովհետև ինձ դալի դուռը տեսնելով Բագում անունով գյուղի ամենաճանաչված հայացած աղջիկը վազվզելով պապոնցս լուր էր բերել, որ իրենց թոռը զինվորական հագուստով, հրացանը ուսին հեծանիվով գյուղ է գալիս և լավ լուր բերելու համար նվերի խոստում ստացել: Տան հսկա դառվազեն ներս մտա, ամեն բան հենց դարվազի մոտ թողեցի, վազեցի վեր երկրորդ հարկ, հյուրասենյակ մտա և առանց սպասելու ասեցի «պապ, մամ եկել եմ նոր դպրոց բացելու համար ձեզ տանեմ

Աղբուլաղ...»: Հրճվանքով փաթաթվեցի մեծ պապիս ու մեծ մամիս ... հրճվանքից հեկեկացին «հա Բագումն եկավ ասավ որ քեզի դալի դուռը տեսել է օր գալիս ես...»: Այդ ամենաճանաչված հայացած աղջիկը, պարսիկ աղջիկ, որը լինելով կողքի պարսիկ գյուղ Թաղանակից եկել և մեր գյուղն էր երևացել, Թաղևոս մեծ պապս առաջարկել էր գյուղի հովիվ Արբասի ընտանիքն այդ Բագում անունով աղջիկան իր տունը տեղ տա և թողնի որ պատիկ աղջնակը գյուղի ցանկացած տարբեր ընտանքների համար գյուղի տներում ծառայություններ մատուցի: Այսքան գիտենք որ այդ հայացած աղջիկը որք ու տխուր Սիրաք գյուղում երևաց և ձախ ու աջից սիրով լցվեց և մի կլկլան հաճելի, ճկուն, զվարթ ու թովռան գյուղի աղջիկ եղավ... ամուսնացավ Սիրաք գյուղի գառնարած պարսիկ Չաֆար անունով մի օտար որք տղայի հետ և հայեցի մի օջախի արժանացան և շարունակեցին ապրել Սիրաք գյուղում:

Մամուքա, Հաջիաբաղ, Սիրաք, այս երեք գյուղերում ապրող հայերը արդեն ծեր ու տարեց մարդիք էին և բոլորն էլ պատրաստվում էին տեղափոխվել Նոր Ջուղա կամ Թեհրան և իրենց գյուղ մնալու պատճառը այն էր որ իրենց տուն ու տեղը ծախծխել շրջակա գյուղերի պարսիկ գյուղացիներին և գոնե ամեն բան դեն չգցեին:

Այսպիսով մի խումբ ժողովուրդ թողնում՝ հեռանում, մյուս խումբը նոր հույսերով նոր տուն կառուցում, նոր երեխաներ ունենում, բազմանում, շատանում, տեղը մնում ու ապրում և քայլում դեպի նոր արշալույս. այդ երկու հոսանքների արդյունքը մեր պատմության ընթացքում պարզ տեսնում ենք: Ինչպես աչքով տեսա այդ երեք փոքրաթիվ հայաբնակ գյուղերից, Մամուքա գյուղի դպրոցը կանգուն էր բայց Հաջիաբաղ և Սիրաք գյուղերի դպրոցները, տխուր և շվարած վիճակում էին աշակերտություն չունենալով և հենց այդ պատճառով, Մամուքա գյուղի համար ուսման գորքի զինվորական ուսուցիչ էր հատկացված, բայց Հաջիաբաղ և Սիրաքի գյուղերի համար ոչ: Պարսիկ գյուղացիները նոր էին սկսել ներքաշվել հայկական գյուղեր և այնտեղ բազմանալ, ուրեմն նոր հասկացա ինչու Սիրաք և

Հաջիաբադ գյուղերի Ուսման Չորքի ցանկի մեջ չեին, թե ոչ հենց այդ գյուղերից մեկն ու մեկին կոչումեի. մի քանի տարի անց լսեցի այդ գյուղերը մտել են Ուսման Չորքի ցանկում և զինվոր-ուսուցիչ են պահանջել, ինձ համար արդեն ուշ էր:



Զիվոր Թամը

Զինձառայության թվականը 1962-1964 էր...

Թաղևույթ մեծ պապս տասնյակ տարիներ Սիրաք գյուղի քաղաքաբնակ էր եղել բայց արդեն այդ վաթսուներկու տարիներին իր աչքերի տեսողությունը նվազել էր և գրել կարողալու պահին իր եղբոր Խանկարին էր օգնության կանչում: Ասում էին մեծ պապիս աչքերը ձյունը տարել էր այն տարիներին երբ մեծ պապս ձմեռները, որ գյուղի աշխատանքը դադարում էր, զբաղվում էր անասունի մորթի վաճառականությամբ: Վայրի անասունների մորթի ձեռքբերումը կատարվում էր պարսիկ լեռնեցի բախտիարի տոհմի անասնապահ և որսորդների հետ որոնք աղվես, գայլ և սամույր¹ էին որսում և իրենց հմտությամբ մորթը քերթում, հանում և պատրաստում էին վաճառքի համար և գիտեին, որ պիտի սպասեին Թաղևույթ անունով մի հայ վաճառականի իր գրնգան ու չնգնգան արծաթյա փողերը բերելու բայց նաև գիտեին, որ Թաղևույթ վաճառականից չէին կարող նորից գողանալ և նորից վաճառել: Թաղևույթ պապս իրենց լավ դասեր էր տվել, որ քնած կամ արթուն, օրով՝ զօրով կամ գիշերով, եթե ձեռք երկարացնեին նորից գողանալու, տաք փամփուշտի դիմաց կկանգնեին, ինչպես փաստել էր անցյալում: Այս որսկան գողերը այնպես դասեր էին վերցրել Թաղևույթ պապիցս, որ այս գողերին միայն իր անունը տալով օտար հայ մարդիկ էլ մահից փրկվել են:

Այդ օրերին թղթադրամ գույություն չունեին և առևտուրը արծաթյա դրամներով էր կատարվում. այդ բերումով Թաղևույթ պապս բանվոր էր վարձում, որպեսզի արծաթյա փողերը շալակի, ինքն էլ միշտ զինված, Սիրաք գյուղից ոտքով գնում էր Չարմահալ Բախտիարի լեռնաշղթաններում վայրի կենդանիների մորթ գնելու և մթերքը բանվորի շալակին նորեն օգնականի հետ քայլելով, բուք ու բորան ու ձյունապատ դաշտ ու ձոր անցնում և Սիրաք գյուղ վերդառնում. և այստեղից մի թեթև մաքրման պրոցեսից անցկացնելով մորթերը փոխադրում Նոր Ջուղա և իր հայ վաճառականի միջոցով ուղարկում Ռուսաստանի ազատ շուկա:

¹ - Սկյուռ:

Ուրեմն հենց այս սարսափելի ճյուղապատ բուք ու բորանների միջից անցնելով իր ծերացած տարիներում, Թաղևոս պապիս աչքերի լույսը պղտորվել և տեսողությունը պակասել էր. բայց հենց դեռ քիչ լույս աչքերով այդ գավառի ամենաճանաչված «ՄՆԽԶԻՆ» էր, որը սովորել էր իր հօր Սամվել Ղարախանյանից: Այդ հերոսական ապրելակերպը, Սիրաքի գյուղատեր **Սուլթան Մորադ Խան Բախտիարիի** համար մի իդեալական ղեկավարի կերպար էր ներկայացրել, որ լինելով քաջ, խելացի և ազնվական անձ, Խանը որոշեց մեծ պապիս նշանակել Սիրաք գյուղի տանուտեր Սամվել Ղարախանյանի տեղակալ, որովհետև արդեն Սիրաքի տանուտեր մեծ պապիս հայր Սամվել Ղարախանյանը շատ էր ծերացել և շուտով իր տանուտերությունը պիտի հանձներ իր տղային Թաղևոսին ...

Այդ տարիներին Օպիոմ բույսի ցանելը ազատ հայտարարվեց և Սիրաք գյուղի շրջակայքի բոլոր պարսիկ գյուղերը Օպիոմի բույս – Խաշխաշ- էին ցանում և թանգ վաճառում... Գյուղի մի քանի հարուստ տղամարդկանցից ծխեցին, գինովցան և մոլի դարձան: Հենց այդ օրերին Թաղևոս մեծ պապս Սիրաքի գյուղապետն էր:

Սիրաք գյուղում մի հայախոս խանութպան կար “ԱՅՉՈՒԱ - պարսկ. ազիգ-օլլա” անունով որ տարիներ առաջ Սիրաք գյուղը դանդ ու չայ ծախելու նպատակով եկավ գյուղ, բարի ու ջերմ վերաբուրմունք տեսավ և սիրեց, հայերեն սովորեց ու մնաց:Նրա խանութը գյուղի համար էլիտար տղամարդկանց հանդիպավայրն էր, որտեղ ունևոր տղամարդիք իրիկնապահին իրար շուրջ հավաքվում, գրուցում, Այգոլին պատվիրելով նաբաթով թեյ խմում և կանխիկ թե ապառիկ վճարում... մեկ մեկ էլ Այգոլին ՕՊԻՈՍ ծխելու պատվեր էին տալիս ... և ծխողները Օպիոմի ազդեցությամբ գինովնում ու իրենց կորցնում և գնալով մոլի դառնում այս օրվա Հերոիների մոլության նման, որ անձին քաշում է դեպի դժբախտություն:

Ուրեմն մի հակիրճ հատված Հայ Գյուղացի Մարդու ԻՄԱՍՏՈՒԹՅԱՆ մասին...մի օր պապիկ ու թոռնիկ գրույցի ընկանք և Թաղևոս Պապս այսպես պատմեց...

«Անունները չտամ հենց ասեմ Ֆլանն ու Ֆլան¹ մարթականց հետ Այգոլի դուքանի սաքուին² կիտվել զրցում էինք...առաջի անգամ մանդալ ու բաֆուր (օպիոն ծխելու հարմարություն) բերին ու ասին...Թաղեվոս մե փոք³ տուր տես ինչ է մարթուն դրախտը տանում ու եղ բերում... մե քանի փոք տվի ու տեսա հենց իզուր տեղը ուզում եմ հռ-հռամ⁴ ու վեր-վեր թռչեմ, էլի ինձի պահեցի...մի օտար օր էլ էլի հենց Այգոլի դուքանը նստած զրուց էինք տալիս էլի Օպիոնի մանդալ ու բաֆուրը մեջտեղ եկավ ու մե քանիսը մուխ տվին ու էլի Ֆլանն ու Ֆլանը գոռ դրին՝ Թաթեվոս..տեսար ինչ լավ էր, փողը մենք են տալիս հրավիրում ենք էլի արի մի քանի փոք տուր...ասի վալլա փողին չեմ...էլ ինչ ասի չեկավ, ասի ջանդհամ մեկ էլ փորձեմ...էլի մի քանի փոք տվի ու տեսա էլի ուզում եմ բնա անեմ⁵ վիլ⁶ տեղը հռ-հռամ ու ձանձխվեմ, էլի ինձի պահեցի... էդ վիրի դալուց ինչուր ցածի դալեն տուն գալու ճամփին ինքս ինձի ասի; եկու հյեղ անտեր օպիոնից փչեցի երկու հյեղն էլ մոռիզ ի ինքս իմ դիրքիցը կորցնեմ...ու ինքս ինձի ասի..էտ անտեր օպիոնի մեջ պիտի մե օտար անտեր բան ըլնի օր սաղ ու սալիմ մարթուն թեթեվցնում ու ձանձխցնում է, էդ չի կարենա մարթուս համար մի լավ բան բերի ինչքան էլ որ համով ըլնի ու քեֆ ու մեֆ բերի..փողը ջանդամ, մարթու առողջությունը ցրիվ կուտա... ու տեղն ու տեղը որոշեցի... եզեր⁷ Աստված էլ երգնքից գետին գա ԷԼ ԲԵՐԱՆ ՉԵՄ ՏԱ, չեմ ծխի ու վերջ:Հիմի քանի տարի է անցի տեսնում եմ լավ արի կտրկան ասի չէ... ամօթ չէ մարթը ինքը իրա սրդի իրավունքը չունենա»։ ...

Տարիներ անցան և մտաբերելով և խորհելով հասկացանք որ այս կիսակիրթ հսկա հայ գյուղացին ինչքան խոր հոգեբանական և փիլիսոփայական վերլուծումներ էր արել, որ հակառակ իր կարող ու

¹ -Այսինչ-այնինչ:

² - Պատշգամբ:

³ - Ծխել:

⁴ - Բարձրաձայն ծիծաղել:

⁵ - Սկսեմ:

⁶ - Իզուր:

⁷ - Եթե:

գորեղ դիրքին, իր անձնական քմահաճույքների ստրուկը չդարձավ և մնաց իր գյուղացու կողքին, ապրեց հարյուր և հինգ տարի, ողջ և առողջ: ...«Հարգանք բոլոր մեր նախնյաց»...

Այդ ՎԱԹՍՈՒՆԱԿԱՆ տարիներին Սիրաք գյուղում մի քանի մատահաշիվ ընտանիքներ դեռ քիչ ու շատ հողագործությամբ էին զբաղվում, մնացորդի մի փոքրաթիվ մասն էլ իմ մեծ պապ-մամիս նման օղի էին քաշում, մոտիկ քաղաք Շահր-քորդի կամ շրջակա գյուղարենքի սպառողներին վաճառում, այդպես դրամ շահում... և հենց այս օղի քաշելն էր որ Սիրաք գյուղի նորեկ պարսիկ գյուղացի ընտանիքներին դուր չէր գալիս և շշուկ կար, որ «երբ նորեկ պարսիկ ընտանիքները շատանան Քալանթար Թադևոսին կպարտադրենք օղի քաշելունն ու վաճառելուն վերջ տա մեր իսլամ կրոնին հակառակ գործ է»:

Մի քանի օր Սիրաք գյուղում մնացի պատրաստվում էի մեքենա վարձատրել դեպի Ադրուլադ... Կարող էի զգալ որ կարծես այս հայկական գյուղի պատմական անկյունադարձի ժամկետին էի հասել և վկա էի Սիրաք գյուղի հայության կյանքի հոգեվարքին, որովհետև հենց այդ օրերին, որ այդտեղ էի Շհարեքորդ քաղաքից փոստատարը գլխին տալով հեծանիվով նամակ բերեց պատասխանի սպասելով հասցեագրված Քալանթար Թադևոս Ղարախանյանի, Սիրաք գյուղ...

Թադևոս մեծ պապս մի նամակ ստացավ գյուղատեր Մոլթան Մորադ Իսան Բախտիարի անունից և որովհետև մեծ պապիս աչքերը ձյունց վնասվել էին և իր համար կարդալը անհնարին էր և կառավարական թղթակցությունները մեծ հորեղբայր Իսանյարն էր կատարում, բայց մի տարի առաջ նա տեղափոխվել էր Նոր Ջուղա, ես այդ պատմական ժամին այդտեղ էի, ուստի Թադևոս պապս զգալով մի շատ կարևոր պատգամ՝ ինձ ասաց կարդամ: Պարսկերեն գեղեցիկ “nastaaligh” ձեռագրով գրվել էր...

«Տարիների Քալանթար հարգելի Թադևոս Ղարախանյան, քո տարիներին անխոնջ, ազնիվ ու հավատարիմ ծառայություններից անչափ շնորհակալ եմ: Բայց խնդրում եմ հաճես գրավոր

հրաժարականը գրես և հանձնես նամակ բերողին: Ի հարգանք ձեզ, ձեր տված խորհրդին հետևելով, որոշել եմ քեզանից հետոյ քալանքար նշանակել Հովշիգան գյուղից Ալի-Ռեզա Հաջիանին, որ գիտես արդեն ինքը և իր չորս եղբայրները ընտանիքով Սիրաք են տեղափոխվել երկու տարի առաջ:

Քեզ միշտ հարգող Սուլթան Մորադ Բախթիարի»:

Շրթունքներս սառեց, տեղն ու տեղս քարացա, սենյակում ես էի ու Թադևոս մեծ պապս, նամակ բերողն էլ դուրսը հեծանվի անիվի հետ մի բան էր գզգում. հիշում եմ պապս ծալապատիկ նստած էր մանդալի կրակի առաջ որ Եղիսաբեթ մեծ մամս նոր էր թոնրից կրակը հանել իրիկնապահվա թեյ պատրաստելու համար: Թադևոս մեծ պապս, հարյուր տարեկան հասակում, ավելոր բայց վարդագույն առողջ դեմքվ, ճերմակ ակնոցները աչքերին, գլուխը կոռ նայելով մանդալի թեյնիկին, ձեռքի տերողորմյան էր տրիսկացնում. ոչ մի ձայն. Կարծես մի երկար ժամանակ տևեց և Թադևոս մեծ պապս, իր նստած տեղը մեջքը շիտակեց և դեռ մանդալի կրակը բզելով, թեյնիկին թեյ լցրեց և ինձ նայելով ասաց «Ազիզ... ես հիմի հարուր տարեկան եմ, փառք Աստծո, էս բանին սպասում էի, հիմի մե թուղթ ու թանաք բի ասեմ ինչ գրես ու կտանք էս պոստչի մարթը հետը տանի Շահրեքորդ, ավելնորդ սպսելը մահնի¹ չունի.. մամիտ էլ ասա էս պոստչու հմար էլ մե հաց ու պանիր բերի, հեռվից է էկի քաղցած կրնի մեղք է»: Կարծես խոռը քնից վեր թոնեի, միջի տունը մտա, մեծ մամիս պապի պատվերը տվի, պայուսակիցս թուղթ բերեցի, պոստչուն էլ ասի մի քիչ անց չայր կպատրաստվի և մի հաց ու պանիր միասին կուտենք արդեն Բալանթարը նամակ է պատրաստում հետը տանի: Խեղճը հասկացավ որ պիտի մի քիչ սպասի մինչև նամակը պատրաստվի ուրեմն դուրսը կսպասի, նա պատասխանեց «չաշմ սարքար – պարսկ. *աչքիս վրա գինվոր*»: Թադևոս մեծ պապս պարսկերենսլ թելադրեց իր մտքում նախորոք ձեվակերված պատասխանը...

¹ - Իմաստ:

«Մեր շատ Հարգելի և սիրելի ԽԱՆ; շնորհակալ եմ քեզանից որ տասնյակ տարիներ ինձ վստահեցիր, արդեն ինքս ել ձերացել եմ և այս տողերով հրաժարվում եմ Սիրաք գյուղի Քալանթար-Քաղխողայի պաշտոնից, երեսուն օրվա ժամկետով: Ամենայն հարգանքներով՝ Թաղևոս Ղարախանյան, Սիրաք գյուղ»:

Նամակի պատասխանը վերջացրեց ինձ զարմացնելով, որ կարծես հարյուր անգամ այս պահը փորձած լինեք: Թեպետ ուրախացա պապիս տեսնելով այսքան հանգիստ, սակայն մռայլ էի, որ այս հսկա Ղարախանյանների տոհմը պապերից պապ ազնվորեն ու հավատացյալ ծառայեցին հայ գյուղացուն, արդարությամբ և հաշտ ու խաղաղ պահեցին գյուղի ընտանիքներին և ժամանակներ եղավ որ սոգեղ պատահարների պահին, գյուղի մեջ գաղտնիքները պահեցին, որ հայ գյուղացու պատիվը պահպանվի և պարսիկ կառավարության սկանջին չհասնի: Տխրեցի այն բանի համար, որ վկա եղա հարազատ հայրենի գյուղի վերջին տրփվող շնչին:

Եղիսաբեթ մեծ մամս կանչեց ինձ՝ հաց ու պանրի պոտնոցը ներս բերեմ, նամակը ծրարում դրեցի, հանձնեցի պապիս որ իր ձեռքով հանձնի, անցա պոտնոցը ներս բերի և պարսիկ պոստչուն ներս կանչեցի, որ նա էլ ամաչելով և հարգանքով ըստ սովորույթի նորեն մի երկու անգամ բարևեց և պապս նշան արավ և նստեց: Փոքր զրույցներից անց, կեր ու խում ու թեյից անցանք և պապս իր ձեռքով նամակը հանձնեց պոստչուն: Երբ արդեն ամեն բան վերջացրինք և պարսիկ պոստչուն ճանապարհեցինք, միջնորդող ուրախություն տալու համար խոսեցի նորակառույց Աղբուլաղ գյուղի դպրոցի բացման արարողությունների մասին և բացման արարողություններ և ողջույնի խոսքերի բառապաշարը գորացնելու և խորհուրդ հարցնելու նպատակով, կարդացի ողջույնի նամակս. մեծ պապս լսեց և մի երկու բառ առաջարկեց և այսպես օրվա նյութը դարձավ Աղբուլաղ գյուղի դպրոցի արարողությունները: Արդեն լավ զգալով պապս ասաց. «Երբ մամիտ հետ Աղբուլաղ գանք ու հետ գանք, դեռ մե ամիս էլ քալանթար եմ ու կամաց կամաց կհավաքենք Ջուղա կերթանք»...

Մինչեւ 1968 թվականը, Սիրաք գյուղը դատարկվեց հայերից և իրենց տեղը լցվեցին պարսիկ հողագործ ընտանիքներ... կիսակտուր “pick-up” մեքենա վարձեցի հեծանիվս դնելով մեքենայի գլուխը և մեծ պապ-մամիս հետ ճամփա ընկանք դեպի իմ ծառայության վայր Աղբուլաղ գյուղ: Անցանք գյուղերից մտանք Հաջիաբաղ քալանթար Մինաս Մինասյանի տան բակը, քալանթար Մինասը այդ երկու օրը մրսել էր և խոսք տվեց «հալս լավնա մե ջուռ գուքամ»¹: Բարի առողջություն ցանկացանք և մեկնեցինք դեպի Մամուքա, այնտեղից վերցրինք Քալանթար Մկրտում Սանսուրյանին և մի երկու ժամ անց արդեն Աղբուլաղ էինք: Մինչև բացման օրը դպրոցի դասարաններից մեկում հանգիստ տեղ էինք պատրաստել, որ մտանք հանգստվեցինք: Դպրոցի բացման օրվա համար էլ գյուղապետը մի օրվա համար սենյակ պատրաստեց տեղաշորերը փոխադրելու և հանգստանալու հատկապես մեծ մամս պիտի կանանց հետ մնար մինչև բացումին մասնակցողները գնային: Աղբուլաղ գյուղի պարսիկ ընտանիքները քանի օր հարգանք ու պատիվ մատուցեցին մեծ պապ ու մամիս և Մկրտում քեռուն (Եղիսաբեթ մեծ մամս մամուքա էր ծնվել և իր ասությանը մօրաքրոջ թոռներ էին Մկրտում քեռու հետ):

Դպրոցի բացման օրը հասավ:

Հողոտ ու փոշոտ դպրոցի ճանապարհի երկու կողմը շիտակ ու կանգուն այդ տարվա գարնան ամսին տնկած փոքրահասակ կանաչ ու դեղին տերևներով ծառեր էին և թվում էր ճանապարհի երկու կողմին կանգնած զինվոր պահակներ լինեին, ճանապարհի երկու կողքին նոր ջուր տված՝ առվակներից թարմացնում էին ճնապարհի չոր ու փոշոտ շունչը:

¹ - Եթե լավ զգամ, մի ձևով կգամ:



1962-Արբուլաղ-դպրոցի աշակերտությունը



Արբուլաղ- 1962- Թամը գյուղի նորակառույց դպրոցի առջև

Ճանապարհի սկզբում, երկու կողմ փայտե այուներ դնելով կամար կապեցինք, դրոշակներով և գույնզգույն շորերի կտորներով զարդարեցինք, գյուղի տղամարդիք լցվեցին կամարի շուրջ, առաջի շարքում գյուղի ալեվորների և Մամուռան գյուղից եկած ռազմընկերս Ալի Իրանփուռի հետ դիրք բռնեցինք. Նաև նախորոք հրավերքս ստացած ներկա էին դպրոցի կառույցող երկու վարպետներն և քալանթարներ՝ Թաղևոս մեծ պապս, Մկրտում քեռին, Մամուռանի գյուղապետը: Մեր գյուղապետին խնդրեցի կանգնել հենց դպրոցի երկայթյա դռան առջև, և մեծ մասն Աղբուլաղ գյուղի գյուղապետի կնոջ հետ հեռվում գյուղի դալի հետևի կտուրները կանգնեցին դիտելու, որ տիկնայք միայն հեռվից տեսնեն ինչ է կատարվում:

Սազանդար ու դիոյուն¹ կարգադրեցի սպասեն մինչև իրենց նշան անեն: Արդեն կեսօրվա մոտ էր որ զինվորական ջիփերով հարգանքի նշանով լույսերը վառած պաշտոնյա հյուրերը հանդարտ մոտեցան և կանգնեցին քիչ հեռու կապած կամարի առաջ և իջեցին քայլելով դեպի դրոշակները, որտեղ ես էլ ողջույնիս գրվածը ձախ ձեռքում զինվորական բարեվելով աջ ջեռքս բարձրացնելով քանի քայլ առաջ անցա և ձախ ձեռքում բռնած իմ ողջույնիս գրվածը կարդացի, սկսելով մեծն թագավորի անունից. սպիտակ հեղափոխության կետերը կարդալով վերջում բարձրաձայն բղավեցի «Այրած կենա մեծն Թագավորը և իր հայրենասեր նպատակները, որ Պարսկաստանի ժողովրդին հասցնելու է բարձր քաղաքակրթության դարպասների առջև»... այստեղ մեջ բերում արեցի թագավորի ճառերից մեկում մի փոքր նախադասությանը, որտեղ ասվում էր. «Այդ ինչ պարծանք կլինի, որ ես գլխիս Թագավորական Թագ դնեմ, երբ իմ ժողովուրդը և երկիրը դեռ չքավոր է ու սկար... Երբ Սպիտակ հեղափոխության նպատակները իրականացավ, հողագործի վիճակը բարելավվեց և երկիր հայրենին ոտքի կանգնեց և բարգավաճեց, այդ ժամանակ Թագավորական Թագ դնելու մասին կմտածեմ...» և շարունակեցի... ասելով՝ որ հենց այս նորակառույց դպրոցը, որ կառուցվել է աղյուսից,

¹ - Գյուղական նվազիչներ:

երկայթյա դռներով և ցեմենթյա հատակով ու լուսավոր դասարաններով և որը կրթում ու դաստիարակում է այս մատաղ սերնդին, հենց արդյունքն է մեր մեծ Թագավորի հայրենասեր ռազմավորությանը: Ողջույնիս խոսքը վերջացրի, ձեռքս ցածացրի և հուռա գոռացի. ինձ հետևելով գյուղի Ղուրան կարդացողը՝ սուրբ Ղուրան գիրքը պահելով դրոշակի կամարների գլխին, որը օդի մեջ ծածանվում էր և... օրհնում էր Ղուրան սուրբ գրքով... լավեցին հյուրերի ծափերը, նշան արեցի գումնա դիդի, սազը սկսեց ուրախության և հրճվանքի եղանակները, քայլեցի դեպի պաշտոնյաներ՝ ամենի ձեռքերը սեղմելով, նմանապես իմ զինակից զինծառայողը Մամուռան գյուղից ինձ հետևեց... և բոլորս գումնայի քայլերգով մոտեցանք կանաչ գույնի լենթերով կամարներին, որտեղ մի աշակերտ բացումի մկրատը դրած պոտնոցի վրա սպասում էր հանձնելու Ուսման Չորքի Կրթական տնօրենին լենթը կտրելու և երբ լենթը կտրվեց ծափերի ձայնը շարունակվեց և նորակառույց դպրոցի լայն ճանապարհով մոտեցանք դպրոցի մուտքին, Չինվորական ջիվերը հարզանքի նշանով նորեն վառեցին լույսերը և դափ ու գումնան մեղեդին փոխեցին փչելով պարային եղանակ:

Մոտեցանք մեծ երկայթյա դարպասին, որտեղ սպասում էին քալանթարներ՝ Թաղևոս մեծ պապս, Մկրտում Մանսուրյանը, Մամուռանի գյուղապետը, տեղիս Ադբուլադի գյուղապետը, նոր դպրոցի երկու շինարար վարպետները և մեզանից առաջ վազվզող գյուղի Ղուրան կարդացող Մաշադի միրզա Ռեզա Սաֆֆարին, որը զարդարված Ղուրանը ձեռքին պիտի ամեն ներս մտնողի գլխին օրհնանք կարդար և չար միտք ու աչքը հեռացներ՝ իր ասությանմբ՝ ներս մտնողների շունչը **հալալացներ**: Չումնային նշան արի դադարեն, պաշտոնական հյուրերը մոտեցան մուտքին... մտքիս մեջ մտածում, էի որ երանի թե նախքան մոտենալը մերոնք իրենց ձևով ինչպես, որ գիտեն բարձրաստիճան հյուրերին մի հարզանքի շարժում անեն, բայց ուրախությանս չափ չկար, երբ հյուրերը մուտքին մոտենալիս, ծեր ու ջահել, իբրև հարզանքի նշան բոլորն էլ գլխարկները

վերցրին և պահեցին իրենց դռնին ու ես մի քիչ էլ զգացված՝ անուններով ծանոթացրի... սկսեցի Թադևոս մեծ պապիցս. պարսկերենով ներկայացրի... *«Զենաք Թայթավուս Ղարախանյան, փեղար բողոք է մոհթարամ է ինչաներ փա ջադ անդար ջադ քալանթար դարիյե Սիրաք Չարմահալ – այսինքն. մեծ պապիս անունը տալով, սերունդե սերունդ Քալանթար Սիրաք գյուղի Գյուղապետ»...* և զգացի, որ սիրտս գլմփաց, երբ պաշտոնյա հյուրերեր պապիս ձեռքը սեղմելիս կրկնում էին «Մեծ պատիվ ունենք քեզ հանդիպելու, որ զինվոր Ղարախանյանը քո Թոռն է» և Թադևոս մեծ պապս մի ձեռքը դռնին մյուս ձեռքը գլխարկը ձեռքին, թաշկինակ չուներ երջանիկ արցունքի կաթիլները սրբեր, իր գլխարկի պոչով մաքրեց աչքերում լցված հուզմունքը... *«մոֆթախարամ...-պարծանք ունեմ այս հանդիպման»* ասելով զսպում էր հուզմունքը և գլխարկը դռնին գլխով խոնարհվում...նմանապես քալանթար Մկրտում Մանսուրյանին – Մկրտում Քեռուն- ներկայացնելիս նա էլ հուզվեց ասելով *«պարսկ. Խեշի խոշալ ամ, համչի չիզի խեշի փախտ նադիդամ - անչափ ուրախ եմ, էսպես բան երկար ժամանկ չէի տեսել»:* Ամենքին ծանոթացնելով բոլորն էլ հարզվեցին, վերջինը կտուր սարքով վարպետն էր, որ իր Թիշնիզ գյուղի բարբառով ասաց *«խոշվաղթոմ քե ի դաստան է դուազա դրախտ մոն է մաշուր քերդ, ախամդողլահ քարոմ ջադ քերդ -* ասեց թե բախտավոր եմ էս կտուր ծածկելու պատմության բերումով ճանաչվեցի և գործերս այստեղ գալուց հետո շատ է հաջողվել... ամենքը գլուխները բարձրացրին դպրոցի ծածկը նայելով և գեղեցիկ ու մաքուր ծածկի գերաները տեսնելով իմացողները խնդացին, որովհետև գիտեին այդ գեղեցեկ գերանները գյուղի որ բաղչայից էր կտրած բերած և չիմացողներն էլ զարմացան, հրճվեցին և հետաքրքիր հարցերով դիտեցին բոլոր դասարանները և ուսուցչի սենյակը և ուրախ ու զվարթ տրամադրությամբ մտան՝ արդեն փռած ու պատրաստ ուտելիքներով հսկա սփռոցի առջև: Կառավարության պաշտոնյաներին և դուրսից եկած հյուրերին և քալանթարներին մի կողմ նստացրի մյուսներին էլ մյուս կողմ, զուռնան էլ դադարեցրի, և

ճաշի սպասարկողները անցան իրենց գործին, արդեն փլավի ու արդար յուղի բուրմունքը գոգոռում էր սոված ախորժակներ և մածունի ու պանրի կողքին դատարկ պնակները լցվում էին համով պլավով և ոչխարի մսով պատրաստած կառիով: Կանայք, որ ներկա չէին իրենց բաժինը դրկվեց գյուղապետի տանը մի մեծ ամանի մեջ, և իհարկե գյուղի խանութպան՝ փլավ սարքողին և գյուղի պահակ-դաշտվանին ապասպրել էի, որ հյուրերից հետո, ինչքան որ կերակուր մնաց գյուղի մզկիթը տեղափոխեն և բաժանեն աշակերտների միջև և գյուղի ճանաչված կարիքավորներին: Խրախճանքի, խոսքի ու գրույցի պակաս չկար և բարձր տրամադրության տակ մինչև իրիկնապահ կեր ու խումով և տաք տաք գրույցներով ժամանակը անցավ:

Ուտելիքների ամանների զրնգոցը և թեյի թասերի չրխկոցն էլ դադարել էր և բարձր տրամադրության ներքո ամեն մարդ իր անցյալի հաջողակ դիպվածներից էին պատմում ու իրար պատմությունները սիրելով քահ-քահ ծիծաղում ու քեֆ անում: Անդրադառնալով ուրախ մթնոլորտը զուռնա-դիուլուն նշան արի հանդարդ եղանակներ նվազեն: Պարսիկ կանայք գյուղի կտուրներին կանգնած իրենց խրախճանքը հայտնելով քի-լի-լի էին կանչում:

Աղբուլաղը՝ Չարմահալ գավառի այս հին հայկական և նոր պարսկական գյուղը նոր դպրոց ուներ...

Երբ ժամանակը մոտեցավ կերած խմած պաշտոնյա հյուրերին ճանապարհեցինք քաղաք, հարմար առիթով իրենց ականջին կամացուկ շնչացի, որ գնալու ժամանակ իրենց համար կապոց ունեն նվիրելու և փսփսացի «դրախտի զուլալ ջուր - սպարսկ. Արե հայաթ-ունեն իրենց համար որ Մամուքա գյուղի քալանթար Մկրտում Մանսուրյանն էր ձեռքով պատրաստել և բերել էր նվիրելու դպրոցի բացման առթիվ և իր ձեռքի գործն է..» և անմիջապես հասկացվեց, որ այդ դրախտի ջուրը Մամուքա գյուղում սարքած օդին է, բայց

Իսլամական կրոնի համաձայն հարամ է և բացարձակորեն հասարակ ժողովրդի համար անընդունելի է, սակայն ես գիտեի, որ բոլոր պարսիկ տղամարդիքն էլ ծածուկ խմում էին: Գնալու ժամը հասավ բոլոր հյուրերը գոհ մնացած իրենց տեսածից հատկապես Օրոջան քաղաքի կրթական դպրոցների տնօրենը և Ուսման Չորքի անմիջական ղեկավարը, որոնք խոստացան մի լավ գովելի գեկուցում կուղարկեն Ուսման Չորքի կենտրոնական վարչությանը Թեհրան մայրաքաղաքում, Իսֆահան քաղաքի մասնաճյուղին և Իսֆահանի ռադիոկայաններին և գնահատեն իրենց աչքով տեսած Ուսման Չորքի զինվոր-ուսուցիչ Ղարախանյանի հաջողությունների մասին... հրաժեշտի պահը մոտենում էր, Չուռնա-դիոյչիները արդեն հրաժեշտի պահը մոտ տեսնելով ավելի գորեղացրին իրենց նվագը, և այսքան շփշփոց ձայների մեջ առիթից օգտվելով ուսուցչական սենյակի մեջ պահած քալանթար Մկրտում քեռու բերած Մամուքու օղին՝ կրթական տնօրենին, ժանդարմերիայի մեծին ու տեղակալին և անմիջական իմ ուսման գորքի ղեկավարին թաքուն բաժին տվեցի իրենց հետ տանեն և նկատեցի որքան իրենց դուր եկավ, որ ամենից թաքուն այդ բանը արեցի: Քայլեցինք դեպի դպրոցի մուտքի մոտ կանգնած մեքենաները բարի ճանապարհ մաղթեցինք, իրենք հեռացան և մնացածս ազատ շունչ քաշեցինք: Գյուղացիներն էլ ուրախ-ուրախ վերադաձան իրենց տներ: Ինչ վճարումներ, որ պիտի անեի պահակին-դաշտպանին ապսպրեցի նրանց հերթով կանչեցի զինվոր-ուսուցչի սենյակ, բոլորին իմ անձնական հաշվից վճարեցի և ուրախությամբ ամենքին ճանապարհ դրի:

Մնացին Թադևոս մեծ պապս և Մկրտում քեռին, նրանց թողնելով տաք տաք գրույցների մեջ, գնացի գյուղամեջ և գյուղի պահակի օգնությամբ, մեծ մամիս ընկերակցեցի և տեղաշորների հետ վերադարձանք դպրոց: Դպրոցի բացումը բոլորիս կարծիքով անչափ հաջող էր:

Ամեն տեղ ուրախություն էր տիրում, մի քանի օր շարունակ որոշ ունևոր գյուղացիներ պատիվ ու հարգանք մատուցելով և

զնահատանք ցույց տալու նպատակով ընթրիքի հրավիրեցին Թադևոս մեծ պապիս, Եղիսաբեթ մեծ մամիս և հարգելի քեռի, քալանթար Մկրտում Մանսուրյանին, թեպետ պարսիկ գյուղացիները, իբր մուսուլման, գիտեին որ քրիստոնյաի հետ մեկ հացի սեղանին նստելը անհարմար է, բայց բոլոր գյուղը գիտեին, որ իրենց գյուղի զինվորական-ուսուցիչ Ղարախանյանը, իր տնում Ղորան Սուրբ գիրք է կարդում և զինվորական-ուսուցչի հյուրերը այդ սուրբ գիրքը տեսել և շոշափել են և Չինվորական-ուսուցչի Ղարախանյանի բարեկամներն էլ **ՀԱԼԱԼՎԱԾ** են և ընդունելի է մուսուլման մարդու համար:

Մերոնք պատիվ ու հարգանքի պակաս չտեսան և պարծանքով լցված վերդարձան Մամուքա և Սիրաք գյուղ...Ավանդ և ափսո՛ս, որ թե քալանթար Թադևոս մեծ պապս և Եղիսաբեթ մեծ մամս և քալանթար Մկրտում քեռին և Հաջիաբադի քալանթարները բոլորն էլ մինչև այդ տարվա աշնան վերջը տուն-տեղը ծախելով տեղափոխվեցին Նոր Ջուղա և մոտ երեք հարյուր տարվա Հայ գյուղացու արմատը քանդվեց հինվառուրց Պարսկաստանի Չարմահալ գավառից:

Նոր դպրոցի շենքի բերումով աշակերտության թիվը հասավ քսան հինգ տղայի և յոթ աղջկա, որոնք ուրախությամբ էին դպրոց հաճախում, և երբեք չէին բացակայում: Բացի գրել կարդալուց մարզական խաղերի մասին մտածելով, տղաներին երկու ֆուտբոլի թիմի իսկ աղջիկներին էլ երկու դաջբոլի թիմի բաժանեցի, գնդակների դրամն էլ անձամբ վճարեցի: Ուսման Չորքի մինիստրությունը առաջին և երկրորդ դասարանի մակարդակի համար միանման մեկ դասագիրք էր ծրագրել և յուրաքնչյուր գյուղին քսանից-երեսուն գիրք էր հատկացրել: Աղբուլաղ գյուղում դասագրքերի թիվը աշակերտների թվից պակաս լինելու պատճառով աշակերտությունը այնքան էր գրքերը զգգգել որ մինչև տարեվերջ գրքի վերջին էջերը հագիվ էին կարդացվում: Հիշենք որ ամեն աշակերտի մեկ գիրք չէր հասնում և

պարտավոր էի տղաների պարագայում մեկ գիրքը հատկացնելի երկու աշակերտի և աղջիկներին՝ ամեն մեկին մեկ գիրք: Գյուղացիները լցվել էին լի հույսերով: Գյուղի փողոցները, հողի ու փոշու փոխարեն, մանր ավագով լցրած ճանապարհներով էին երթնելում, բակերը դասավորված ու կոկիկ, մզկիթը լուսավորված ու զարդարված իսլամական մարգարեների մեծ նկարներով և աղոթք կարդալու բաժնում, որ դեռ հին եկեղեցու խորանի առաջն էր երկու կտոր գույնզգույն կարպետով ծածկված, գյուղի բաղնիսը մաքրված անճոռնի մամուռներից, մի խոսքով կարծես Աղբուլաղ գյուղը հայաթափությունից հետո նորեն իր երեսի փոշին մաքրել էր և նորեն հին տեսքն էր գտել և նոր շնչով էր շնչում: Այդ տարվա Աշնանամուտին հողագործի դաշտային աշխատանքը դադարեց և գիշերները գնիվոր-ուսուցչի այցելողներս շատացան և մուսուլման գյուղացի հյուրերը գիտեին որ այցելողներին բաց գրկով էի ընդունում, ուստի սովորաբար թեյնիկս միշտ պատրաստ էի պահում հյուրերի համար: Այցելողներիս շատերի համար զարդարած Ղուրան սուրբ գիրքը գրավիչ էր և գրեթե բոլորն էր սենյակս ներս գալուն զարդարած Ղուրան սուրբ գիրքն էին որոնում որպեսզի ձերքով շոշափեն, Աստծո անունը հիշեն և նստեն. թվում էր թե քրիստոնյայի այցելության գալով ու մի սեղանի նստելով մեղք էին գործում և նախքան մեղք գործելը այցելությունը ՀԱԼԱԼԵՑՆՈՒՄ էին: Հետաքրքիր է, որ երբ առաջարկում էի Ղուրանը Արաբերենի փոխարեն, առաջ պարսկերեն թարգմանությունը կարդան նախնտրում էին նախ ոչ-հասկանալի Արաբերենը կարդալ, հետո պարսկերենը: Միայն երկու անձ կային որ միայն սուրբ գրքի անունը տալով արագ անցնում էին օտար հարցերի և իրենց տաղանդները ցուցաբերելու միջոցներ էին փնտրում և ինձանից խնդրում, որ եթե կարելի է նրանց ներկայացնեմ Իսֆահանի Ռադիոկայանին: Նրանցից մեկի անունը Սաֆար Ալի Սաֆֆարի էր, որ գրել կարդալ գիտեր և մի քանի կտոր պոեզիա էր գրել և մյուսի անունը՝ Հայդար Ղանբարի, որ հոյակապ ձայն ուներ և Չարմահալի բնության գովքերի երգերն էր երգում: Պատահաբար մի քանի օրվա

համար Նոր Ջուղա էի գնացել Թաղևոս մեծ պապիս և Եղիսաբեթ մեծ մամիս այցելության, որ Սիրաք գյուղից նոր էին տեղափոխվել Նոր Ջուղա և Համամի Փողոցը տուն էին վարձել: Սովորաբար, Թաղևոս մեծ պապս և Եղիսաբեթ մեծ մամս իրիկնապահին հինգի մոտերը թեյի պատրաստելու մշակույթը շարունակում էին: Մեծ մամս իրենց ոսկեփայլ մանդալի մեջ ածուխ վառելով թեյի պատրաստություն էր տեսնում և երբ ածուխը լրիվ կարմրում էր ոսկեգույն մանդալը իր փայլուն պղնձյա մաղաշով սենյակը ներս էր բերում դնում ռադիոի մոտ, որտեղ Թաղևոս մեծ պապս պիտի թեյնիկին թեյ ավելացներ, կրակը բզբզեր մինչև ռադիոյի հաղորդումները սկսեին: Այնպես ստացվեց, որ մի իրիկնապահ Իսֆահանի ռադիոկայանին լսելիս Թաղևոս մեծ պապս կանչեց «Ազիզ արի... Աղբուլաղ գյուղի ու քու անումն են տալիս ...վազգե'...»: Ռադիոյի հաղորդումներում Չինվորական-ուսուցիչ Ղարախանյանի մասին գրված զեկույցը ընթերցվեց, հենց այն գրավոր զեկույցի խոստումը, որ մեր պաշտոնական հյուրերը դպրոցի բացման օրը խոստացել էին: Մեծ պապիս ու մեծ մամիս ուրախությանը չափ չկար... կարծես այդ վարկյանից հետո ոչ ոք մնացած հաղորդումը չսեց:

Հոգեկան հրճվանքից, Թաղևոս մեծ պապս սկսեց նորից վերհիշել դպրոցի բացման օրվա եղելությունը և հյուրերի հետ իր գրույցները սկսեց նորից կրկնել...

Այդ առիթից օգտվեցի և Աղբուլաղ գյուղի երկու տաղանդավոր անձանց ներկայացրի ռադիոկայանին և խնդրեցի, որ եթե հնարավոր լինի իրենց հրավիրեն Իսֆահանի ռադիոկայան այդ երկուսի տաղանդը ցուցադրելու: Երկար ժամանակ չանցավ, որ ամենայն հաջողությամբ այս երկուսը կառավարության ծախսով հրավիրվեցին Իսֆահան քաղաք և իրենց տաղանդները ցույցաբերեցին. այս ռադիոհաղորդումները ինձ շատ պարզերես դարձրեցին շրջակա

գյուղերում խանութպանների միջոցով, որովետև հաղորդումը լսել էին և ծանոթ անուններ լսելով լուրը տարածել էին իրենց գյուղերը:

Չմենը հասավ իր դժվարություններով և պիտի մտածեինք դպրոցի ջերմացման որևէ վառելանյութի մասին: Դպրոցը ուներ միայն մեկ վառարան մեծ դասարանի մեջ և այդ պատճառով փոքր դասարանները գոցել էի մինչև գարնան գալը: Սպիտակ նավթը միայն ամենաէժեան վառելիքն էր վառարանի համար, որովհետև նավթը չափազանց էժան էր. օրինակ ընդհանուր ձմռան վառարանի ծախսը այն օրերին եղավ 640 ռիալ, որի ծախսը երեք գյուղացիներ վճարեցին: Իհարկե այս վառարանի ծախսը չէր կարելի նման ձև շարունակել և նորեն ու նորեն հենց նույն երեք անձից խնդրեցինք իրենց բարեգործությունը քանի տարիներ շարունակեն...մտածեցի դպրոցի վառելանյութի ծախսը կառավարությունից խնդրել: Երկար մտածելուց մի հնարք մտքովս անցավ... արդեն ծանոթ էի թագավոր Մոհամեդ Ռեզա Փահլավի ազգային ռազմավարական Սպիտակ Հեղափոխության վեց (6) կետանոց ծրագրի նպատակներին և դրանց կիրառման գործելակերպին և նույնիսկ գիտեի, որ աշնան սկիզբը գյուղատնտեսության նախարարությունը գյուղերում, ամեն աշնան վարկ էր որոշում ցանկացող գյուղացու հողի մշակման կարիքների համաձայն: Օրինակ արտերի պարարտանյութի, վար ու ցանքի, ջրի ու անասունների կերի պահանջը արձանագրելու և պակասի համաչափ դրամ հատկացնում գյուղացուն, որը արձանագրվում էր՝ ունենալով գյուղապետի և մեկ մյուսի վկայությունը, նպատակ ունենալով հողագործի աշխատանքը ավելի արդյունավետ դարձնելու, որ մյուս գարնան թե գյուղացին իր պարտքը հետ վճարի և թե ավելի շատ բերք արտադրի:

Այս իմանալով խնդրանքի նամակ գրեցի մայրաքաղաք Թեհրան գյուղատնտեսության նախարարության, պատճենահանման հարմարություն չունենալով, երկու անգամ վերարտագրեցի և ուղարկեցի Ուսման Չորքի Չարմահալ Գավառի Կենտրոնական կոմիտեին Իսֆահան քաղաքում և վերջին պատճենը իմ ղեկավարին, Իսֆահան

նահանգում Բորուջեն քաղաքում: Խնդրագիր նամակիս մեջ առաջարկեցի եթե կարելի լիներ, միայն հինգ տարով, Աղբուլաղ գյուղին ագրերային վարկերի հետ միասին, ներառվեր ձմռան եղանակի դպրոցի ջեռուցման բյուդջեն, որ մի չնչին գումար էր կազմում միայն 640 Ռիալ և ավելացրի որ լավ կլիներ գումարը հանձնվեր պատասխանատու գյուղապետին որ պարտականություն ունենար գյուղի դպրոցի ջեռուցմանը... մինչև գյուղացիները հինգ տարի անց, մի նոր ելք գտնեին:

Գարնան շունչը Փետրվարի վերջին օրերին Ղալե-Քեշիշ (Տերտերի Բերդ) դալի բլուրի փեշերից հալում էր ձյուները և պղնձյա հողի գույնը երևում և նկատելի էր, որ ամեն նոր օր ճերմակ ձյունի վարագույրը նկատելի չափով վերև էր քաշվում և արդեն մոտենում էր պարսկական ՆՈ-ՌՈՒԶ-ին՝ նոր տարվան: Աշակերտները այս օրերին նմանվում էին թռվռան գարնան ուլիկների և անդադար դուրս ու ներս ցատկոտում և իրենց դասերից նոր սովորած նախադասությունները բարձր ձայնով գոց ասում՝ կարծես ուրախանում էին, որ մի նոր բան են գտել իրար ասելու և ուրախանալու... այս տեսարանը ինձ հիշեցնում էր, Մասջեդ Սուլեյմանում, Չավեն անունով, իմ փոքր տարիների համագյուղացի խաղ-ընկերոջս, որ Մասջեդ Սուլեյմանում ամառային բաց երկնքի տակ քնելիս, երբ պլալան աստղերով լի երկնքի տակ դրսում էին քնում և ինքը հիանում էր այսքան գիշերային գեղեցկությունից և հուզմունքով լցվում և այդ բոպեին որևէ մի հմայիչ պոեզիա չէր հիշում, բացի իր դասագրքից գոց արած մի խրատական տող և իր ասելով *“պարծանքով աստղերին ի թամաշա անում ու հեյ ասում հյեղ ասում... «ԹԱՎԱՆԱ ԲՈՎԱԴ... ՀԱՐ ԲԵ ԴԱՆԱ ԲՈՎԱԴ, ՉԵԴԱՆԵՍՀ ԴԵԼ Է ՓԻՐ Բ ՕՌՆԱ ԲՕՎԱԴ»¹:*

... Ինչ քաղցր և հուզիչ հիշողություն...

Հենց այս հիշելով որոշեցի մի նորություն մտցնել այս սերնդի մտքում և իրենց պարսկերեն հայրենասիրական երգ սովորեցնել և այդ

¹ - Ֆիրդուսու Շահնամեի տողերից՝ Չորավոր է այն որ գիտուն է, գիտությունից ծեր սիրտը երիտասարդ կդառնա:

խմբերգը պիտի լրիվ աշակերտությունը խմբովի երգեր... մտածեցի հայրենասիրական “ԷՅ ԻՐԱՆ” երգի մասին և ուրախացա որ լրիվ բառերը դեռ հիշում էի... ուրեմն որոշեցի թվաբանության դասի օրերին, դասարանի վերջում խմբերգը սովորեցնել:

Հավանաբար միայն այս նախկին հայկական գյուղում մի հայ զինվորի միջոցով հնչի խմբերգի մեղեդին՝ ինչպես հայ գյուղացին է երգել է «Ամպի տակից ջուր է գալիս կամ Համբարձում յայլա», այսպես գոնե հայաթափ հայկական գյուղի ննջեցյալները լսեն...

Աղբուլաղ գյուղում, առաջին անգամը լինելով, աշակերտությանը, խմբային երգ էի սովորել և նկատում էի, որ ինչքան սիրով ու հրճվանքով էին ջանում անգիր անել և իրար հետ փորձեր կատարել... Խմբային երգը պարսկական հայտնի հայրենասիրական երգն էր “*Էյ Իրան էյ մարզ է փոքր գոհար*”: Նույն ժամանակ մտքովս անցավ պարսկական նոր տարվա գալստյան օրերին... առիթից օգտվեմ և պարսկական օրացույցի համաձայն Մարտ 21-ին պարսկական ավանդական տոնակատարություն դասավորեմ... մտածեցի... բայց որտեղ և ինչպես?

...Հիշեցի մեր ՀԱՄԲԱՐԶՄԱՆ տոնակատարությունը հենց մեր Սիրաք գյուղում:

— Հիշեցի մանկությանս գյուղի այն երազային վառվռուն ու պսպղուն ոսկյա օրերը թե ինչպես և որտեղից էլ եղել էր ամեն ընտանիք անխնա պիտի լեռների փեշին բնության գրկում տոներ համբարձման տոներ: Ուլքեր ձի, ջորի ունեին կարծես ներկայիս ժամանակի վերջին մոդել մեքենա ունենային, ուլքեր էլ անասուն չունեին անխտիր նախորդ օրը մոտակա գյուղերից կամ ձի կամ ջորի էին վարձում կամ որևէ անասուն պարոք էին անում և համբարձման նախորդ գիշերը ամեն մի գյուղացու բակից զանգ ու զրնգոցների ձայներ էր լսվում և փոքր ու մեծ չարանճի տղա-աղջիկները հենց նախ-համբարձման գիշերին էր որ մինչ ուշ գիշեր խաղում ու վազվզում, գուցե և սիրային ճատիկ համբույրներ

թոցնում և համբարձման տոնակատարությունը մի օր առաջ սկսում:

Համբարձման արշալույսին փոքր ու մեծ գույնզգույն հագուստներ հագած խինդ ու ծիծաղով, ուտելիքները և բեռները բարձած էշերին, նոր հարսները ձիերին նստած, ընտանիք առ ընտանիք, շարան-շարան մի հսկա հրճվանքի կարավան էր դառնում ու քշում էին դեպի լեռների փեշին մի ծառոտ աղբյուրի և ծառների շուրջ ամեն մի ընտանիք իր տեղը գտնում, գորգը փռում, կրակներ վառում և կարմրած ածուխներ փոխանցում մանդալների մեջ, ամալարները աղբյուրի ջրով լցնում, կերակուրների դազանները կրակին մօտեցնում և մի ամբողջ գյուղ ուրախությամբ սկսում քեֆը: Չախ ու աջից վզվզոց ու ճվճվոց ու բողազից բխած ճիչն ու հրճվանքի ձայները դղրդացնում էին լեռնաշխարհը, թվում էր թե լրիվ երկրագունդն էր կատարում համբարձման տոնը: Տոն էր, սար ու ձոր ուրախության ու ծիծաղներով լցված՝ երկինք բարձրացնում դարից եկած այս ավանդական տոնին և թվում էր թե, ամեն մարդ իրեն օրվա հերոս էր զգում: Այս պատկերները հիշելով, երևակայում էի, որ հենց նույն տոնին հենց այս Աղբուլաղ գյուղի հայ գյուղացին հենց նույն օրվա տոնին այս գյուղում և հենց այս բլուրի փեշին Տերտերի Ղալի աղբյուրի շուրջ Համբարձում է տոնել, երգել, պարել, ճառ խոսել, երազելով իրեն տեսնել իր կարոտած հայրենիքի գրկում և այդ երազի իրականացման կենսացն է խմել և այս սար ու ձորերը թնդացրել հայ գյուղացու սագով ու դիտրով և Համբարձման երգելով:

Այս հիշողության պատկերներից մտքումս մի տոնական գաղափար ծագեց՝ «Դե... Աղբուլաղ գյուղի հայրենատարձ հայ գյուղացու հիշատակին, նման մի տոնի սկիզբ դրվի այս Հայաթախի Աղբուլաղ գյուղի պարսիկ գյուղացիների համար»: Մտածելով պարսկական Նոր Տարվա “ՆՈ-ՌՈՒԶԻ” տոնի մասին որ անչափ նման է մեր համբարձման տոնին, իհարկե մերը կրոնական է, բայց պարսկականը՝ ազգային ավանդույթ, ուստի որոշեցի ի հարգանք մեր հայ գյուղացի հայրենատարձ մարդականց հիշատակի, մտքիս մեջ պատկերացրած

Պարսկական Նոր Տարվա տոնին, սազ դիոլի, փլավի, դանդ ու չայի ծախսը անձամբ վճարել և պարսկական նոր տարվա *տասներեքերորդ օրը* բոլոր աշակերտությանը իրենց ծնողներով, սազ ու դիոլով գնանք դեպի բլուրի վրայի Տերտերի Ղալա աղբյուրը և տոնենք պարսկական Նոր Տարվա *տասներեքերորդ օր «սիզդա-բե-դարը»* պարսկական ավանդական տոնը և հույսով որ սովորույթ կը դառնար պարսկական գյուղացու համար: Այնպես ծրագրեցի որ այդ օրվա սկզբին Աղբուլաղ գյուղի դալի դուռը մի քիչ սազ ու դիոլով սկսենք հատկապես կանանց և աղջիկների համար խնջույքի տրամադրություն ստեղծել, մինչև եկողները հավաքվեն և պար ու զվարճանքով գյուղի մեծ պապ-մամերին էլ խրախճանք տեսնելու առիթ տանք և ջահել մեծամասնությունով Տերտերի Ղալա աղբյուր բարձրանանք: Նախապես, մինչև այդ տոն օրվա հասնելը, աշակերտությանը մի փոքր տեղեկություն տվեցի նախ *սիզդահ-բե-դար* օրվա մշակութային նշանակության և մեկնաբանության մասին և խնդրեցի իրենց տներում խոսեն այդ մասին: Այդքան գիտեմ որ այդ օրվանից ամեն մարդու խոսք ու գրույցը հենց այդ օրվա ծրագրի և ուրախության մասին էր հատկապես, որ իրար ասում էին, որ զինվոր Ղարախանյանը սազ ու դիոլ է բերելու, փլավ մլավ ենք ուտուլու և այլն...



Աղբուլաղ-1962- Սիգդա-բեդար

... Այդ օրը հասավ, մեծ ուրախություն էր տիրում, ով ինչ վառվառն զգեստ ուներ հագել էր, կարծես լրիվ գյուղը ոտքից գլուխ գարդարվել ու մի անտեսանելի հրճվանք էր ապրում. Հավանաբար միայն իմ սրտում էր մի ծածուկ տխրություն տիրում. ինձ թվում էր թե Աղբուլաղ գյուղի հայ գյուղացիներն էին համբարձում կատարում, հուզված անդադար կապույտ երկնքին էի նայում: Հուզմունքս կույ տվի և նշան արի սազ ու դիուչին որպեսզի քայլեն դեպի տոնական վայր «Տերտերի դալա» աղբյուր. ..

Գյուղի պահակը (*դաշտվանը*) բարձրաձայն հայտարարեց, որ սար գնացողները իրենց պիտույքները վերցնելով սազ ու դիուչու հետևից հանդարտ քայլեն դեպի աղբյուր և այսպես գյուղը թողինք ծերուկներին, տղամարդիք “Դուռնա Բազի” խաղալով, տիկնայք պար ու քի-լի-լի կանչելով քայլեցինք դեպի գյուղի հյուսիսային բլուրների գլխին

գտնվող տերտերի դալա աղբյուրը. այնտեղ վաղուց գյուղի խանութպանը դազաններով լի փլավի պատրաստություն էր տեսնում: Խրախճանքի բանակը հասավ բլուրի փեշին, որտեղ երկու չինարի ծառ հսկում էին Տերտերի դալայի չորս պատի փլված վերջին քարայիճները¹ և գուլալ ջրի աղբյուրը: Հայրենադարձ նախկին հայ գյուղացին աղբյուրի շուրջի հողամասը հարթացրել և հարմարացրել էր ավանդական տոների համար, որտեղ շրջապարեր էին պարելու և երազային հայրենական երգեր էին երգելու... մտածելով այդ մասին թվում էր թե նույնիսկ աղբյուրի գլխան ջրի կրչկրչոցը հայեցի էր հնչում և հայ գյուղացու հայրենասեր բոցկլտող շունչի մոխրացած հոտն էինք առնում...սրտի մեկ կողմից նոր պարսիկ գյուղացու հետ ուրախանում և սրտի մյուս կողմից նախկին հայ գյուղացու հիշատակից տխրում: Հրճվանքների աղմուկը դղրդում էր շրջակայքի լեռնաշխարհը:

Ձախից ու աջից գուցե տասնյակ անգամ շնորհակալության խոսքեր էին ասում ինձ, այսքան անսպասելի ուրախության առիթներ ստեղծելու համար. Իսեղճ գյուղացիք իրենց կյանքի ընթացքում այդքան խմբային ուրախություն չէին տեսել և իրենց ասությամբ միայն հարսանիքների ժամանակ էր որ սազ ու դիդի ձայն են լսել և ուրախացել, բայց ոչ թե գյուղովի իրար շուրջ հավաքվեն և տոներն զարման առաջին օրը, որը ամեն անհատի տոնն է : Հրճվանքը շարունակվեց մինչև իրիկնապահ և ուրախությունը բլուրներից իջեց և վերադարձավ գյուղ և այս պատմական օրը մնաց ասպագա գրույցների նյութ: Օրվա վերջում ծրագրեցի, որ նորեկ պարսիկ գյուղացուն մի պարսկական ժողովուրդական խմբային երգ սովորեցնեմ. օրինակ մեր ջանգյուլում կամ համբարձում յայլայի նման երգեր, որ հայրենադարձ հայ գյուղացին հենց նույն այս աղբյուրի շուրջ է երգել: Ինքս ինձ մտածեցի որ այդ ինչից է, որ այս նորեկ պարսիկ գյուղացին ապրելով հենց նույն հայ մարդու տանը, հաց թխել նույն հացի թոնիրով, ի՞նչպես է, որ նույն հայի նման երգ չունի... մտածեցի և էլի տխրեցի հայության անցյալի մասին...և կարծես գոհունակություն էի ստանում մտածելով որ հայ գյու-

¹ - Գյուղական աղյուս:

ղացին գնաց իր երազանքների հայրենիքը: Այդ օրվա ընթացքում մի քանի տեսարան նկարեցինք, այդ օրերին նկարելու ապարատը մի քանակուսի տուփ էր, որ փոքր ապակի լուսանցք ուներ և երկու ձեռքով բռնելով վար պիտ նայեիր օրյեկտը տեսնվեր և կոճակը բթամատով սեղմվեր ցած և ֆիլմը փոքր գլանակի պես մտցվում էր տուփի մեջ... միայն քսանչորս պատկեր կարելի էր նկարել և երբ հաշվիչ թիվը հասնում էր քսան չորսի, ապարատը պիտի մի մութ տեղում բացել և ներսի ֆիլմի գլանը հանել նկարը տպելու համար: Այս նկարները Նոր Ջուղայում տպեցի և տեղադրեցի դպրոցի պատին. Այս նկարները այնքան հետաքրքրություն առաջացրին, որ կարծե՞ծ թանգարանի մատյան, խումբ-խումբ տեսնելու էին գալիս, նայում, զարմանում, խնդում, ծիծաղում և չէին հավատում, կարծես հրաշք էին տեսել, իրար ասելով որ «միթե կարելի՞ է, էս պատկերը էս եմ»: Այսպիսով ուզեցի մի հիշատակ թողնել, նախկինում տիրող հայ մարդու հոգեբանության հայրենիքի վառվող կարոտի մի պատկեր, որ այդ օրվա պատկերները հիշվի տարիներ իբրև հարզանքի հիշատակ մեր հայրենասեր ՀԱՅ գյուղացու ավանդույթի և մշակույթի հզոր հոգեբանության, որ թափանցում է Հայ մարդու հոգու խորքը և օրինակ ծառայի նորեկ պարսիկ գյուղացուն, որ շարունակի այդ ավանդույթը և գա մի օր, որ ա՛խ քաշելով հիշի և մյուսներին պատմի հայերից թողած այսքան գեղեցիկ ու քաղցր սովորությունը:

Գյուղը նոր շունչ էր զգում, մաքրված բակեր ու փողոցներ, դալի դուռ ու դալի հետև, մի մաքուր դպրոց իր նոր ու լայն ճերմակ ու կանաչ ճամփով, լայնատարած խաղալու բակ, մաքրագարդված հայկական հին եկեղեցին վերածված նոր մզկիթի, գետինն ու երկինքն լցվել էր մարդկանց ու անասունների կանչերով...բայց ...չկար որևէ հայի ձայն, չէր լսվում «Պողոս...Պետրոս...Անդրանիկ...», ոչ որ չէր կանչում «արի...գնա...բա որտե՞ղ ես»: Հայ գյուղը լրիվ տեղաքանդվել և ներգաղթել էր Հայրենիք և այս տեսնելով մի կողմից ափսոսում և մյուս կողմից երագում, որ գաղթողները մի ավելի բարգավաճ ապրելակերպի հասած լինեն երազելի Հայրենիքում:

Աշակերտության տարեվերջի քննություններն ավարտելով ուսուցչագինվորական պարտականությունս իր ավարտման էր հասնում և շուտ թե ուշ պիտի գյուղը թողնեի գյուղացուն և մի նոր աշխատանք գտնեի: Ղեկավարս առաջին և երկրորդ դասարանների տարավերջի քննության հարցերը գյուղ բերեց և պատվիրեց, որ քննության արդյունքները ինչ էլ որ լինի անտեսեմ և բոլոր աշակերտությանը նշեմ «*փոխված*»:

Վերջապես ծնողների ուրախության օրը հասավ: Այդ օրվա համար նախորոք գուղի խանութպանից գնել էի 30 թեյի բաժակ և պնակ գյուղի մզկիթին նվեր, բայց որոշեցի իբրև բարի սկիզբ և հաջողության հոգաբանություն, բաժակ պնակները Ղուրանի շնչով օրհնվի գյուղի ծերուկ պապի ընթերցումով, երիտասարդ տղամարդ ծնողներից խնդրեցի, գյուղի պահակին օգնեն ծառայություն մատուցի և գյուղի պահակին դրամ տալով ապսպրեցի գյուղի խանութից անուշեղեն և թեյ ու շաքարի գումամներ անի, ծնողներին կանչեցի և դպրոցի բակում թեյի և անուշեղեններ նվիրելու պատրաստություն դասավորեցի. և իմ նշանով, թեյ ու անուշեղեն մատուցի ծնողներին և աշակերտներին: Փոքրիկ կտրոնների վրա աշակերտների անուն-ազգանունը գրել էի և մեկիկ-մեկիկ անունները կանչելով իմ մոտ, յուրաքանչյուր կտրոնը հանձնելով կողքիս կանգնած գյուղապետին, խնդրեցի ինքը իր գյուղի տղաաղջիկ զավակներին մոտիկից տեսնի, գովասանքի խոսք ասի, և խնդրի ամեն աշակերտի համար ծափահարեն:

Նախորոք գյուղապետից խնդրել էի իր լեզվով հայտարարի, որ ծնողները հերթաբար, իրենց զավակի հետ գնան և ստանան իրենց անուշեղեն և թեյն ու շաքարը: Փակման արարողությունը երկար շարունակվեց և ամենայն հաջողությամբ և ավարտվեց Ուսման Չորքի ուսուցիչ և զինվորական Ղարախանյանի զինծառայության արդյունավետ պարտականությունը: Արդեն շատերը ուրախանալու պահին իրենց տխրությունն էին հայտնում զինվոր-ուսուցիչ Ղարախանյանին կորցնելու, բայց նաև ասացին «գոնե մի կողմից ուրախ էին որ առիթ ունեցան մոտիկից տեսնեն և շփվեն, ճշմարիտ և սրտցավ կառավարա-

կան պաշտոնյաի հետ»։ Մի երկու փոքրիկներ էլ կմկմալով ասացին «սարքար...աղա մողիր...մո նիխոմ թո բերի – *պարսկ*...*սիրտներս չի ուզի դու գյուղից գնաս*»։ Երկու օր անց, հրաժեշտի պահը հասավ....

Մեկ ճամպրուկ և մեկ հեծանիվով եկա Աղբուլաղ գյուղ և հենց նույնպես էլ վերադառնում էի։ Հրաժեշտի օրը լրիվ գյուղը իրար լուր տալով մեծ ու փոքր հավաքվեցին դպրոցի դռան ինձ ճանապարհ դնելու։ Աշնան սկիզբն էր և գրեթե բոլորն էլ իրենց կալի գործերը վերջացրել, գյուղատեր խանի բաժին տվել էին և ծանր աշխատանքներ չունեին։ Բոլորին էլ անձամբ ճանաչում էի։ Աղբուլաղ գյուղի ծերունի, գրեթե գրել կարդալ իմացող, կրոնամոլ ծերուկը, որ առաջին օրը ինձ գյուղին ծանոթացնելիս ասաց “այս գյուղի նախկին բնակիչները կներեք հեռը հեռը ձեզանից ԱՐՄԱՆԻ – պարսկ. հայ- են եղել և բոլորն էլ Հայաստան են գնացել ձեռքս առավ իր ձեռքերի մեջ և ասաց՝ «*պարսկ*...Սարքար Ղարախանյան..մոնե հալալ քոն...Մասջեդ քե իրոմ, աքսայե փեյամբար ու էմամարո քե իբինոմ բե եադե հագրաթալի միոֆտոմ, վո շարմոմ իբու...մա թո բերախշ»։ Մի խօսքով ինձանից խնդրում էր իրեն ներեմ հայ նախկին գյուղացիներին ոչ-մուսլման և հարամ համարելով և հատկապես տեսնելով մարգարեների պատկերները, որ անձամբ նվիրել էի մզկիթին։ Ծերունին ինձ շատ հուզեց, գլխարկը վերցրեց, ձեռքերս դրեց գլխին և կրկնեց իրեն հալալ անեմ և գլուխը խոնարհված սպասեց իմ պատասխանին։ Ձեռքերս գլխից վերցրի, գլխարկը իր գլխին դրի և իրեն ասացի որ ինքը իմ մեծ պապիս տեղ է և լավ մարդ է, լավ սրամիտ ուշիմ թոռներ ունի և խնդրեցի ոտքի կանգնի։ Ծերունուն հայտնեցի որ սենյակիս սուրբ գիրք Ղուրանը թողել եմ իր համար, խնդրեցի որ Ղուրան կարդալուց դրացիներին հրավիրի և պարսկերեն թարգմանությունը կարդա : Աչքերը լույս եկավ և շշմեց և դողդողալով շարժվեց, որպեսզի ձեռքս համբուրի, ես արգելեցի։ Ձեռքը դրեց

ճակատիս և խոսեց «Չինվոր Ղարախանյան որտեղ գնաս Մարգարեի ձեռքը քո հետ» և ամբողջը կրկնեց... «Դաստե Ալի բե համրաթ» (Ալիի ձեռքը քո հետ) և կանայք հեռու կանգնած «քի լի լի կանչելով» ինձ ճանապարհի դրին:

Ինձ տանող մեքենայի վարորդը վաղուց չամադանս ու հեծանիվս դասավորել էր և երկար սպասելուց հետո վերջապես մի շունչ քաշեց և ճանապարհի ընկավ դեպի մյուս հայաթափ Մամուռան գյուղը, որտեղ օտար գյուղացի հաճախորդներ էին սպասում՝ Օրոջան գյուղաքաղաք գնալու և ես այնտեղից պիտի ավտոբուսով Նոր Ջուղա գնայի, որտեղ ինձ սպասում էին Թադևոս մեծ պապ և Եղիսաբեթ մեծ մամս: Նոր Ջուղայում նրանք վերջիններից էին, որ թողեցին իրենց պապական Սիրաք գյուղը: Նշենք որ Սիրաք գյուղը Պարսկաստանի Չարմահալ գավառի վերջին գյուղերից էր, որ հայաթափ եղավ: Մեծ Պապիս ասությանը Սիրաք գյուղին հրաժեշտ տալու պահին ոչ թե միայն պարսիկ գյուղացիներն էին տխրում ու ոմանք էլ արտասվում, այլ, Խանլար մեծ հորեղբայրենց «խալ-խալի» անունով հավատարիմ շունը ավտոբուսի դռան առաջ պարկել պոչը տակը դրած, դունչը թաթերի մեջ գետնին դրած ճնգ-վնգալով գետնին քաշ էր գալիս ու Եղիսաբեթ մեծ մամս էլ մեղքը գալով ասել էր «խալ-խալի էլի գուքանք...մի լա»... և նման պատմությունների և հիշողություններով հայկական գյուղերը հայաթափ եղան և երեք հարյուր տարվա զարկող ու շնչով հայաբնակ գաղութի սիրտը, դադարեց բարախելուց ...

Նոր Ջուղա

Եկա հասա Նոր Ջուղա, Թադևոս պապ և Եղիսաբեթ մեծ մամիս տունը գտա, թեպետ ուրախություն բերեցի զինվորական ժամանակվա այդքան հաջող ավարտումից, սակայն շարունակում էի հուզվել հայկական գյուղերի հայաթափ լինելուց... սակայն մխիթարվում էի այն մտքով, որ գոնե գյուղերի հայությունը, ներգաղթեց իր երագների հայրենիք:

Նոր Ջուղայի հսկա հայությունը տեսնելով հրճվում և զվարճանում էի ու երբեմն մի կարծիքից սառնում, երբ մի ակնթարթ կայծակի նման մտքովս մի հարց էր անցնում...թե՛ «Արդյո՞ք Նոր Ջուղան այսքան հայությունով լի կարելի է մի օր էլ մեր հայաթափ գյուղերի ճակատագիրն ունենա» և այս տխուր պատկերից փրկվելու համար ինքս ինձ սիրտ էի տալիս և մտքիս մեջ խոսում... «երեկ գիշեր ենք երկու հատ հարսանիք տեսել, մեր դրացու տղերքն էին, Քովեյթից եկան և իրենց սիրած ծիտիկիների հետ ամուսնացան... սերունդը շարունակ անելու է... հալա էտ էլ ոչիչ... բա Ջուղան տեր ու տիրական ունի... այսքան զորեղ հայկական կուսակցություն գոյություն ունի և իրենք ասում են Հայ ազգի տերն են... ուրեմն երբ որ կարիք լինի, ազգին տեր են կանգնելու և չեն թողնի Նոր Ջուղան հայ գյուղերի ճակատագիրն ունենա» և ինքս ինձ պատասխանում էի... «դու գուլիս ունես, նոր աշխատանք գտիր ու ինքդ հենց քեզ ու քո ընտանիքին պահիր»:

Նոր Ջուղայում և իմ պապենցս տնում ինքս ինձ, երջանիկ փոքրիկ Հայաստանի մեջ էի զգում, բայց երբ «Չայենդե ռուդ» գետի մյուս կողմը Սպահան քաղաք էի անցնում, էլ ոչ Ջուղայի քաղցրահնչուն հայերենն էի լսում, ոչ խանութպանն էր հետդ հայերենով խոսում, ոչ Ամենափրկիչ Վանքի գլխի զանգակատան դողանջներն էր ականջիդ ընկնում ... կարծես զգում էի որ սառը ջուր են լցնում գլխիս և նոր երազից արթնանում ու խելքի գալիս և այսպիսով մտային աշխարհից իրական աշխարհ մտնում և ինքս ինձ հիշեցնում, որ պիտի փակելի ավստասանքի և հուզմունքի պատուհաները և աշխատանք փնտրելի:

**Նոր Ջուղա**

Այդ տարիներին Պարսկաստանում անգործություն էր տիրում հատկապես Նոր Ջուղայի հայության համար, բացի շոֆերությունից, անձնական ոսկերչական խանութներից, հատ ու կենտ մեխանիկ արհեստավորներից որ կամուրջը անցնելով Սպահան քաղաքում «Շափուր» փողոցի շարան մեխանիկների արհեստանոցներում էին աշխատում ու երեկնապահին շարան շարան հեծանիվների կարավանների պես Ջուղա վերադառնում: Կառավարական հիմնարկներում հայ չէին վարձում. Նոր մետաղաձուլարանը, որ Սովետական միությունն էր կառուցում Սպահան քաղաքից դուրս, որ պիտի հազարավոր մարդ վարձեր, այնտեղ էլ էր շինարարությունը վերջանար հայ չէին վարձելու, ուրեմն նոր աշխատանք փնտրողները կամ պիտի Քովեյթ գնային, որտեղ հսկայական քաղաքաշինության ծրագրեր կային և քսաներորդ դարի նոր Քովեյթ քաղաքը ամբողջովին նորից էր կառուցվում և հազար ու մեկ տեսակ աշխատավորի կարիք

կար, կամ էլ մեկնեին Պարսկաստանի հարավային քաղաքներ՝ Անդիմեշկ, Դեզֆուլ և Ահվազի մոտակայքում կառուցվող ամենամեծ ջրամբարը «Սադդե-Դեզ» անունով, որտեղ գործ չիմացող մարդու համար չափազանց սահմանափակ առիթներ կար և այնքան դժվար էր վարձվելը, որ այդտեղ վարձվելը Աստվածային օրհնանք էին համարում: Նավթային ընկերությունը դեռ գնալով պակսեցնում էր աշխատավորների թիվը և միայն նավթի քիմիական մասնագետներ և նավին ուղեկցող (port pilot) սովորողներ էին վարձում Պարսից Ծոցի նավահանգիստների համար: Այդ ժամանակ հայ մարդու մտքում Պարսկաստանից դուրս գնալու միտք անգամ չկար, միայն հայրենիք, Հայաստան: Որոշ ընտանիքներ դեռ Սովետական Հայաստանի օրոք, նախքան անկախությունը ընտանիքով ներգաղթեցին Սովետական Հայաստան: Այդ տարիներին (1955-1960). Հասարակ հայ մարդու համար ոչ Ամերիկայի ճանապարհ կար ոչ էլ Անգլիաի, այդ երկրները միայն մեծահարուստներին էին ճանապարհ տալիս: Սրանց թվում հատ ու կենտ հայ մեծահարուստ Ջուդաեցիներ կային, որ անգլիամոլ էին և իրենց ծնողները Անգլիայի կայսրության (British Empire) չարամիտ ու ԽՈՐԱՄԱՆԿ ծրագրի մեջ մտան և իրենց ընտանիքներում անգլիացի ջահել տղերքին տեղ տվեցին իբրև զարդեղեն սարքավորումների աշակերտ, և փոխադարձ անգլերեն սովորեցին, իրենց ազգին հետև անելով այդպես անգլիամոլ մնացին և ցավով հիշենք, որ վերջն էլ տուն ու տեղով ու հարստությունով գաղթեցին իրենց սիրած Անգլիա... և այնտեղ մոմի պես հավեցին և կորուստ ապրեցին, ինչպես նավն է խորտակվում ծովի տակ իր հարստություններով:

Բանն այն է որ Անգլիացիները Սպահանի պալատականների միջոցով ծանոթացան հայ մեծագույն հարուստ վաճառականների հետ, չարամտորեն մտերմացան և ուսումնասիրեցին հայ հարուստ վաճառականների կենցաղը և նկատեցին հայության մեծածավալ

հարստությունը, և հենց այդտեղից ծրագրեցին Նոր Ջուղայի հայության հարստության տիրանալ (Տեսնել՝ Armenians in India by Mesrob Jacob Seth, chapter xxiv page 287: ...for promoting the interest of British East India company, they sent out young men from London to reside in the houses of the Armenians of Julfa (Ispahan) “to study their language and acquire their method of conducting business”): Խորամանկորեն օգտվելով քրիստոնյա և եկեղեցասեր զգացումքներից, որոշեցին Անգլիայից ջահել տղերքին ուղարկել Հայ Ջուղայեցի մեծահարուստ ընտանիքներում, որ այնտեղ ապրեն իբր Ջուղայեցի վարպետների ներկայացուցիչ, որ թե հայերեն և թե հաջող վաճառականության գաղտնիքները սովորեն, բայց իրականում հայ հարուստ Ջուղաեցու հարստության մանրամասը և տեղը իմանան:

Այսպիսով անգլիամոլ ընտանիքները սկսեցին գաղթել Անգլիա որովհետև թե հարուստ էին և թե իրենց զավակների ապագան Անգլիաում էին տեսնում:

Այս հարցում երկու հոգի մինչև օրս հավատարիմ մնացին իրենց սկզբունքներին ...մեկը բնիկ Ջուղաեցի Դոկտոր Հրանդ Դուկասյանն էր որ ասում էր «Պիտի ամեն օր Մոֆի Սարը տեսնեմ... քանի Մոֆի Սար կա իմ տան դիմաց Ջուղայից չեմ շարժվելու» և սիրելով ապրեց Նոր Ջուղայում, իր հսկայական հարուստ գրադարանը նվիրեց Նոր Ջուղայի Ամենափրկիչ Վանքին ու հենց իր սիրած Ջուղայում վերջնական հանգիստը գտավ: Մյուս անձնն էլ կրկին բնիկ Ջուղաեցի Ավո Հավաննիսիյանն էր որ խոստովանվել էր.. «ոչ մի տեղ չեմ գնա... եթե էլ Պարսկաստանից դուրս գնամ... կգնամ Հայաստան» և հենց այդպես էլ արավ:

Ավո Հավաննիսիյանը ընտանիքով, անկախության օրերին, տնով-տեղով ներգաղթեց Հայաստան իր հետ փոխադրելով հայկական մշակութային մեծ հարստություն, որոնց աչքի լույսի պես պահելով նվիրեց Մատենադարին և հարստացրեց հայոց մտքի պահեստները: Ավոն, հայրենիքում հրատարակեց իր “ԴԱՐՁ ԱՐՄԱՏՆԵՐԻՆ”

գիրքը և արժանացավ Մեսրոպ Մաշտոց շքանշանի: Այդ մասին Երևանում Հայացք շաբաթաթերթը տպագրեց հետևյալ տողերը.

«Ավոն իր 5000 միավոր ազգագրական նյութերի հավաքածուն է նվիրել պատմության թանգարանին: Այստեղ հազուստներ են, ոսկերչական գործիքներ, երաժշտական գործիքներ, ձեռագործ գորգեր, արդուզարդի առարկաներ, անգամ կահույք, կենցաղային տարատեսակ իրեր: Այդ թվում՝ նաև լուսանկարների հարուստ հավաքածու»:

Պարսկաստանի ժամանակի կառավարությունը հակասովետական ռազմավարության ուղեգիծ էր հետևում և այս բերումով Պարսկաստանում, հայկական կուսակցությունները հակահայաստանյան դիրք էին բռնել և այսպիսով Հայրենիք ու Հայաստան սիրողը համարվում էր ձախակողմյան և կոմունիստ: Նոր Ջուղայում այս կարգի հայրենասեր անձանցից էր բնիկ Ջուղաեցի հանգուցյալ Մանուկ Մարտինը, որին կուսակցությունները մոռացության պատերի հետև էին շարտել: Մի օտար ցավալի իրողություն այն էր, որ միահեծան կուսակցությունը¹, որ իրեն ազգի տերն է համարում, անտեսում էր այն անձանց, որ իրենց չէին հպատակվում, բայց իրական ծառայությունն էին մատուցում, երիտասարդ նոր սրնդին հոգեկան հզորության հասնելու գաղտնիքները սովորեցնում և իրենց միտքը կենտրոնացնում գեղարվեստի, երաժշտության և մշակույթի վրա, այսպիսով երիտասարդությանը փրկելու խուլիզանությունից... այդ թվում էր Սպահանի Համալսարանի Հայագիտական ամբիոնի պրոֆեսոր դեռ քառասուն տարեկան չեղած լուսահոգի Հովիկ Ալավերդյանը: Ցավով եմ կրկնում որ՝ հայության տեր ու տիրական «Դաշնակցությունը» փոխարեն ծնողի նման Հովիկ Ալավերդյանին իր ջիգարին կպցներ և գուրգուրեր, այս հսկա նվիրյալ հայ առաջնատար մտավորականին ժողովրդի առաջ ստորացնելու և ծաղրելու նպատակով էշի փալանի վրա Հովիկ Ալավերդեանի հորինած՝ գեղարվեստի սիրողների համազգեստ հագրեց և ծաղրելով Ջուղայի փողոցները պտույտ տվեց...բայց Հովիկ Ալավերդյանը, մնաց սիրված

¹ - Նպատակը՝ ՀՅԴ:

և հարգված, իր թարգմանած Գիտանջալի գրկույքը մինչև օրս էլ կարդացվում է և սեվերեսությունը մնաց կուսակցությանը: Արդյո՞ք այս ազգի տիրոջ բարի վերաբերմունք է, դե կարդացողը իմանա: Նոր Ջուղայում, այդ օրերին օդի մեջ շնչում էիր մտավորականություն և քաղաքականություն, ազգապահպանում, հայրենիք և մշակույթ: Աներևելի ՁԵՌ-ԶԵՐ-ը ազգին բաժանել էին ձախակողմ ու աջակողմ թևերի:

Հայ հասարակության հոգում իդեալիզմն էր իշխում օդը լցված էր մարդկային իդձերի, ձիրքերի և գույնզգույն ու վառվռուն փափագների ... սառը պատերազմի ժամանակաշրջանն էր:

Հայ հասարակության ազգային կյանքը աներևելի «կուսակցության» ձեռքերում էր գտնվում՝ եկեղեցի, դպրոց, ակումբ, մարզադաշտ, գերեզմանատուն, ազգային տներ ու հարյուրավոր հեկտարներ ազգային այգիներ ու ծառաստաներ և անհաշիվ հարստություններ:

1956-ի փոփոխություններից հետո, իրանահայ թեմերը ընկան այդ կուսակցության տիրապետության ներքո. փաստերը այն են, որ Պարսկաստանում 1979-ի Իսլամական հեղափոխությանից քիչ անց երբ Իրանի Իսլամական կալվածքների նախարարությունը բացահայտնեց հայ ազգային այգեստանների նվիրումների ցանկը, որոնցից մեկը գտնվում էր “ԲԱՂ Է ԶԵՇՄԵՇ” անվամբ, Նոր Ջուղայի արևմտյան հատվածում և որոշեցին բռնագրավել, այդ ժամանակ հայ կուսակցականները գլխի ընկան և արագընթաց շինարարություն սկսեցին հայ ազգային թոշակառուների անվան տակ և հայ ընտանիքներ, մատչելի վարձատրությամբ սրընթաց ներքաշեցին ... հարց է առաջ գալիս, որ այս սրնթաց ազգային շահերից բխած որոշումը ի՞նչու ժամանակին չեղավ, որ գոնե որոշ ընտանիքներ Նոր Ջուղայում մնային և գաղթի ճանապարհ չբռնեին:

Մեկ ուրիշ փաստը “ՆՈՐԱՇԵՆ” ծառաստանն է, Նոր Ջուղայի արևելյան մասում... երբ Իրանի Իսլամական պաշտոնյաների կողմից հափշտակման էր ենթարկվում և միայն կասեցվեց այն փաստով, որ

հայերին նվիրված “ՇԱՀ ԱԲԲԱՄ” թագավորի ձեռագրով հրամանագիրը ազգայն արխիվներից դուրս քաշելով կարողացան հսկա ծառաստանը պահել ազգաին հարստությունների շարքում...և հարցը մնում է նույնը; այսքան ազգային հարստությունը վերջի վերջո ու՞մ և ինչպե՞ս է ծառայելու հայությանը; ասենք օրինակ... արդյո՞ք չի կարելի արտասահմանի իրավասու մարմինները, որ իրենց ազգի տերն են համարում, ազգային հարստության մեկ մասը արտասահմանից փոխադրել՝ ապրող ու շնչող իրական երկիր հայրենիք Հայաստան, և երկրաշարժից մինչ օրս տուժած տնակների մեջ ապրող ընտանիքների համար տեղ ու տուն կառուցել ու այդ սրտանմիկ շան ապրուստից փրկել և աշխատատեղ ստեղծել, հայրենիքը զարգացնել և հայրենիքի ժողովրդի կյանքը բարգավաճել; եթե ո՞չ այսօր հայրենիքի այս նեղ օրերին նրա դադին հասնել...բա... էլ... ե՞րբ:

Կամքի ուժը

Նախքան Նոր Ջուղա գալս, Ուսման Չորքի Սպահանի կենտրոնական բաժնից ինձ ուսուցչության աշխատանք էին առաջարկել հենց Սպահան քաղաքի պարսկական դպրոցներում և նշել էին, որ Նոր Ջուղայի հայկական դպրոցներում հավանականություն կա բայց չեն կարող խոստում տալ: Ճիշտ թե սխալ նպատակս ավելի բարձր կրթություն ստանալն էր և մի քանի օր ինքս իմ մեջ մտային պայքարի մեջ մտա և ճիշտ թե սխալ որոշեցի մերժել... ապագան պիտի ցույց տար թե այս որոշումը լավ էր թե վատ:

Պիտի նոր աշխատանք գտնեի և բնականաբար գործի փորձառություն չունեցողի համար որևէ մի քաղաքում անհնարին էր, հատկապես Նոր Ջուղայում: Այդ թվականերին լսում էինք, որ անփորձ երիտասարդի համար միայն կաշառքով էր կարելի աշխատանք գտնել և դրանից ավելի դժվար քայլը՝ կաշառք վերցնողի միջնորդ անձին գտնել ու ճանաչելն էր. այս ահավոր երկու դժվարություններից մնում

Էի գուրկ: Ժամանակն անցնում էր և այս կողմ այն կողմ աշխատանք փնտրելու ջանքը տեղ չէր հասնում: Այդ օրերին, որ Նավթային ընկերության աշխատավորների քանակի կրճատման ծրագրի հետևանքով հայ ընտանիքներից շատերը հաստատվեցին Նոր Ջուղա և քիչ ու շատ հաջողիցին իրենց կյանքը վերսկսել և իրենց զավակներին տեղ հասցնել: Այդ թվում էին հորաքույրներս և հորեղբայրներս որոնցից մեկը անձնական խանութ բացեց, մյուս հորեղբայրս, որ լավ մեխանիկ էր, մի փեսայիս հետ մի մասը իրենցից դրամ ներդրեցին և մի մասն էլ բանկից պարտք վերցրեցին և միասնաբար նավթի բեռնատար (Tanker) գնեցին և անձնական աշխատանք ստեղծեցին: Այս նավթի բեռնատարով Պարսկաստանի բոլոր կենտրոնական նահանգների գրեթե բոլոր քաղաքներում, նավթ էին փոխադրում. միառժամանակ անց, երբ այդ 10 անիվանոց նավթատարը սկսեց հնանալ և ծախսեր բացել և նոր դրամագլխի կարիք եղավ և բանկի տոկոսները բարձրացան, տոկոսայնի վճարումների հարցը բարդացավ և նավթի բեռնատարը ծախեցին. հորեղբայրս Պարսկաստանում (Brown and Root) ճանապարհաշինության ընկերությունում աշխատանք գտավ, բայց հորաքրոջս ամուսինը անձնական տաքսի գնեց և Նոր Ջուղայում ու Սպահան քաղաքում տաքսի էր վարում: Ահա, մի օր էլ հորաքրոջս ամուսինը մի հաստափոր, շիկ ու փիկ տաքսիի հաճախորդի էր հանդիպել և լսելով որ այդ ձեվավոր հաճախորդը՝ «Սարհանգ¹ Մոդադամ»-ը, թեև զինվորական հագուստ չէր հագել բայց իրեն «Սարհանգ Մոզհադամ» էր ներկայացրել, նրա դուրն է եկել և երկուսը կապ էին հաստատել: Մի երկու երեք անգամ հանդիպելուց հետո, լսելով այդ շիկ ու պիկ հաճախորդի սիրագործություններից, թե ինչ բարձրաստիճան անձանց թմրամոլության պատճառներով ձերբակալել էր և հանձնել կառավարական պատիժների, բանդարկման և այլն, ազնիվ և բարի լինելով՝ խոսակցության մեջ, իմ վիճակի մասին է մտածում, իմ զինվորական շրջանի ձեռքբերումներից է խոսում ու գովաբանում և իրենից խնդրում եթե հնարավոր լինի, իմ համար մի

¹ - Գնդապետ:

աշխատանքի տեղ ասի: Այստեղ շիկ ու պիկ հաճախորդը խոսք է տալիս, որ ինձ համար մի գործ ճարի և վստահացրել էր ասելով որ «գործի տեղ գիտեմ և կանեմ, բայց պիտի իրեն ձեր տանը հանդիպեմ (*պարսկ.* Ման հաթման իշուն բո դար համին մոբարեգե բա մավաղ է մոխադեր էսթեխտամ քոնամ վալի բայաղ իշուն բո դար խանեյե շումա մոլադաթ քոնամ): Մի օր էլ մեր սիրելի բարեսիրտ ու բարեհոգի փեսա Հովսեփը իր տաքսիով իրենց տուն բերեց այդ գնդապետ *սարհանգ* Մողադամին զինվորական կաստունով որ ինձ հանդիպի և իր ծանոթների միջնորդությամբ ինձ վարձատրի «Կառավարական թմրադեղերի դեմ պայքարի բաժնում»:

Սիրելի ու հարգելի հորքուրանքս ուրախությունը կիսելու նպատակով մեծ պապ ու մամիս էլ հրավիրել էին ասելով որ. «գնդապետ ՍԱՐՀԱՆԳ ՄՈՂԱԴԱՄ-Ը մեր տուն է գալիս մեզ հետ ծանոթանա ու մեր երեխին գործ տա, դուք էլ արեք հատկապես, որ Թադևոս պապը երկար տարիներ կառավարական մարդկանց հետ շփվել է և լավ կիմանա այս մարդը ով և ինչանոց է»:

Հանդիպման օրը հասավ, մեր սիրելի ու հարգելի փեսա Հովսեփի տաքսիով հասան, ինքը և գնդապետ *սարհանգ Մողադամը* գնդապետի զինվորական հագուստով, բայց մեր փեսա Հովսեփի ասությամբ՝ *սարհանգը* իրեն միշտ ոչ-զինվորական բայց շիկ ու փիկ քոթ ու շավար ու գալուստիկով է տեսել բայց այս անգամ պաշտոնական զինվորական կոստումով էր եկել:

Չարգարենց փողոցը, պաշտոնական անունը Մուրբ Ստեփանոս էր, որում հորքուրանքս երկու սենյականոց տուն էին վարձել Չարգարենց բակում. գնդապետին տեսնելով դրացիները հետաքրքրվեցին և շարք կապեցին որ տեսնեն ում տունը պիտի գնար: Մենք էլ պարծանքով Թադևոս մեծ պապիս հետևից շարք ընկանք և հայաթից դուրս գնալով՝ փողոցի սկիզբը դրացիների զարմանքի մեջ ընդառաջ

գնացինք... Սիրելի Փեսա Հովսեփը պարծանքով ներկայացրեց... «Փեղար խանոմ վա բաչհեհա», Մեծ պապս էլ իր սովորական հարգանքի նշանով գլխարկը վերցրեց և «*մոֆտախարամ... Թայթալուս Ղարախանյան*» ասելով գնդապետ **Մողադամին** տուն հրավիրեց... մենք էլ տնով տեղով բարևեցինք և ծանոթացանք: Ինձ հանդիպելիս ասավ որ արդեն գործիդ մասին խոսել եմ, ոչ մի հոգ չանես *պարսկ*. «դար բարե շմա սոհբաթ քարդամ հիչ դոսե նախորին»: Դրացիների աղմուկները և փսփսուքը լսելով մեր սիրելի փեսա Հովսեփը ամենին հանգստացրեց ասելով. «Մարդիկ իմացեք սարհանգ Մողադամը իմ հին տաքսու հաճախորդներից է և էսօր մեր հյուրն է»: Եվ մենք բոլորս մեր տեղը բռնեցինք և սկսեցինք լսել գնդապետի քաղցր ու անուշ և անվերջ պատմությունները, հերոսությունները, զանազան կառավարական անունները և կերանք խմեցինք և այսպիսի նշանավոր մի գնդապետի հետ նստել զրուցել, որ մեզ թվաց կարծես այդ նեղ օրերին մեր համար մի հրեշտակ էր երկնքից իջած և լցվեցինք հույսերով: Վերջում ինձ հրավիրեց իր տուն Սպահան քաղաքի մեջտեղները, որ մյուս օրը իրեն հանդիպեմ և ինձ տանի և ծանոթացնի իմ գործատեղին:

Լույս իր հոգուն խեղճ մեր փեսա Հովսեփը հորաքրոջս ամուսինը մյուս օրը, գործը թողեց և իր տաքսիով ինձ հասցրեց այդ մեր նոր ծանոթ գնդապետի տանը, դուռը զարկեց և լսվեց ծառայի ձայնը ...

«*պրսկ. քիե*» լսելով պատասխանեց «*պրսկ. Յուսոֆ հասթամ սարհանգ թաշրիֆ դարան*». հեռվից գնդապետի ձայնը լսվեց «*պարսկ. բալե բեֆարմային*» և երիտասարդ ծառան գնդապետի փոքր տղային գրկած եկավ դուռը բացեց. ներս մտանք նկատելով գնդապետին հայաթի մյուս կողմը կանգնած ոչ-գինվորական բայց շիկ ու փիկ քոթ-շավարով կանգնած մեզ ներս հրավիրեց... թեպետ արդեն ծանոթ էի գնդապետ Մողադամի հետ բայց մեր սիրելի ոսկեսիրտ փեսա Հովսեփը ինձ ինքնավստահություն ներշնչելու նպատակով ասավ. «հետդ կգամ որ դու շատ չամաչես, ախեր դու մի քիչ ամչոտ ես»: Մեծ Հայաթը անցնելով բարևեցինք և հսկա սենյակներ մտնելիս հանդիպեցինք գնդապետի տիկնոջը, որ մոտավորապես գնդապետի կես տարիքը

ուներ...Այդտեղի միայն անձանոթը ես էի, որ հարգանքով խոնարհվեցի գնդապետի տիկնոջ առաջ բայց ինքը ձեռքը երկարելով իր անունը հնչեց «Շողե Շիրազի; *ազ խանվաղե սարթիտի Շիրազիե նամի հասթամ*» և ես մատերիս ծայրով հագիվ ձեռքերին դիպա իմ անունը մրթմրթացի, բայց մեր սիրելի փեսա Հովսեփը որ արդեն մտերիմ էր իրենց հետ, մեջ մտավ և ծիծաղալով ասեց «պարսկ. *խանում Շողե, փեսար բարադար խանունամ յե քամի խեջալաթի հասթամ*» և բոլորն էլ խնդացին և մենք մտանք իրենց հսկա հյուրասենյակը, որ զարդարված էր լի բազկաթռռներով և ճաշի ճերմակ աթռռներով, բարձերով և մի մեծ սեղանի շուրջ դասավորած գուցե մի 20 մարդու տեղ կար, իրենց փոքրիկ աղջիկը մոտ չորս-հինգ տարեկան՝ իր մոր նման ոսկեմազիկ ու վառվռուն աչքերով ու փայլաճակատ պստիկ հրեշտակի էր նմանում և շնորքին բարևելով իր անունը ասավ «ՄԱՐԻԱ» և մի բան էլ ասավ որ չհասկացա երբ գլուխս շարժեցի այս փոքր շնորհալի երեխայի առջև այստեղ գնդապետը միջամտեց ասելով «Մարիան ֆրանսերեն դասի է գնում և Մարիա ջանս իր ֆրանսերենն է փորձում... ֆրանսերենով բարի գալուստ է ասում» և բոլորս էլ մի լավ ծիծաղացինք:

Այս հանդիպումները շաբաթը երկու-երեք անգամ չգիտեմ քանի ամիս տևեց և ամեն անգամ գնդապետ *Մողադամը* Սպահան քաղաքի մի տարբեր տեղ էր առաջարկում: Նոր Ջուղայում Առվագլուխ անունով մի փոքր բաց տեղ կար, որ պարսկական Շեքարչիան անունով մի պլակ սարքող խանութ ուներ այնտեղ: Այդտեղ միշտ կանգնած հաճախորդի սպասող մեքենաներ կային, որ հատուկ ծառայություն էին մատուցում տաքսիներից ավելի էժան, որովհետև մինչև հինգ հոգի հաճախորդ էին վերցնում և այսպիսով շատ էժան էր և այս յուրահատուկ ծառայությունը պարսկերենով «Վիժե» էին անվանում: Այս ծառայությունը միայն երկու ուղղությամբ էր աշխատում: Մեկնում Նոր Ջուղայի Մահլաթ շրջանի Առվագլխից

մինչև Սպահան քաղաքի Չհարբաղ անունով մի շրջան, որ ամենամոտիկ կետն էր մեծ Փակ Բազարին՝ մեծաքանակ վաճառական խանութներով և Վերադարձ հակառակ ուղությամբ, Չարբաղից Նոր Ջուղայի Մահլաթի Առվագլխին վերջանում: Այս խելացի ծառայությունը շատ հարմար էր Նոր Ջուղայի բնակիչների համար:

Ամենայն դեպս իմ և գնդապետ Մողադամի հանդիպման պրոցեսը այսպես էր, որ Նոր Ջուղայից «Վիժե» մեքենա էի նստում, Սպահան քաղաքի Չարբաղ ու իջնում և քայլում նախորոք որոշված տեղ և այնտեղից երկուսով տաքսի նստում և մի տարբեր կառավարական կամ զինվորական, ոստիկանական կամ արդարադատության շենքի առաջ կանգնում: Գնդապետը միշտ տաքսու առջևի աթոռին էր նստում, իրեն գնդապետ Մողադամ ներկայացնում, մի տեղի անուն տալիս, և վարորդի հետ մինչ տեղ հասնելը անընդհատ զրուցում: Տեղ հասնելիս ինքն էր տաքսու վարձը վճարում, չափազանց շնորհքին ցտեսություն անում և նախքան իջնելը միշտ նույն նախադասությունը կրկնում՝ «որևէ դժվարություն ունեք կարող եմ օգտակար լինեմ, ոստիկանատուն եկեք և իմ անունը տվեք» (պարսկ. *ագե մոշգեղի դարին մարքագ է շահրբանի բիային վա էամե մանո բեղին...սարհանգ Մողադամ*): Տեղ հասնելիս ուղղակի կառավարիչի սենյակն էինք գնում, դուռը զարկում, խնդանդալով բարևում և միշտ ինձ ծանոթացնում «սարքար սեփահի ՂԱՐԱԽԱՆԻ» և ես էլ պարծանքով խոնարհվում և սպասում գնդապետի կամ նոր պաշտոնյայի արտահայտման, որ ընդհանրապես հրավիրում էին նստելու:

Գնդապետ *Մողադամը* ֆոֆոռալեն մի օտար հարցի մասի կիտսեր և կարծես հանկարծ կանդրադառնար իմ ներկայությանը և իմ վարձվելու մասին առաջարկներ կաներ. գրեթե որևէ կառավարական պաշտոնյայի հանդիպելիս այդ նույն կազմակերպության հակապայքարային մասնաճյուղի մասին էր վարձվելու առաջարկներ հնչեցում և սպասում պատասխանի: Ընդհանրապես ամեն անգամ նման պահերին մեզ թեյ էին մատուցում և զրույցը շարունակվում. քիչ անց նոր ծանոթացած պաշտոնյան ուղղակի ինձ նայելով վստահու-

թյուն էր տալիս «Մեր մասնաճյուղը ջանքն կթափի մի հարմար տեղ գտնի և քեզ աշխատանքի վերցնի»: Ժամանակ առ ժամանակ նման պահերին երբ խոստումներից ուրախանում էի, գնդապետ *Մողաղասյան* ինձանից մի գումար էր պահանջում, որպեսզի խոստում սովորին վճարի և ես ուրախությամբ իմ զինվորության ժամանակվա ամսավճարից խնայողա՞ծ դրամներից մյուս հանդիպմանը իրեն հանձնում, նույն օրվա պրոցեսի շարունակությունը այն էր որ հուսալի խոստումները լսելուց ուրախ-ուրախ ցտեսություն կասեինք և էի տաքսի նստելով գնդապետ Մողաղասյանց տուն կգնայինք, որտեղ էի բարև-բարև ասելով ուրախ տրամադրություններով գնդապետի տիկինը աղախինին թեյ պատրաստելու և որոշ ուտեստեղենի հրահանգ անելով՝ կգրուցեինք նոր գրքերի և գրողների մասին, մինչև գնդապետ *Մողաղասյան* մեզ միանար և ինձ հրավիրեր նստել թանկարժեք գորգերի վրա, որտեղ գորգի և պատի դեմ երկուսից ավել բարձ էին դրված հյուրերի համար և ինքն էլ նստում իր մշտական տեղը, որ իր ցմփորության պատճառով միայն մեկ թմփլիկ բարձ էր դնում իր մեջքին և հենվում բարձին ու սկսում բարակ ու երկար գրույցեր և գրույցների մեջտեղում ժամանակ առ ժամանակ կանչում իր ծառային, որ թեյ բերի և երբ գրույցների շարանը պակասում էր, իր տիկնոջ և Մարիային էր իր մոտ կանչում, որ փոքրիկ աղջկա քաղցրությունները ցուցաբերի և եթե ճաշի մոտերն էր լինում ստիպում էր, որ իրենց հետ ճաշեն: Բայց հիշում եմ որ երբեք իրենց տուն ճաշի չմնացի:


Այս հանդիպումները շատ երկար շարունակվեցին և այդ հանդիպման օրերը, երբ Ջուղայում քուչագլխին *ՎԻՇԵ* մեքենա կնստեի, որ պիտի Մպահան քաղաքում գնդապետ *Մողաղասյանին* հանդիպեի, լցվում էի վառվռուն հույսերով և ինչպես մի գույնզգույն փուչիկների խումբ՝ երկինք բարձրանում, բայց հենց նույն օրվա վերջը, երբ լուռ ու մունջ Գնդապետենց տնից քայլում էի դեպ Չարբախ Դառվազե Դոլաթ *ՎԻՇԵ* միքենաների կանգառ և Ջուղա վերդառնում իջնելով հենց այն Քուչագլխին, որ առավոտը *ՎԻՇԵ* էի նստել

...այստեղ ինձ թվում էր որ երկինք բարձրացող գույնզգույն փուչիկները պայթում էին և նույնիսկ զգում էի որ պայթելու ձայներ եմ լսում և նորից հուսահատվում:

Օրվա եղելությունները շարժապատկերի նման մտքովս անցնում էին և պաշտոնյաների դեմքը և հիշում խոռոտումը ...«Մեր մասնաճյուղը ջանացողություն կանի մի հարմար տեղ գտնի և քեզ վարձատրի», էի ինքս ինձ նախատում էի իմ վատատեսության համար և լցվում էի նոր հույսերով և մեկնելով պապոնցս տուն Թադևոս մեծ պապիս և Եղիսապետ մեծ մամիս ուրախացնելու համար, մանրամասնորեն կպատմեի այդ օրվա հանդիպումից՝ նույնիսկ պաշտոնյաների անունը տալով և իրենք էլ ինչպես միշտ լավատեսություն էին ներշնչում, բայց ինքս անձամբ կես լավատես էի, կես մտահոգ, բայց ամեն անգամ այս պահին հասնելով երագում էի մի օր էլ ուրախ-ուրախ Ջուդայի առվագլխի «Շեքարյան» խանութից մի քիչ քաղցրեղեն առնեմ և վազեմ պապոնց տուն և բղավելով ասեմ. «պապ, մամ, հորքուրներ, զագառներ... կառավարության մոտ վարձվել եմ, ես էլ ուրախանամ դուք էլ»:

Ինքս ինձ լավատեսություն ներշնչելու նպատակով դիտմամբ մոռացության էի հանձնում օրվա եղելությունը: Միտքս ողողում էի դեպի Ջուդայի հայության ճակատագիրը, այդքան հսկա կալվածքների ապագան, դպրոցների և 13 եկեղեցիները, նաև Հովիկ Ալավերդյանի դաստիարակչության մասին, որ ինչպես էր հայ երիտասարդությանը միացնում և «գեղարվեստի սիրողների» անվան տակ երիտասարդ տղա և աղջիկներին դաստիարակում, որ ինչպես հասնեն «ԿԱՄՔԻ ՈՒՅԺԻ», որի միջոցով երիտասարդը, իր կամքի ույժով ինքն իրեն **ՓՐԿԻ** գերի դառնալու իր սոգետ անասնական բնագրից և սովորություններից: Նույն թեմայով միտքս դարձնում էի դեպի այն պահերը, երբ մյուս հայ ընկերներիս հետ (նշեմ անուններով՝ մանկական հարազատ ընկեր Տիգրան Ղարախանյանը (Տիգրան Էշխի), Վազգեն Ղուկասյան, (Մասիս Մաթյանը չմասնակցեց՝ ասելով իր սրտի մոտի նյութը քաղաքական է), Հայդուկ Հակոբյանը և ժամանակ առ

Ժամանակ Ավո Հովհաննիսյանը), գրական ժամ ունեինք, որ հավաքվում էինք Վազգեն Ղուկասյանենց Ջուղայի պապենական հսկա տանը, երկրորդ հարկ և Վազգենի ձայնագրության պիտույքներից օգտվում և Վազգենի շնորհիվ ձայնագրում բոլորիս բանաստեղծությունները և ժամեր իրար հետ բանակցում և վիճարանում գրական, իդեալական և գեղարվեստական գաղափարներ և կարծիքներ, կամ որոշ օրեր կեսօրվա տաք ժամերին հավաքվում մեր սիրելի հարազատ Տիգրան Ղարախանյանենց:



**Նոր Ջուղա-1960-Հարազատ ընկեր և զարմիկ-Տիգրան Ղարախանյանի հետ
(ձախ) և Թամը (աջ)**

Խաղողի այգին և հետեվելով Հովիկ Ալավերդյանի դաստիարակչությանը, փորձեր էինք անում... օրինակ մեր ձեռքերի որևէ մի կետում ածելիով կտրում և կտրված տեղում աղ լցնում և մտքներս ուղղելով մի հավատք ներշնչող անձի պատկերի...անշարժ մնում... որ ցավը հաղթենք և այդ հաղթական զգացումով հասնենք մեր ներքուստ «Մտքի» այն աստիճանի, որ լուսահոգի հանգուցյալ վարպետ Հովիկ Ալավերդյանի դաստիարակչության համաձայն «մինչև ցավը չզգալը չես հասնում... “ԿԱՄՔԻ ՈՒՅԺ”-ի»:

Այդ խմբի մեջ էինք՝ ես, Տիգրան Ղարախանյանը (Էշխին) և Հայդուկ Հակոբյանը...: Այս Փորձերից, տարիներ անց իրար հանդիպելուց և զրույցներից իմացանք, որ երեքս էլ ըմբռնել էինք “ԿԱՄՔԻ ՈՒՅԺ-ը” և մենք մեզ փրկել էինք սխալ քայլ վերցնելուց և ջահելության սայթաքումներից:

...Ապա շարունակելով գնդապետի պատմությունը... մի օր էլ հուլյսի ու հուսախաբության տատամունքի մեջ, հենց գնդապետ *Մողաղամենց* տնում արդեն քանի-երրորդ անգամ երբ ինձ աշխատանքի հասցնող գնդապետ *Մողաղամը* դրամ ուզեց որ “ինչպես միշտ” պիտի վճարեի այն պաշտոնյաներին որ հանդիպում էինք, կարծես սրտումս մի բան կոտրվեց, չէ որ իմ զինվորության ժամանակվա վարձի խնայողություններս վերջանում էին, արդեն վատ զգացի և մի պահ ինձ թվաց թե լեզվիս կողպեք դրին և բերանս չէր բացվում որևէ պատասխան տամ, լռությունս զգալով գնդապետ *սարխանգ* Մողաղամը ասավ «*պարսկ. սղա ջունսամ չի շող հիչ էր նաղարե խողամ միղամ* – սիրելիս... ի՞նչ եղավ... հոգ չանես.. ես ինքս կվճարեմ»: Գուցե ցնցումի պահ էր և կայծակի արագությամբ միտքս թռավ իմ բանկի հաշվի գումարին, հիշեցի և մարմնովս սարսուռ անցավ, զգացի լեզուս սառել էր: Առաջս դրած մի մեծ կուռ թեյ խմեցի լեզուս տաքացնելու և չգիտեմ ինչքան անց կարողացա թոթովեմ

«պրակ. բերինամ – տեսնեմ»: Այդ պահից անց միայն գրույցների ձայնն էի լսում և հիշում եմ միայն «այո» և «ոչ» էի պատասխանում:

Այդ մեր վերջին հանդիպումն էր *Մարիանգ* գնդապետ *Մողադամի* հետ, որովհետև այդ նույն գիշեր պապոնցս տնում տեղերիս մեջ մինչև առավոտ արթուն մնացի և բոլոր այդ քանի ամիսների խոսակցությունները և հանդիպումները վերհիշեցի, հատկապես Թադևոս մեծ պապիս վերջին արտահայտությունը ...«մե գարմանալու բան կա էս մարթու մոտ... էս մարթը եա շատ ազնիվ է...եա շատ *ԲՈՃՏԻ* ... (Չարմահալ գավառի խոսակցության ածական այսինքն՝ շարունակ սուտ խոսող, ինքնախար ու ինքնահավան և լուն ուղտ սարքող)... ասա մարդ աստծու դու եղչանք քեզի գիդես ու քու դովով, էղչանք սարհանգներ ես ճանչնում, պտի կարնաս էս էրեխի գործը մե սհաթում ճամփու քցես...բաս ասա չեմ կարում ու վերչ տուր...է է՛ղչանք քաշքշելդ ու քրքրելդ ո՛րն է» ...Թադևոս մեծ պապիս որևէ արտահայտություն բոլոր իր թոռների համար մոգական էր և լրիվ գերդաստանով սիրով ու հավատքով լսում ու լրջանում էինք իր որևէ խոսքերի և խրատների մասին: Այս խոսքերը անդադար եկեղեցու զանգերի նման, զրնգում էին ականջիս և կարծես վերջնական որոշումս մատախուղի հետևից բարձրանում ու պարզվում էր և եզրակացրի, որ աշխատանք փնտռելու համար այլևս չպիտի հույս դնեմ այս *սարիանգ* գնդապետ *Մողադամի* վրա և ժամանակ չկորցնելու համար վերադառնամ տուն Ահվազ: Ուրեմն Նոր Ջուղայում մերոնց մտահոգությունը փարատելու համար ասեցի որ իրենք գիտեն ծնողներս, Մասջեղ Սուլայմանից նոր են փոխադրվել Ահավազ քաղաք և զինվորությունս ավարտելուց հետո դեռ ինձ չեն տեսել և մտահոգ են:

Առավոտյան դեռ լույսը նոր բացված, չգիտեմ որ մեկ տասն երեք եկեղեցիների զանգերի դողանջի հետ վերջապես սիրոս ու հոգիս դադար գտավ. միտքս և լեզուս բացվեց և լրիվ գիշերվա մտքումս անց ու դարձը վերանայելով, ինքս ինձ համոզեցի, որ պիտի նոր աշխատանքի ճիշտ միջավայր գտնեմ և Ջուղան կամ Սպահանը այդ տեղը չէ և գոհունակությունս այն էր, որ մի փոքր ժամանակ կորցրի

բայց բախտավոր էի, որ ընկերներիս հետ միասին գտանք մարդու ներքնային աշխարհի թագնված «Կամքի Ուժը», որ տարիներ ի վեր եղավ մեր կյանքի ամենաբարձր ձեռքբերումը: Անվերջ հարգանք Հովիկ Ալավերդյանին և լույս իր հոգուն...հազար ավսոս մեր ժողովրդի մատաղ սերնդի դաստիարակից և ամենայն իմաստուն զավակի կորստին...Հովիկը իր եղբայր Հարոյի հետ կարծես երկուսն էլ փոշիացան և ամենից ցավալին՝ այն, որ նրանցից ոչ մի սերունդ չմնաց...և ազգային ԳԵՆՈՖՈՆԳԸ երկու հսկա կորուստ տվեց: Արդյո՞ք այս կորստից ովքեր սզացին և դաս քաղեցին. ոչ ոք չիմացավ... և այն հայկական կազմակերպությունները կամ կուսակցությունները որ իրենք իրենց ազգի տերն ու տիրականն են դարձրել, էթե իսկապես ազգասեր և հայրենասեր նպատակների են ծառայում ... պիտի չոքեն Հովիկ Ալավերդյանների նման հայ մարդու առաջ և Հովիկ Ալավերդյանի նմաններին իրենց աչքի լույսի պես պահեն և գուրգուրեն հայ ազգի սերունդը դաստիարակելու.. ուրեմն էթե հակառակն ենք տեսնում պարզորեն կարող ենք կտրուկ եզրակացնել որ ... հայ ազգին չեն ծառայում և օտարների վարձկալներ են... իմանալով այս իրականությունը մեզ չի ուրախացնում...չատ ենք ցավում:

...Վերադառնամ ինձ...ուրեմն, մերոնց այդքան նեղություն պատճառելով՝ ներողություն խնդրեցի և ընկերներիս հաջողություն մաղթելով վերջին անգամ «Բարի Մնաս» մաղթեցի՝ Պարսկաստանի Հայոց մշակույթային օջախ՝ Նոր Ջուղային և իր ՈՄԿՅԱ Մերնդին:

Չարմանք

Գնդապետ *սարհանգ Մողաղամից* ևս մի զարմանալի բան... քանի տարի անց երբ Անգլիայից նոր էի վերադարձել Ահվազ լսեցի, որ մի ցմփոր անձնավորություն հենց նույն նկարագրով անձ, որ իր բոլոր հատկություններով նմանվում էր *սարհանգ* Գնդապետ *Մողաղամին*... Ահվազի հայոց եկեղեցում երեվացել էր և հայերեն խոսելով փափագ էր

հայտնել կիրակի օրերը հայկական եկեղեցու երգեցողության մասնակցի ... և... ինքն երեն ներկայացրել էր Թեհրանցի և վերջերս Նոր Ջուղայում կից Սպահան քաղաքում կառավարական պաշտոնյա թմրադեղերի դեմ պայքարող բաժնում, ամուսնացած է և ունի փոքր մի տղա և մի աղջիկ, բայց կին երեխեքը շուտով միանալու են իրեն և իր անունը Հրայր ԲԱՐԱԲԱՇՅԱՆ է: Այ քեզ բան... Չարմանք , հազար Չարմանք:

Վերադարձս Ահվազ

Նոր Ջուղայից վերադարձա Ահվազ քաղաք: Ահվազը, անապատի մեջ էր կառուցված, մոտավորապես 150 կիլոմետր Պարսից ծոցի և Աբադան հայաշատ քաղաքի հյուսիսում, Քարուն գետի արևելյան ափում:

Այստեղում էլ Նավթային ընկերությունը հենց Մասջեդ Սուլեյմանի նման նույն աշխատանքային համակարգն էր գործի դրել, միակ տարբերությունը այն էր, որ Ահվազում գոնե ամենացածր կարգի բանվորի համար բնակարան էր հատկացրել: Գրագետների համար Ահվազ քաղաքից քիչ հեռու ԲԱՐՈՒՆ գետի ափին հյուսիս-արևելյան մասում էր բնակարաններ հատկացրել, իհարկե առաջին կարգի գրագետ դասակարգի բնակարանները հինգից վեց սենյակ, մեկ բաղնիք և երեք լվացարան, բայց երկրորդ դասակարգի գրագետների համար երեքից չորս սենյականոց բնակարան, մեկ բաղնիք և երկու լվացարան էին հատկացվել: Բանվոր դասակարգի համար, Քարուն գետից մի երկու մղուն հեռու դեպի Արևելք, Քարուն անունով մի փոքր գաղութ էր կառուցել և բոլորին էլ կայծ ու ջուր էին մատակարարել, այնպես, որ ամեն մի դասակարգի աշխատավոր ուներ իր անկախ բնակարանը և այս ծրագրներով բաժանել էին ժողովրդին, իրարից կտրելու և շփումները սահմանակ պահելու նպատակով, այնպես, որ եթե մի գրագետ աշխատողի և բանվոր աշխատողի ընտանիքները հարազատներ էին, ահագին դժվարություն ունեին իրար հետ շփվելու համար, որովհետև ավտոբուսները իրար գաղութների մեջից չէին

անցնում, հատկապես, որ գրագետ դասակարգների համար ավտոբուսները ավելի գեղեցիկ և կաշվե աթոռներով էին սարքված, բայց բանվորներինը թե անհանգիստ փայտե աթոռներ ունեին և կոշտ ու անհանգիստ էին երթևեկում. անձնական մեքենա շատ սակավաթիվ էր, այն էլ վերապահված էր առաջին կարգի բարձրաստիճան գրագետներին: Բայց և այնպես բանվոր դասակարգի համար այնքանը ուրախալի էր, որ արդեն բանվորի ընտանիքը ուներ երկու սենյականոց անկախ բնակարան և բաղնիք՝ կահավարված կայծով ու ջրով:

Ահվազ հասնելուց մի քանի օր անց, արդեն ավանդական սովորություններից ու մատաղներից անցնելով առանց ժամանակ կորցնելու բանվորական ավտոբուս նստեցի և պարոն Հրանդ Մինասյանի գրնգան խոսքը հիշելով «Ու կը գաս իմ մոտե»-ը՝ գնացի իրեն հանդիպելու: Այս անգամ բախտս չբերեց, որովհետև ինձ ասացին որ պրն Մինասյանը մի քիչ վատ էր զգում և մի քանի ամսով նոր-Ջուղա է գնացել, տեղակալը անգլիացի մսոր Ջեյմզն է: Չգացի որ սրտումս մի բան չրիկաց՝ կոտրվեց և այնքան տխրեցի, որ չցանկացա այս հուսահատ տրամադրությունով հանդիպել սիրելի վարպետ ընկերներիս՝ Սաքոին և Համոին: Քայլեցի դեպի Քարուն գետի ափը, գեղեցիկ գետը նայելու, ներշնչվելու, մտածելու և ելք գտնելու:

Այդ օրերին անգործություն և պարապություն էր տիրում ամեն տեղ և նույնիսկ Պարսկաստանի ամենամեծ գործատեր՝ Նավթային ընկերությունը իր մարդույժը մինիմալի նպատակով իր աշխատավորներից մեծագույն թվին գործազուրկ անելով ընտրյալներին Ահվազ քաղաք տեղափոխեց՝ Մասջեդ Սուլեյման, Հաֆտ Քէ, Նավթ Սաֆիդ, Գաչսարան, Աղաջարի, Օմիդիյե և Աբադան քաղաքներից: Այս քաղաքներից ամենահսկա հայերի թիվը Մասջեդ Սուլեյմանից անց երկրորդը Աբադան քաղաքն էր, և որտեղից մինիմալի կրճատվեց նավթագտարանի աշխատույժը և տեխնիկական կազմը փոխադրվեց մայրաքաղաք Թեհրան: Այս կազմի մեծամասնությունը կրթված ծեր ու ջահել հայեր էին որոնք իրենց ընտանիքներով ԸՆԴՄԻՇՏ տեղեփոխվեցին Թեհրան:

Ահվազ քաղաքում, հայությունը էլի ծլեց ու ծաղկեց, մի նոր հայկական գաղութ ստեղծեց և մյուս հայաբնակ քաղաքներին մոտիկ լինելով, ինչպես յոթ գունավոր ծիածանի պես, մշակութային կամուրջ ստեղծեց, և հայկական շունչն ու ոգին, նորից տիրեց հանդ ու փողոց, օջախներ ու դահլիճներ:

ԱՀՎԱՁ քաղաքում նորեն մեր կառուցող ազգը իրար քով եկան, Նավթային ընկերության աշխատողներ, փոքր ու մեծ գործատերեր ու վաճառական միացան, ուրախացան, եփեցին, թխեցին, երգեցին, պարեցին, իրար հետ կեր ու խում արեցին, երազելի ազատ ու անկախ հայրենիքի կենաց խմեցին, դրամահավաքներ կազմակերպեցին և նորեն ու նորեն գարնան ծիծեռնակների պես բույն դրեցին, դպրոց ու եկեղեցի կառուցեցին: Ամեն մարդ իր մասնագիտությունը ներդրեց, կոնակ-կոնակի տալով, Ահվազ քաղաքում առանց Նավթային Ընկերության օգնության, անձնական ջանքերով և դրամով դպրոց և եկեղեցի կառուցեցին: Հարգանքի տուրք մատուցենք՝ այն հայ մարդկանց, որ իրենց զոհաբերությամբ միայն հայ լինելու բերումով, անապատի եզրում, այս նոր գաղութում, էլի ու էլի մի նոր մշակութային օջախ ստեղծեցին; ինչպես Աստված է շնորհում ամեն մի մարմնին մի բարբախող սիրտ և շնչող-արտաշնչող թոքեր; կամ ինչպես Վիլյամ Մարոյանն է գրել «Որովհետև երբ անոնց երկուսը աշխարհի որևէ մասում հանդիպե, տեսեք, թե անոնք արդյո՞ք մի ՆՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ չեն ստեղծե»: Հարգանքով և ամենայն խոնարհումով՝ հիշենք նվիրյալ հարգելիներին՝ Մկրտիչ (Ահվազի Քարուն Գետի կամուրջի պռունկին ՆԻԳՐՈ հսկա նպարավաճառանոցի սեփականատեր); Վազգեն և Արփի Բուդադեաններ (Ահվազի Հայկական Մշակույթի Նախագահներ); Ծաղկանուշ Ղարախանյան Սիրաքի և Անուշ (Ահվազում տարիներ հայկական գրադարանի գույքատեր և մշակութային հանձնախմբի ակտիվ անդամներ); Չեկի Մինաս Մինասյան (այնքան ճեկերով վճարումներ էր անում որի մականունն էր Կոպի Չեկի Մինաս); Ասատուր Գորգինյան; Արմենակ Ղարախանեան,

Մամուլքցի Լոդֆիկ (ծնված Մամուլքա գյուղում, Չարմահալ գավառի այժմ հայաթափ գյուղ); Բաղրամյան ընտանիք, Եսայի Մինասյան, որ իր անձնական բեռնատար մեքենայի եկամուտից աչք թողելով, իր բեռնատարը և իր ժամը նվիրեց և ճրիաբար եկեղեցու լրիվ հող և քարերը մինչև վերջին հատիկը դաշտերից փոխադրեց դպրոցա-եկեղեցական կառույցին:

Իհարկե Ահվազ քաղաքի դպրոցը համեմատաբար փոքր էր Մասջեդ Սուլեյմանի և Աբադանի միջնակարգ դպրոցներից, սակայն բավարար էր Ահվազի հայ աշակերտության և հայության համար, համարվում էր ազգային գույք և պարծանք: Ահվազ քաղաքում բանվոր դասակարգի ապրելակերպը նախկինից ավելի լավ էր, որովհետև ամեն ընտանիք ուներ իր սեփական չորս պատը և իր մշտական հոսող ջուրն ու կայծր: Ափսոս որ Ահվազ քաղաքն էլ ժամանակավոր շրջան պիտի ապրեր, այս բարիքների դեմ կանգնած էր մեծ թվով աշխատատեղերի պակաս, հատկապես երիտասարդության համար:

Ահվազ քաղաքում էլ, ով ծանոթ ու աշխատանք գտնելու միջնորդ ուներ հաջողությունը ավելի էր: Օրինակի համար, իմ մեծ քույր Հայկուշը, որ Ահվազ քաղաքի «Նեզամ Վաֆա» միջնակարգ դպրոցի գերագանց թվանշաններով դիպում ուներ և միջնակարգում ձեռագործի գեղարվեստական մեղալ շահող լինելով՝ աշխատանք չէր գտնում և երկար ժամանակ պարապ էր. թեպետ քանի անգամ ուսուցչության դիմեց Ահվազի հայոց դպրոցին, բայց կուսակցական չլինելով մերժվեց և այնքան պարապ մնաց մինչև մի տարի անց երբ մեր մեծ հորեղբոր տղա Արմենակ Ղարախանյանը Ահվազ եկավ, որը Նավթային ընկերության պահեստանոցների բարձրաստիճան պատասխանատու և կուսակցական էր, իր միջնորդությամբ քույրիկս անդամագրվեց տեղի կուսակցությանը: Քիչ ժամանակ անց, ընդունվեց հայոց դպրոցում իբրև գեղարվեստի ուսուցչուհի:

Մի այլ օրինակ. իմ անձս, որ զանազան աշխատատեղերի դիմումներից ոչ մի պատասխան չստանալով, հուսահատությունից, ճարահատ մտահոգություններիս շարանը թղթի առա, և երիտասարդ սրտիս խոսքը արտահայտեցի մի օտար սրտցավ հայի և գրավոր դիմեցի ազգային համբավ ունեցող հարգելի և ազնվական հայ ազգի զավակ Օննիկ Սահակյանին, (լույս իր և իր տիկնոջ Հասմիկ Սահակյանի հոգիներին, որ երկուսն էլ տասնյակ տարիներ Մասջեղ Մուլեյման քաղաքում, անձնագրոհությամբ, հոգով ու սրտով անպիղծ ու անարատ սիրո սրտով ծառայեցին հայ մշակույթին, հայ դպրոցին և հայ կարիքավոր ընտանիքներին, որոնց անձամբ վկա ենք եղել... Նրանք փոխադրվեցին Թեհրան, շարունակեցին ազգային ծառայությունը և Հայրենքի անկախության օրերին երկուսով տեղափոխվեցին Հայաստան և 2013 թվականին երկուսն էլ մեկը մյուսի հետևից մահացան և ընդմիշտ ննջեցին Հայրենի Հողում... Լույս Օննիկ և Հասմիկ Սահակյաների հոգիներին:

Պրն. Օննիկ և տիկ. Հասմիկ Սահակյանները դեռ Մասջեղ Մուլեյմանում էին և երկուսն էլ ակտիվ էին հայկական դպրոցա-եկեղեցական, մշակույթային և բարեգործական ծրագրներով և հատկապես հայ բանվոր դասակարգի դարդին հասնող անձինք էին:

Այնպես ստացվեց որ Ահվազի Քարուն գետի ափին, մի օր քայլելելիս, հարգելի Օննիկ Սահակյանի պատկերը մտքովս անցավ, հենց այդպես մի երկու էջանոց բաց նամակ գրեցի նրան Մասջեղ Մուլեյման... առաջին էջը «Շունի և գայլի հանդիպումը» դասագրքերից վերհիշեցի և գայլի զրույցի այն մասին կենտրոնացա, երբ գայլը շան վզի քերթվածքի պատճառը լսելով, ինքը իր մեջ մտածեց, որ գերա-դասում է թեպետ երբեմն սոված մնա բայց իրեն ԱՉԱՏ ու ԱՆԿԱԽ զգա և շան նման մի քանի կտոր հացի համար իր տիրոջը գերի չդառնա և լրիվ օրը շղթան վզին կապված չմնա: Այդ դասագրքի առակով ցանկացա անձնական փիլիսոփայությունս արտահայտված լինելի և մյուս էջում էլ շարադրեցի, ծանոթ և միջնորդ չունեցող մի անգործ ու պարսպ հայ երիտասարդի ոչ շատ լուսավոր հեռանկարը: Նամակը

ստանալով...հարգելի Օննիկ Սահակյանը Նավթային Ընկերության միջոցով, ձրիաբար մեքենա կարգարդրեց որպեսզի Ահվազից ինձ վերցնի ու Մասջեդ Սուլեյման հասնելիս ուղղակի իր գործատեղը հասցնի: Այդպես էլ եղավ և տեղ հասնելուն պես նորեն Մեքենա կարգարդրեց և ինձ ներկայացնելով Մասջեդ Սուլեյմանի պարսկական դպրոցների կրթական գերտեսչության պատասխանատու պրն. Բիժան Փարհանգ անունով շնորհալի պաշտոնյային, նրանից խնդրեց, որ եթե հարմար իմանա, Մասջեդ Սուլեյմանի հսկա Հայոց դպրոցում, ինձ վարձատրության առաջարկ անի իբրեւ կառավարական ուսուցիչ:

Հարգելի պաշտոնյա Բիժան Փարհանգը, առաջարկեց, որ իր օգնականին կիրամայի, որ փնտրտուք անի հենց պարսկական դպրոցներում աշխատանք գտնի հատկապես, որ պրն Օննիկ Սահակյանի ծանոթ բարեկամ երիտասարդ Ղարախանյանը՝ Ուսման Չորքի զինծառայող է եղել, բայց պրն Օննիկ Սահակյանը քաղաքագետ և իրավաբան լինելով կարծես ուղիղ այո-ոչ ասելուց խուսափեց և պատասխանեց, որ ինչպես տեղյակ է տեղիս փոքր գաղութը և հայոց դպրոցը ինձ պես մեկի պակասն է զգում և իմ նման անձը օրինակելի մանկավարժ էր լինելու այստեղի դեռևս փոքր գաղութի համար: Եվ այսպես հարգելի պրն Բիժան Փարհանգը ամենայն ուրախությամբ ասեց որ նամակը վաղը պատրաստ կլինի: Ծնորհակալություն ասելով, թեյի սառչած թասերը արագորեն խմեցինք և խոնարհվելով հեռացանք: Հարգելի պրն. Օննիկը ինձ հասցրեց իմ մամիս կողմից պապոնցս տանը:

Մեծ պապս Սողոմոն և Մեծ մամս Նանաջան Ղարախանյանների տան դռանը որը հենց Մասջեդ Սուլեյմանի հայոց դպրոցի դրացությամբ էին ապրում, հարգելի պրն. Օննիկը ասաց, որ մյուս օրը հենց ինքը նամակը կվերցնի և կբերի և ինձ կհանդիպի վաղը առավոտյան 11:00-ին, հենց Սողոմոն պապենցս տան առաջ: Չգիտեմ այդ գիշեր ինչպես լուսացավ, որովհետև քանի հիշում եմ միայն Սողոմոն մեծ պապիս և Նանաջան մեծ մամիս աղոթքների մրմունջն եմ հիշում, որ հենց այդ աղոթքներով տեղեր մտա և նույն աղոթքների

ձայներով էլ արթնացա... կարծես մի հրաշք էր պատահել, որ Պարսկաստանի այդ սարսափելի անգործության մեջ, ինձ մի պատվական աշխատատեղ էր սպասվում: Մինչև մյուս առավոտյան ժամը 11:00-ի հասնելը գուցե Սողոմոն մեծ պապս և Նանաջան մեծ մամս մի տասը գլուխ Սաղմոս կարդացին և լի հույսերով իրենց տան դռան աստիճանների գլխից աղոթքները կրկնելով «Յա Նազովրեցի... Էս էրեխին հնգեր էլի տեղ հասնի...Յա Նազովրեցի» բարի օր մաղթեցին:

Քիչ անց հարգելի Պրն. Օնիկ Սահակյանը իր անձնական մեքենայով եկավ հասավ և մեքենան թողնելով Սողոմոն պապոնցս տան աստիճանների մոտ, իջավ «բարի լույս» մաղթեց և ասաց «տղա ջան...Նամակը ունեմ դե հիմա գնանք պարոն Չորային տեսնենք»:... այստեղ մինչ մենք հայոց դպրոցի շենքը մտնենք, թույլ տվեք չակերտ բացենք և խոսենք հենց այս փոքր բլուրի վրա կառուցված շարան բնակարանների մասին, որտեղ բնակվում էին Սողոմոն մեծ պապն ու Նանաջան մեծ մամը և հինգ օտար հայ ընտանիքներ; դրանք պատկանում էին մի հարուստ հայ մարդու՝ Հովսեփ Հովսեփյանին, որին Չարմահալի Ժողովուրդը մականունով անվանում էր «ՉԱՂՈՒԼԻ ՀՈՎՍԵՓ»: Չարմահալ գավառի բարբառով այսինքն կապույտ աչքերով Հովսեփ: Չարմահալի Լիվասիան գյուղի Հովսեփը ճարպիկ վաճառական լինելով՝ փոքր տարիքից Նոր Ջուղա էր փոխադրվել և երիտասարդ տարիքից անցել էր Հնդկաստանի Կալկաթա և ուսումնասիրել էր Հնդկաստանում Անգլիացիների հարուստ կյանքը և նկատել էր, որ Հնդկաստանում *Մկնեղը* այնքան շատ են որ Անգլիացիներին գլխացավ են պատճառում և դեղ ու ճար էլ չկար. և ահա իր հնարագիտությամբ մտածել էր այդքան թվով *ՄԿՆԵՐԻՆ* ոչնչացնելը միայն հալածող միջոցը՝ **կատուն** է և ահա վերադարձել էր Պարսկաստան և սկսել էր Պարսկաստանից կատուներմուծել Կալկաթա՝ Հնդկաստան: Այսինքն Նոր Ջուղաից սալակների մեջ կատու լցնել, ջորիներով փոխադրել Խոռամշահր

նավահանգիստ և այնտեղից նավակներով դեպի Կալկաթա: Այսպիսով հսկա հարստություն էր դիզել և իր վաճառականության կենտրոնը փոխադրել էր Մասջեդ Սուլեյման և այնտեղ զարգացրել էր վաճառակա-նությունը և դարձել Նավթային ընկերության ներկայացուցիչ և շինա-բարության խորհրդատու: Այդպիսով բազմապատակել էր չափազանց հարստություն: Հենց սույն Մասջեդ Սուլեյմանի միջնակարգ դպրոցի գետինը դեռ տասնյակ տարիներ նախքան դպրոցի կառուցելը հենց ինքը “Հովսեփ Քեռին” հեռատես լինելով Նավթային ընկերությունից շատ էժան գնել էր. մի անկյունում եկեղեցի և գրադարան էր կառուցել և նվիրել այդ ժամանակվա եկեղեցական միությանը և այդ հսկա կալվածի դիմաց բլուրի փեշին կառուցել մի հսկա շարան տներ, կահավորել ջուր, էլեկտրականությամբ և գազի հարմարություններով և Անգլիացիներին վարձու տվել. ինքն էլ այդ շարանի պոչին իր համար տուն կառուցել այսպիսով իրար կպած տասնյակ տներ էր կառուցել... ժամանակի ընթացքում Նավթային ընկերությունը իր Անգլիացի աշխատողների համար օտար տեղ գեղեցիկ տներ կառուցեց և աշխատողներին փոխադրեց այնտեղ: Իմ Նանաջան մեծ մամիս կողմից մի հեռու բարեկամ լինելով մերոնք իրեն “Հովսեփ Քեռի” էին կանչում: Հովսեփ Քեռին ամուսնացել էր Ռիփսիմա (Հռիփսիմե) անունով մի Նոր Ջուղայեցի հայուհու հետ և նրանք տարիներ չունենալով զավակ... որդեգրեցին մի աղջիկ Վրեժուհի անունով... Վրեժուհին էլ, մեծացավ...հասունացավ և ամուսնացավ Հարություն անունով մի Նոր Ջուղայեցի Նավթային ընկերության գրագետ աշխատավորի հետ:

Հարությունը թե լավ ջութակ էր նվագում և լավ էլ ֆուտբոլ էր խաղում: “Չաղուլի Հովսեփ” քեռին, առաջացած հասակում իր Ռիփսիմա կնոջ հետ փոխադրվեց Նոր Ջուղա, իրենց սեփական հսկայաան տունը: Հովսեփ Քեռին մահացավ և թաղվեց Նոր Ջուղայում և իր կինը, տիկին Ռիփսիման հսկա առանձնատունը վաճառեց Նոր Ջուղայում մի պարսիկի: Հովսեփ Քեռու կտակի համաձայն, ժառանգությունը բաժանվեց՝ Հովսեփ Քեռու եղբոր

Ղուկաս Քեռու գավակներին՝ մեկ տղա, երկու աղջիկ և մեծ բաժինը իրենց հոգեվորդի Վրեժուհու և Հարությունի ընտանիքին: Այնքան որ տարիներ անց լսեցինք Չաղուլի Հովսեփ և Տիկին Ռիփսիմա Հովսեփյանների մեծ բաժին հարստությունը հանձնվեց իրենց աղջկացու Վերժիկ և Փեսացու Հարություն ընտանիքին: Այսպիսով մեծապատիվ և մեծահարուստ Հովսեփ Հովսեփյանը հանգիստ գտավ Նոր Ջուղայում և Ռիփսիմա Հովսեփեանը Ավստրալիա Սիդնի քաքաքում:

Այդպիսով՝ Հովսեփ և Ռիփսիմա Հովսեփյանների հսկա ձեռքբերումները մնացին իբրև պատկեր պատի վրա և Հովսեփյանների հոգեկան ժառանգը մատնվեց մոռացության, որովհետև հենց Մասջեդ Սուլեյմանի եկեղեցի և դպրոցի հիմնադիր “Չաղուլ Հովսեփ Քեռի”-ի բարիքներին տեր կանգնեց Դաշնակցությունը և այն էլ վաճառվեց և դրամը ինչ եղաւ՝ չգիտենք: Ոսկյա մարդ “Չաղուլ Քեռի”-ի տիտանական ձեռքբերումները իր մահվան հետ ընկան մոռացության:

Ինչո՞ւ մեր ազգի նոր սերունդը չի ժառանգում իր անմիջական ծնողների գենետիկան և չի կարողանում շարունակել իր նախկին սերնդի հոգեղեն արժեքները՝ մնալով կառչած իր արմատներին: ”Չաղուլի Հովսեփ”-ի հսկա ձեռքբերումը և հզոր հոգեղենը մի սերունդ անց՝ վկայում ենք որ չշարունակվեց ... և ինչո՞ւ... Ի՞նչ է այն գաղտնիքը, ինչո՞ւ մեր ազգը դեռ մեկ սերունդ չանցած, նախկին սերնդի ոսկեթել արժեքներից զրկվում և նախնիների ՀՈԳԵՂԵՆԸ ՉԻ ՇԱՐՈՒՄԵՆԱԿՎՈՒՄ: Վերադառնանք աշխատանք գտնելու հարցերին...

Պրն. Օնիկ Սահակյանի հետ քայլեցինք դեպի միջնակարգ դպրոցի գրասենյակը և հանդիպեցինք հարգելի Տեսուչ պրն. Չորա Բժշկյանին. թեթևակի ծանոթությունից հետո հարգելի պրն. Օնիկ Սահակյանը պայուսակից հանեց Պարսկական կրթութեան ինստիտուտի պատասանատու՝ պրն. Բիժան Ֆարհանգի նամակը և հանձնելով պրն. Չորա Բժշկյանին, արագորեն անցնելով իմ զինժառանգության հաջողությունների գովասանքին, վերջացրեց ասելով. «Այս մեր փոքր եղբայր Ղարախանյանը, շատ հաջող ճանապարհ է անցել և մեր աշակերտությունը շատ բան պիտի սովորի իրենից, ինձ թվում է,

այս պահին մենք իր ԿԱՐԻՔԸ ունենք... դե...ուրեմն... մնացածը թողնում եմ ձեզ... հենց այսքանը»: Պրն Չորան էլ շնորհակալություն հայտնեց և ինձանից հասցե և հեռախոսահամար ուզեց, նրա վերջին բառերն դեռ մինչ օրս զրնգում են ականջիս մեջ. «Դե.. տեսնենք ուսուցական կազմը ինչ կարող է անել... իրենք վստահ տեղյակ կպահեն... հանգիստ եղեք»: Ուրախ... տրամադրությամբ ցտեսություն ասելով քայլեցինք դեպի հարգելի պրն.. Օնիկ Սահակյանի մեքենան: Քիչ էր մնում այս՝ պրն. Օնիկ Սահակյան հսկա հայ մարդու և այդ տեսակի կուսակցական, ազգասեր անձի ձեռքերը համբուրելի... վերջին խոսքն էր. «Տղա ջան... հաջողություն քեզ... Աստված պահապան» և հեռացավ: Առաջին և վերջին անգամն էր, որ տեսա, հանդիպեցի և հրաժեշտ տվի այսպիսի մի հայ ազգասեր ազնվական անձի... Տարիներ անց երբ ընտանիքիս հետ ապրում էի Կանադայի Տորոնտո քաղաքում ... թերթում կարդացի ամենատխուր լուրը որտեղ ասվում էր «Հայրենի հողին հանձնվեցին Օնիկ և Հասմիկ Սահակյանների աճյունները»: Հարգանքի ու ցավի մառախուղը այնքան պոտորեցին աչքերս, որ չկարողացա կարդալ երկուսի կենսագրությունը: Հավեր-ժական լույս հարգելիներ Օնիկ և Հասմիկ Սահակյանների հոգուն... և իրենց հիշատակը հավերժ մեր սրտերում:

Չգիտեմ քանի օր մնացի Սողոմոն պաս, Նանաջան մամ և Ղարիբ քեռի, Պապոնցս՝ տանը, Մասջեդ Սուլեյմանում, ինքս ինձ սիրտ տալով... **«որ ահա ինչքան շուտ Հայոց դպրոցի Ուսուցչական կազմը հարգելի Օնիկ Սահակյանի դիրքը հարգելով, շուտով պիտի ինձ աշխատանքի կանչեր... և կրկնում՝ աշխատանքի կանչեր... աշխատանքի կանչեր...»**, և մի օր էլ մտքովս անցավ, որ անհամբեր սպասելու և եղունգներս կրծելու փոխարեն, թող վերադառնամ մերոնց մոտ Ահվազ, ինձ հետ տանելով մի ուրախ լուր: Բախտի բերմամբ հենց այդ օրերին, հայոց դպրոցի կողմից լուր չեղավ, **փոխարեն**, Նավթ. ընկերությունից Ահվազ քաղաքում հորս հեռախոսել էին և ինձ հրավիրել «Գրավոր քննության», որը պիտի տեղի ունենար հենց Մասջեդ Սուլեյմանում երկու շաբաթվա ժամկետով և հայրիկս հենց

նույն օրը հեռախոսել էր մեր բարեկամ և ապագա խնամի փեսա Մնացական Վարդանյանին, որոնք դեռ վերջին հայ ընտանիքներից էին, որ ապրում և աշխատում էին Մասջեդ Սուլեյմանում մինչ թոշակի անցնելը և Թեհրան տեղափոխվելը: Հարգելի Պրն. Մնացական Վարդանյանը և իր տիկինը՝ Վարդուհին, որը մայրիկիս հետ մորաքրոջ զավակներ էին, հենց նույն գիշեր իրենց գեղեցիկ, թմփլիկ, մուգ վարդագույն անձնական մեքենայով եկել հենդիպել էին Սողոմոն և Նանաջան պապոնցս և պայթուցիկ լուրը բերել, ափսոս տունը չէի, որ խոնարհությամբ և շնորհակալությամբ հարգանքի տուրք մատուցեցի (ճակատագիրը, ամուսնության բերումով մեզ ու իրենց, ապագայում, իրար միացրեց Թեհրանում և Նյու Յորքում): Ուրեմն սկսեցի լրջորեն պատրաստվել մի դժվար երեք ժամանոց գրավոր քննությանը: Բայց մտքիս խորքում Հայոց Դպրոցի “Այո” պատասխանը ավելի հասանելի էի տեսնում: Չնայած որ Նավթային ընկերության վարձատրվելու հեռանկարը և Անգլիայում սովորելու առիթի գույնագույն պատկերը, խիստ ցանկալի, մառախոլապատ, ԵՐԱԶԱՅԻՆ և անհասելի գազաթի էր նմանվում. բայց և այնպես, սիրտս էր ճախրում ու թռվռում, նույնիսկ երբ երևակայում էի որ երբ գրավորը անցնեմ, պիտի բանավոր քննության հրավիրվեի և այդ քննության ընթացքում, մեծամեծ պաշտոնյա մարդիկ էին ինձ հարցաքննելու: Երևակայում էի այդ բանավոր քննության օրը, պիտի ոտքս դիպչի Նավթային ընկերության պալատական նմանվող մուտքի առաջին աստիճանին և պիտի քայլեի այդ չտեսնված երազային դահլիճներով, որտեղով, միայն Նավթ. ընկերության, ԳՐԱԳԵՏ աշխատողներն էին համարձակվում ներս մտնել:

Ուրեմն իմ սպասելի Մասջեդ Սուլեյմանում Սողոմոն և Նանաջան Ղարախանյաններ պապոնցս մոտ, իր արդյունքը տվեց և պատրաստվեցի գրավոր քննության, առանց իմանալով, որ քննությունը բացի թվաբանությունից, ինչ օտար նյութեր պիտի պարունակեր: Մի բան պարզ էր, եթե այդ դժվար գրավոր քննությունը հաջող անցնեի, պիտի հրավիրվեի բանավոր քննության, որից հետո առողջապահության

զննման էի ենթարկվելու և եթե բոլորն էլ հաջողությամբ անցնեի, արդեն կվարձվեի Նավթային ընկերության աշխատող... և այսպես կլինեի երջանկության սկիզբ:

Քննության օրը հասավ... ու գնացի.. Ինձ թվաց... երազի մեջ մտա. երեք ժամ քուլա-քուլա ամպերի մեջ կորել էի և ոտքերս ծանրություն չէին զգում... երեք ժամ անց, վեց էջանոց քննության հարցերը լրացրած թվաց երազից արթնացա... շուրջս դեռ լեցուն տղաներ էին նստած, կարծես մառախուղի շղարշի մյուս կողմն էին և միայն իրենց սև գլուխն էի տեսնում... չէի ուզում այս երազից արթնանալ. վերջացրի... թուղթը ձեռքիս կանգնեցի և չգիտեմ ինչու մոռացել էի ինչ պիտի անեմ... քրտնած ձեռքերով չգիտեմ ինչքան կանգնած մնացի մինչև քննիչի ձայնը լսեցի: “Դժամամ քարդին”¹... Թուղթերս հանձնեցի և մեծ հույսերով լցված վերադարձա պապոնցս տուն:

Իմացա այդ մակարդակի ԹՎԱԲԱՆԱԿԱՆ քննությունը Նավթային ընկերության աշխատատեղի համար էր, որ եթե ընդունվեի, ինձ կուղարկեին Անգլիա “University of Plymouth”, չորս տարվա Նավթային դասընթացքների, որից հաջող ավարտելուց՝ Պարսկաստանի Պարսից Ծոցում նավահանգստների «pilot-Փայլոթ» կնշանակվեի և կվարձատրվեի Նավթային Ընկերության կազմում: Պարտակա-նությունը այն կլինեի, որ Պարսից Ծոցում մտնող նավը “Hormoz-Հորմոզ” նեղանցքը թողնելիս “Khark-Խարք” նավահանգստի կենտ-րոնի հետ կապվեի, խարիսխ ձգեի “Խարք” նավահանգստից հինգ մղոն հեռավորությանը և սպասեի մեր նման «փայլոթի»:
Նավային «փայլոթ»-ներս պիտի բարձրանայինք նավ և ուղեկցեինք դեպի նավահանգիստ: Բոլոր ծախսերը Նավթային ընկերությունն էր հոգալու և սովորողը ամսական որոշ չափով վարձ էր ստանալու, որը

¹ - «Վերջացրի՞ք»:

կարող էր անձնական հաշվի դրվեր կամ էլ ներմուծվեր, Պարսկաստանի իր ծնողների հաշվին:

Վարձվելու պրոցեսը հետևյալն էր.

1- Գրավոր քննությունները հաջող անցնել գերազանց (20-ից 17):

2-Բանավոր քննությունը հաջող անցնել (20-ից 16): Որում Նավթային ընկերության 5 մեծամեծների հարց ու պատասխան կլինի, Անգլերեն և Պարսկերեն:

3-Բժշկական քննումը հաջող անցնել (20-ից 20), հատկապես սրտի, թոքերի, քթի, զույգ աչքերի և զույգ ականջների:

4- և երկար սպասել:

Այսպես, Նավթային ընկերությունը 54 շաբաթ անց մեզ կանչեց բանավոր քննության, Մասջեդ Սուլեյմանում: Գրեթե բժշկական զանազան քննությունները արագությամբ հաջող անցավ, բայց ձախ ականջիս քննել ու զննելը երկար տևեց: Բժիշկը ճար գցեց, նորից քննեց, նորից նկարեց և նորից քննեց, այնպես որ սրտատրոփից մոտ էր թոքերս բերանիցս դուրս հանել: Վերջապես իննը ամիս անգործությունից և մտահոգությունից հետո Նավթային ընկերության ծառայող Անգլիացի բժիշկը հայտնաբերեց, որ փոքր տարիքում այդ լողացած կեղտոտ-մեղտոտ Մասջեդ Սուլեյմանի ջրերի միջից պարագիտներ է մտել՝ ծվարել և պիտի մաքրվի և լսողությունը հասցնել նավային ստանդարդի:

Քանի դեռ Սողոմոն Մեծ պապս և Նանաջան Մեծ մամս Մասջեդ Սուլեյման էին և դեռ չէին փոխադրվել Ահվազ, եղավ իմ կապը և օգնեց ինձ տասն ու մեկ ամիս Մասջեդ Սուլեյման ու Ահվազ քաղաքների մեջ գնացիք և եկանք մինչև աջ ականջս առողջացավ և բժշկության ստանդարդ քննությունը հաջող անցավ և զեկույցը ուղարկվեց Նավթային ընկերության հանձնախմբին, որոնք՝ հայրիկիս Ահվազ քաղաքում տեղեկացրին, որ ես միայն սպասեմ վերջին քայլին, որով պիտ պատրաստվեի մեկնել Անգլիա... բայց դեռ սպասե՛լ և սպասե՛լ ...

Հետո՝ երբ ժամը հասներ պիտի՝

5- Նաֆթային ընկերության բժշկի ձեռքով սրսկվել մի անհայտ նյութ, ... որին ձախակողմյանները ծաղրանքով ասում էին. «Անհոգության դեղ են մտցնում տղամարդու մարմինը»:

6- Գնալ տուն և սպասել 1-ից, 2 տարի, մինչև Անգլիայի “Plymouth –ՊԼԻՄՈՒԾ” Համալսարանում նոր ուսանողի համար տեղ բացվի: (U.K. University of Plymouth):

7- Աստված գիտի թե այս լուրը ինչ հույսի ու լույսի աշխարհի զցեց մեզ և քանի-քանի ծիածանների վրայով թոցրեց մեր սիրտն ու հոգին: Այդ տարիներին մի երիտասարդի համար բարձր կրթության կամ աշխատանք գտնելու հույսը տոնական մի միջոցառման էր նման:

Ահվազ և Աբադան քաղաքների Նավթային ընկերության աշխատողների բանվոր դասակարգը ավելի հարմար պայմաններում էին, ամեն աշխատավոր ուներ իրեն տրված չորս պատը, կայծը և ջուրը: Թեպետ դեռ բանվոր և գրագետ դասակարգների պայմանների դասակարգային խտրականությունները նույնն էին մնացել, բայց որովհետև Ահվազը Նավթային ընկերության իրավունքներից դուրս և ազատ շուկայի միջավայր էր, քաղաքը կառավարության տիրապետության տակ էր, այսպես մի նոր ազատության շունչ էր տիրում Նավթային ընկերության գործողների ընտանիքներում: Արդեն կամաց-կամաց ամեն բանվոր ընտանիք կարողացավ գոնե մի հովափչիկ¹ առնի և իրեն հովացնի կամ սառնարան գնի և իր խմելու ջրի և իր կերակրեղենը սառը պահի մինչև մյուս օրը այնպես, որ արդեն մի չափով բանվորականը գերությունից դուրս էր գալիս մի ազատ շունչ քաշելու: Բայց և այնպես անգործություն էր տիրում և երիտասարդությունը անգործ էր: Ահվազ քաղաքում էլ հենց Մասջեդ Մուլեյմանի պես, ով ծանոթություն ուներ հաջողությունն ավելի էր, օրինակի համար՝ մեծ քույրս կուսակցական շարքերին արձանագրվեց մինչև մի կես օր ուսուցչությամբ ընդունվեց Ահվազի հայկական

¹ -Հովհար:

դպրոցում: Անձամբ պարզորեն վկա են իմ պարագայում, որ Ահվազ քաղաքում ինչքան-ինչքան փոքր և մեծ ընկերություններ դիմեցի առանց արդյունքի, միայն ծանոթ ու միջնորդ չունենալու պատճառով, գոնե այդքան դրամ էլ չկար, որ մի փոքր կաշառքի մասին մտածեինք, որովհետև միայն մեզ այդ խորհուրդն էր տրվում: Հույսներս կապում էինք Աստվածային հրաշքների:

Հակառակ Աբադան քաղաքին որ շատ խոնավ էր և անապատի փոշի չէր տեսնում, Ահվազը անապատի մեջ էր կառուցված, Քարուն գետի արևելյան ափում մոտ հարյուր քսան կիլոմետր Պարսից Ծոցի հյուսիսում էր: Ահվազ քաղաքը՝ շուրջեշուրջ քանի աչքդ տեսներ անապատ էր, տաք խոնավություն և հաճախ երբ Արաբստանի փոշիները փչում էին արևմուտքից, էլ ոչ տուն էր երևում ոչ մարդ, քաղաքի կյանքը դանդաղանում և որոշ օրեր էլ հասնում գրոյի մինչև ժամեր անցներ, փոշին դադարեր և մարդկանց աչքը մի բան տեսներ: Դրսում, ամեն մարդ առաջին հերթին իրեն ջրի էր հասցնում փոշին մաքրելու: Տնեցիներն էլ փոշին դադարելուց մի կողմից ջրմուղն էին պահում դուռ ու պատուհան, պատերն ու բակն էին լվանում, մյուս կողմից ավել ու փոշաթափ շորերը վերցնելով սենյակների ներսն էին մաքրում և դուռ-պատուհանի ապրանքների փոշին բռնում մինչև հով ու գով գիշերների գալուստը: Ամենից հետաքրքիրը օր ու գիշերվա տարբերությունն էր, այնպես որ ինչ էլ ցերեկը վատ, շոգ, խոնավ և փոշոտ լիներ, կարծես իրիկնապահվան հրաշքի պես, հով ու գով քամի էր բարձրանում և ամեն օրվա նեղությունը բոլորովին մոռացվում էր:

Ահվազ քաղաքում հենց այս հով ու գով գիշերներին գրեթե բոլոր Նավթային ընկերության մեկ հարկանի տներում բնակվողները իրենց չորս պատի մեջտեղը անպայման մահճակալների վրա քնելու տեղ էին գցում, որովհետև գետինը անապատային լինելով վտանգավոր էր, բայց ոչ-նավթային հատկապես հայ ընտանիքները իրենց երկրորդ-երրորդ հարկի հարթ կտուրների վրա և պարզ ու լեցուն աստղերի տակ

Էին քնույն: Հանախ էլ որոշ հայ կին դրացիներ, որ կտուրները կպած էր իրար հայկական գյուղերի սովորություններով մինչ ուշ գիշեր փսփսայով զրույցում էին:

Հենց այսպես, աստղերով լի, մի գիշեր պարապությունից փրկվելու ճար ու ճամփա փնտրելու, աղոթքներ մրմնջալով մտքերով թռա երկինք կույր ու նվազ հավատացյալ ջահելի պես Աստծո հրաշքի նշանների էի ման գալիս մտքով խոսում «Բա ի՞նչ անենք տեր Աստված: Ո՞ր մի դուռը ծեծենք, մի ճամփա ցույց տուր»։ Երկար ու բարակ մտածեցինք, հավաքեցինք ու թափեցինք և վերջն էլ չիմացանք, որ արթուն թե քնած, հիրավի թե երագի մեջ, այդ պարզ ու պլպլան աստղերից, երեք աստղ բաժանվեցին, իրար հետևից շարք կապեցին, շարժվեցին, վառվեցին, երկինքը լուսավորեցրին և հորիզոններում հանգան ու կորան: Թեպետ ինքնախաբություն, բայց հիշելու է այն պահը որ երբ անդրադարձա՝ շատ քրտնած էի: Քրտինքս չորացնելիս մտածեցի արդյոք այդ վառվող-հանգչող աստղերը որևէ կապ ունենին իմ հոգեկան վիճակի հետ թե հույսերով էի լցվում: Հիշեցի որ Նավթային ընկերության նավահանգիստի օֆիցերի վեցամյա ուսման դիմել էի, որը քննություն անցնելու պարագային Նավթային ընկերությունը հովանավորություն կտար անվճար սովորելու և վերդառնալու նույն Նավթային ընկերությանը ծառայել ընկերության որևէ նավահանգստում. արդեն դիմել էի երբ Մասջեդ Սուլեյման էինք և օրենքով պիտի ինձ գրավոր քննության կանչեին: Մտքումս ասացի «Էդ մեկ աստղե, մյուս Աստղը՝ կիսատ-պռատ անգլերեն ձեռագրով գործի խնդրագիր գրել, տպագրիչ վարձել կամ չնչին դրամով տպագրել և անձամբ հանձնել Ահվազ քաղաքում Ամերիկյան “Sedco drilling”-ի կառավարչին, բայց նախ ճարել ճիշտ կառավարչի անունը: Դիմումի պատճենը դրկել էլլի մի օտար Ամերիկացիների ընկերության, որ Ահվազի և Թեհրանի ճանապարհի մեջտեղում «Անդիմեշկ» անունով գյուղաքաղաքի մոտ, Դեզ անունով մի բլուրտով վայր, որտեղ Ամերիկացիները Պարսկական կառավարության հետ միասին տարիներ աշխատում էին Հիդրոէլեկտրակայան ծրագրի շուրջ Դեզի ջրամբարը կառուցելու, որով

հսկայական չափով կայծ էր տալու Հարավային Խուզատան նահանգում, բայց էլի պիտի ճարել ճիշտ կառավարչի անունը: Մյուս աստղի ճամփեն թվաց թե պիտի մի հնարագետ ձևերով դիմում ներկայացնել հայկական կամ պարսկական ուսուցչական կազմ մտնելու, բայց, ո՛ւմ միջնորդությամբ: Հիմա էլ պարզ չէ թե այդքան քրտինք սրբելը երագում էր թե այդքան հիշվում է, որ ծանոթ Արաբ հումսեր ծախողը, որ ամեն առավոտ գոմեշի կաթի հումսեր էր կանչում, արդեն շրփշրփոցը սկսել էր, արշալույսը հով ու գով էր և մերոնք ամենքն դեռ բոլորը ծածկոցներով քնած էին և ճակատս թաց էր:

Արդեն առաջին ճամփան անցել էի, գրավոր քննությունը տվել և սպասում էի կանչվելի բանավոր քննության և այդ ճամփան ի՛նչ մուր էր երևում բայց վերջին տեսարանից հույս գտնելով սկսեցի Ամերիկայի Չայն «Voice of America»-ի ռադիոյի հաղորդումներից լսելով անգլերեն սովորել, որովհետև անգլերեն դասի գնալը, այդ ժամանակ, մեզ համար շատ թանկ հաճույք էր:

Պարտավորված, իմ կոտրտված անգլերենով անապատի մեջ գտնվող Ամերիկյան “Sedco Drilling” նավթի հորերի ընկերության գործի դիմում գրեցի: Այդ Նաֆթային հորերի ընկերությունը 10 կիլոմետր Քաղաքից դուրս էր: Ժամանակի անհարմարության բերումով, այն օրերին Պարսկաստանում դեռ նոր-գարգացող երկրների շարքում էինք, ուրեմն փոքր բեռնատարի հետևը օտար հաճախորդների հետ, Ահվազ քաղաքի Արևելք տանող դեպի օտար գյուղաքաղաքներ Աղաջարի և Օմիդիե ճանապարհով «20 րիպ» վճարեցի միչև Ամերիկյան “Sedco Drilling” Նավթի հորերի ձեռնարկի խաչմերուկ, այնտեղից իջնելով անապատի դեղին ու կարմիր հողոտ ճանապարհով չգիտեմ քանի կիլոմետր քայլեցի դեպի ընկերության տեղը: Այդ ժամանակ Ամերիկյան “Sedco Drilling” ընկերությունը անապատի մեջտեղը շարժողական տասնյակ անապատային գրասենյակ ունեին, որտեղ Ամերիկացիների կառավարիչների ղեկավարության կենտրոնական գրասենյակներ էին, Նավթի հորավորման գործիքների տրանսպորտի և նորոգումների հարմարության համար: Այս կենտրոնը հսկա երկաթյա ցանկապատե-

րով, կարծես առասպելական բերդի էր նաման առավել հսկա թվով պահակներով և երկու զինվորներով: Դարպասին հասնելով դռնապանին բարև Աստծո բարի ասելով՝ նրան համոզեցի (թաքուն իրեն մի տուփ «Winston» սիգարետ տվեցի) որ իմ չարչարանքով տպած նամակը իմ կիսատ-պռատ անգլերենով հանձնի պարոն «Cox»-ին և մինչև աշխատողների տուն գնալու ժամանակ անապատում դարպասի հետևում սպասեմ որևէ պատասխան ստանալու: Աստված գիտի թե ինչքան երկար սպասեցի... արդեն տուն գնալու ժամանակ էր, պարոն «Cox»-ը իր կարմիր «Pick-up» մեքենայով դարպասը բացվելով կանգնեց և դռնապանի հետ մի բան խոսեց և երբ դռնապանը ինձ ցույց տվեց մեքենան քշելով դեպի առաջ՝ հարցրեց «Are you Mr. Gharakhanian?» և ես դողդողալով և շշմելով չեմ հիշում ինչ և ինչպես ասեցի «yeh...yeh..sssir» և պարոն «Cox»-ը չգիտեմ ինչու և գուցե իմ կմկմալուց ժպտաց և անգլերենով ասավ «...see me again»... և ինչպես նժույգի հեծյալ, ֆոռալով թռավ և հեռացավ և ես որ լրիվ մարմնով դողում էի և չգիտեմ շոգից թե շշմելուց, չորացած մնացի:

Պարսիկ դռնապանը դարպասը գոցելիս ինձ պարսկերենով հարցրեց՝ «աղա ֆահմիդի՞ չի գոֆտ. գոֆտ քե շիշ մահ է դիգե բիա համինչա ման է բերինե: Այսինքն *պարսկերենով* ասավ որ 6 ամսից հետո նորից արի այստեղ ինձ տես: Այդ օրերին որևէ ջահել մարդու աշխատանքի խոստում ստանալը չոր անապատի մեջտեղը մի Աստծո օրհնած անձրևի էր նմանում, որ գալիս էր անապատի հոգին թարմացնելու: Ափսո՛ս, որ մարդը անհամբեր է և երկար սպասելը անկարող՝ մարդու հոգին կրծում՝ մաշում է: Երկու-երեք ամիս սպասելուց աշխատելու ցանկությունը ճնշում էր առաջացնում և նոր դուռ պիտի թակել, արդյոք որքան պիտի տևեր այդ սպասելը:

Հիշեցի Պրն. Մինասյանի խոսքը, որ ամիսներ առաջ ինձ ասել էր, “*Չինվորությունը վերջացրած, Իմ մոտ կգաս*”. Էլ մտածումներս չհարմհայցու ասածով, ՓԱՐԱՏՎԵՑ: Արդեն գիտեի ինչ էր իմ մյուս քայլը: Ուրեմն պիտի զբաղված մնամ, մինչև ինձ Նավթային ընկերությունը Մասջեդ Մուլեյմանի կենտրոնից կանչեր:

Առանց մտածելու կամ հեռախոսի, կարծես քեֆով մարդու նման «թող ինչ որ կուզի լինի». պարսկերեն ասում են «հար չե բաղ ա բաղ», դռան առաջը պարսիկ պահակը ինձ հարցրեց ով եմ և ինչ գործ ունեմ... ասեցի «աղայե Մինասյան գովթան, վաղթի սարքազիմ թամամ շող, շախսան բեհ խողե իշան մորաջեե քոնամ, վա պաան ումադամ»¹: Ասավ «Աղայե Մինասյան համ ակնուն Լանդան հասթան վա սե եա չահար հաֆթեյե դիգե միան»²: Ես այս պահակին ինչ ասեի, եթե Պրն. Մինասյանը 4 ամիս Անգլիա էր լինելու:

Էլ չեմ հիշում ինչ եղավ, ինքս ինձ մտածեցի... «Հիմա ինչ... էլի դեռ շաբաթներ սպասեմ... էլ չեմ սպասել... գործ եմ ուզում գործ... հիմա ի՞նչ պիտի արած»: Հակառակ իմ նախկին ծրագրի, ընկերներ Սաքոին և Համոին էլ չհանդեպեցի, մորաքրոջս Նազիկենց էլ չգնացի, այնքան եմ հիշում որ այդ օրը տխուր-տրտում Քարուն գետի ափը գնացի... գետի հոսող ջրին երկար ու բարակ նայեցի, տխրեցի, աղոթեցի, հուզվեցի, գայրացա, ծրագրեցի մի անգամ ևս Սադ-է-Դեզ ի մեծ ծրագրի քաղաք՝ Ամդիմեշկ մեկնեմ... և շատ ուշ տուն վերադարձա:

Քանի օր այդ տխուր դեպքից հետո, մորաքույր Արյուսակի ամուսինը Արմենակ փեսան, իր Նավթային ընկերության գործի հեռախոսով (վճարովի կամ անձնական հեռախոս գոյություն չունեի) հեռախոսեց հայրիկիս և ասեց, ինձ մի քանի օրով ուղարկեմ իրենց մոտ Օմիդիեհ-Ադաջարի:

Թեպետ մորաքույր Արյուսակ և փեսա Արմենակը իմ հասակակից երեխա չունեին բայց ուզել էին, որ գոնե մի փոփոխություն լիներ և գուցե մի գործի ծանոթի միջոցով ինձ կարող էր ծանոթացնել մի ամերիկացու հետ:

¹ - Պարոն Մինասյանը ասել է երբ զինվորությունս վերջացնեմ, իր մոտ գամ, հիմա եկել եմ:

² - Պարոն Մինասյանը Լոնդոն է գնացել և 3-4 ամսից կվերադառնա:

Երիտասարդ, նոր զինվորությունը վերջացրած, էլ չդիմանալու հոգեբանության ունեի, բայց կարծես ելք չունեի: Մինչև Պրն. Հրանդ Մինասյանի վերադարձը Լոնդոնից, որոշեցի գնամ Օմիդիեհ-Աղաջարի: Մորաքույրս և փեսա Արմենակը ունեին երեք զավակ՝ մեծից փոքր Արա 6, Արիս 4, Արամիկ մոտ մեկ-կամ երկու տարեկան էին, որոնք խելոք հայ ընտանիքի նման ապրում էին խաղաղ ու սիրով: Արան անչափ ֆուտբոլ էր սիրում և դուրսի պատերի մեջ ընդմիջտ խաղում էր (Այժմ Ամերիկայում), Արամիկը գեղարվեստ էր սիրում և հայտնի երգչուհի ԳՈՒԳՈՒՇԻ երգերն շատ գեղեցիկ էր երգում և Թեհրանի ժամանակվա ֆուտբոլի մեկնաբանին լավ էր կրկնօրինակում (Այժմ Կանադայում) և Արիսը հաջող վաճառական է (Այժմ Ամերիկայում):

Գնացի Օմիդիեհ-Աղաջարի մորաքույր Այուսյակ և փեսա Արմենակ Մուսախանյանների տուն: Այնտեղ էին դեռ փեսա Արմենակի ծնողներն ու քույրիկները (Այժմ երկուսը Ամերիկա, բայց Խսաթունիկ քույրիկը իր ամուսնու և զավակների հետ Երևանում են, եղբայրներից Աշոտը ներկա Ամերիկայում և Նիկոլը այժմ տիկնոջ և զավակների հետ Թեհրանում է. Նիկոլ Մուսախանեանը տարիներ անց մեր հարսանիքի քավորը դարձավ):

Աղաջարին շատ փոքրաթիվ հայեր կային, և այդ փոքրիկ մասում, բնակված էր տեղի պարսիկներով, միայն նավթի հորեր էին այդ շրջանում, որոնք Օմիդիեհից մի քանի կիլիմետր դեպի Արևելք էին գտնվում:

Ուրախությունից հետո, մի օր էլ փեսա Արմենակը առաջարկեց միասին իր գործի տեղ գնանք Նավթային ընկերություն: Ինքը քանի օր առաջ իմ մասին խոսել էր մի օտար Չարմահալցու հետ և այդ անձը սպասում էր ճիշտ ժամանակվա: Ուրեմն օրը իմանալով մեր փեսա Արմենակին ասել էր մոտավորապես այն օրը, որ պիտի մի Ամերիկացու հանդիպեին իրենց գործատեղում:

Մի քանի թուրքից իրենց գործատեղն էինք: Մի աթոռի նստեցի և սպասեցի: Շատ չանցավ, մյուս դուռից ներս եկավ Չարմահալցի՝ Պրն.

Գալուստ Նավասարդյանը իր հաստ ակնոցները աչքերին... իրեն ծանոթեցրեց «Գալուստ», և ասաց՝ «հենց այստեղ մնա մինչև ձերքով անեն» և գնաց: Քիչ անց Պրն. Jennings-ը «Hulliburton inc.» ընկերության կողմից երևաց և Նավթային ընկերության գործի շրջանը ավելի աշխուժացավ: Շատերը շտապեցին պահեստ-մթերանոց, 6 կտոր խողովակի կողմը, որ Պրն. Jennings-ն էր կանգնած: Պրն. Գալուստ Նավասարդեանը ինձ ձեռքով արավ և փեսա Արմենակը, որ ինքն էր սարքավորումների պատասխանատուն, ինձ մենակ չթողնելով հետս քայլեց մթերանոց: «Հելլո» ասելուց հետո Պրն. Գալուստ Նավասարդյանը ինձ ծանոթացրեց՝ ամերիկացուն ասելով՝ “Mr Gharakani is the gentleman, I was talking about”, Yes, how are you doing Mr. Gharakani?... Galust told me a lot about you, come and see me in Aghajari... see you then... thank you...”: Մեխվաձ մնացի:

Գործողների կողմից բեռը բեռնվեց մի բեռնատար մեքենայի մեջ, մի երկու կտոր թղթեր փեսա Արմենակի կողմից հրամցվեց Պրն. Jennings-ին, որը նա ստորագրոց և Պրն. Jennings-ը իր կարմիր “pick-up”-ը նստեց, մի քանի անգամ էլ խնդաց, նայեց և հեռացավ: Պրն. Գալուստ Նավասարդյանը ուրախությամբ բացագանչեց «դեհ մենք մեր գործը արինք, շնորհավոր լինի»:

Ուրախացանք, ամենս իրար համբուրեցինք և այդ վարկյանից ամեն բան դեպի ուրախություն էր գնում: Փեսա Արմենակը Գործը հանձնեց իր պարսիկ օգնականին և միասին գնացինք տուն, մորաքույր Արյուսակին ուրախ լուրը տալու: Ամեն տեղ ուրախություն էր, կարծես ամեն բան վերջացած լիներ և արդեն գործի էի հասել, ուղիղ կապվեցինք հայրիկիս գործատեղի հեռախոսահամարին (անձնական հեռախոս չկար): Չգիտեմ ինչպես ամեն մարդ խոսեց և ուրախ հանդիպումի լուրը տվեցինք և ուրախացանք, տունը և դուրսը ուրախություն էր տիրում, չգիտեմ ինչպես տուն հասանք և ուրախացանք:

Մյուս օրը Օմիդիեի կենտրոնից տարբեր քաղաքներ մեքենա էր գնում: Ընտրեցի և գնացի Աղաջարի (4-5 կիլոմետր) և Պրն. Jennings-ին հանդիպեցի և նա ուրախ դեմքով ընդունեց ինձ, գործատեղի երեք Ամերիկացու ծանոթացրեց իր և սպասարար dispatcher-դիսպաչեր: Ամերիկացիներն էին ` William Show (chief of operation); Jack (head mechanic) և Armstron (accountant): Պրն. Jennings-ը շենքի դրսի մի սենյակներից Mr. Fereydon պարսիկ մեծիս ծանօթացրեց և ասեց «ընկերության ներսի սենյակում կաշխատես ամերիկացիների հետ բայց մեծ դ պարսիկ Mr. Fereydon-ն է լինելու. Այս օրվանից վարձված ես, իր սեղանը, ցույց տվեց, բարի գալուստ ասելով շնորհավորեց և ասաց այս ժողովից վարձված ես և որևէ հարցով ինձ կմոտենաս, բայ-բայ» ու վերջ: Գործը վերջ էր, արդեն վարձված էի (որպես dispatcher), թեպետ մեկ անգամ կյանքի մեջ (dispatch-դիսպաչ) չէի արել: Բայց գիտեին որ դիսպաչեր են վարձել, որ նոր էի և սովորելու շատ բան ունեի: Գործը այնքան հեշտ էր, որ պիտի իմանայի միայն սպրանքի անունը, որ թղթի վրա գրեի և որտեղից որտեղ է գնում կամ գալիս: Ծնորհակալություն հայտնելով դուրս եկա: Հեռախոս գոյություն չունեի, որ մորաքրոջս կամ փեսա Արմենակին ասեի, որ ինչ եղավ, ուրեմն գնացի մյուս քայլի: Ծենքին կպած էր մեքենայի սարքավորումների կենտրոն, որտեղ աշխատում էին հայրիկիս հորեղբոր տղան Հայրիկ Ղարախանյանը (Խանլար հորեղբոր որդին, այժմ տիկնոջ հետ բնակվում է Ամերիկա, իր տղան Գերմանիա, բայց Աղջիկը Ամերիկա):

Գնացի Հայրիկի մոտ և թեպետ զբաղված էր, ուրախացավ և ասաց իրեն սպասեմ կողքի սենյակում: Հայրիկն էլ եկավ, ուրախ վարձվելու լուրը լսեց և գրկախառնվելուց հետո, ասավ այն սենյակում, որ իրենք վարձել էին, Սեդրակ Հայրապետյանի հետ (Այժմ Թեհրան, Հայրիկիս հորաքրոջ Մարյամի թոռ), մի մահճակալ կավեյացնեն ինձ համար և չմտահոգվեմ բնակարանի հարցով: Վերադարձա և սեղանիս նստեցի, թվաց թե հարյուր տարի այդտեղ գործել էի: Իմ մեծն պարսիկ Պրն. Ֆրեյդունը եկավ և ինձ մի քանի տուփ Ֆորմ (dispatch) բերեց տվեց, մի

քանի բուստը ինձ բացատրեց որ ինչ էի անելու և ասաց որ գիտեմ որտեղ է իր գրասենյակը ու գնաց:

Առաջին գործս մի ամերիացու հետ էր, որ հեշտորեն մի “Armacher-արմիչիեր” էր ուղարկում “Sedco”-Սեդկոյի, մի օտար մեքենայի, որի անունը տվեց և ես գրեցի, թուղթը տվեցի շոֆերներից մեկին, որ դուրսը սպասում էր, մի պատճեն էլ գործի համար պահեցի և ուղարկեցի: Առաջին քայլը ուրախությամբ կատարել էի: Միչև ճաշ մնացի, Հայրիկը իմ համար ուտելիք (sandwich) բերեց, տունը ցույց տվեց և ասեց «ախր, տան համար էլ մի բան կտանք, երբեք չմտահոգվես, 30 թուման»: և այսպես մնացի Աղաջարի մի երեք ամիս: Այդ օրը պիտի դասելի իմ մորաքույր Արյուսակի և փեսա Արմենակի, և մերոնց համար, աշխարհի ամենագեղեցիկ օրերից մեկը: Հենց այդ վարկյանին իմ սեղանից հեռախոսով զանգահարեցի կենտրոնին, օպերատորի միջոցով ուզեցի միանալ Օմիդիե և Փեսա Արմենակին ասացի, և հայրիկիս Ահվազի գործի տեղ հեռախոսեցի և ուրախ լուրը տվեցի, որ արդեն ԳՈՐԾԻ էի անցել: Ամենայն փառք Փեսա Արմենակենց և Պրն. Գալուստ Նավասարդյանին (որին առիթ էլ չեղավ անձամբ շնորհակալություն հայտնել), բայց փեսա Արմենակին խնդրեցի իմ կողմից շնորհակալ լինել ինձ ծանոթացնելու Ամերեկացի Jennings-ին: Արդեն ԳՈՐԾԻ ԷԻ ԱՆՑԵԼ:

Ամենամեծ երազի իրականացում



..Եվ Քանի ամիս հետո իրականացավ կյանքիս ամենամեծ երազը, Մասջեդ Սուլեյմանի Նավթային ընկերությունից լուր ստացա, որ քննություններիս արդյունքը հաջող էր եղել և ընդունվել էի Plymouth-ի համալսարան: Ուրախությանս էլ սահման չկար: Աղաջարիում գործիցս հրաժարվեցի և վերադարձա Ահվազ մեր տուն, գործերս դասավորելուց հետո մայրիկիս հետ գնացի Աբադան մորս հորաքրոջ տղայի՝ Արամայիսի և Մարտենց տուն, որտեղ երկու օր մնալուց հետո Արամայիսի մեքենայով գնացինք օդանավակայան որտեղից մեկնեցի Անգլիա:

ՎԵՐՁ

Tom Gharakhanian Siraki

The Journey of Our Lives

Personal Memoir

Edited By

Dr. Edic Baghdasarian

Director ARC



ISBN: 978-1-927860-37-3

Armenian Research Center (ARC)

Louys Publications

Toronto, Canada

2016